



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Ը ՆՍԻՒ 1906 ՀՈԿՏ.-ՆՈՅ.-ԴԵԿՏ. ԹԻՒ 10-11-12

Ի Ա Ր Ի Չ

« Սօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են Նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եւրոպիայում մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիկերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չծարգմանէր, չլուսատրէր ինչ որ միւսը կ'ընէ, այդ չհասկցուած մտքն բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

Ի Ա Յ Ո Ւ Ա Մ Է

Ա Ն Ա Հ Ի Տ Ի

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼ

Տ Պ Ա Ր Ա Ն

ՏԻԳՐԱՆ

ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Բ Ա Ր Ի Զ

18, Rue des Gobelins, 18, Paris, (13e)



Ամէն տեսակ տպագրութիւն, մախուր, խնամեալ եւ ամանագին:

Կ Վ Ա Հ Ա Ն

Կ Ա Չ Մ Ա Տ Ո Ւ Ն

14, rue Condorcet, 14

Ամէն տեսակ կազմեր, սովորական եւ տեղ մասշնի գնեցով

Ն. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Վկայեալ Փրօֆ. Բլեմանի Institut Scientifique de Coupezն պատրաստ է ձեւագիտութեան դասեր տալ հայերէն ու ռուսերէն լեզուով, թէ՛ կնոջ եւ թէ՛ այր մարդու զգեստներու համար, ինչպէս եւ աշակերտներ պատրաստել Institut de Coupezի մուտքի քննութեան: Պայմաններուն համար, դիմել իրեն. M. N. AROUTIUNIAN. 22, Rue Clauzel

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ


Ազգային, Գրական, Գեղարուեստական

Ը. ՏԱՐԻ 1906

ՀՈԿՏ.-ՆՈՅ.-ԴԵԿՏ.

Թիւ 10-11-12

Հ ա յ ա տ ե ա գ ն եր ր



Անհիտի մէջ մէկէ աւելի անգամներ ակնարկած եմ այն շատ սարածուած հակակ-

րութեանը զոր օտարները, ու մանաւանդ Եւրոպացիք, կը տածեն Հայոց նկատմամբ: Ամենակարեւոր հարց մըն է այդ, որուն վրայ պէտք եղածին չափ ուշադրութիւն չենք դարձուցած: Թուրքին դանակէն աւելի սուր, աւելի ուժեղ դէնք մըն է մեզի դէմ ուղղուած, — ու մեր հոգւոյն համար աւելի դանձ քան բոլոր արհաւիրքը թուրք լուծին: Գիշ անպամ այնքան սխրութիւն ու զայրոյթ զգացած եմ որքան երբ կարդացի Քլոս Փարէրի նորավէպը որուն մէջ հայ ցեղը ներկայացուած էր իբր ամենէն զգուշի տարրը մարդկութեան. եւ ատիկա՛ կը հրատարակուէր Մեքսիկոյ Տրանսին մէջ, որուն հիմնադիրներէն մին է հայկական դատին բազմամտայ պաշտպան Փիէր Բիլեար, եւ որ իր առաջին տարիներէն իսկ՝ իր աշխատակիցներուն մէջ ունեցած է Հայ մը՝ այս տողերը գրողը: Զարմանքս եւ ցաւս փութացի

յայտնել թե՛ թիւն անօրէնին, որ խոստովանեցաւ թէ այդ յօդուածն իր ձեռքէն չէր անցած եւ ինքն իսկ առաջարկեց որ նամակով մը պատասխանեմ Մեքսիկոյն մէջ: Ըսի ինչ որ հարկաւոր էր Պ. Փարէրին անարգութիւնը եւ անազնութիւնը ապացուցանելու համար: Միեւնոյն բանը ըլլած էի արդէն՝ 6—7 ամիս առաջ՝ Քուրիէ Էօրոփեհէնին մէջ, պատասխանելով ժուրնաչ թերթին մէջ Հանրի Սփոնի նոյնքան զուգիր ուրիշ մէկ յօդուածին, որ Թիֆլիսի Հայութիւնը կ'անուանարկէր, ինչպէս Փարէր՝ Պոլսոյ Հայութիւնը:

Բայց այդ պարունակներուն բերնին չափը տալէ յետոյ, կը կարծեմ թէ անհրաժեշտ է որ գէթ անգամ մը մենք մեզի լրջօրէն քննենք սա հարցը՝ « Ինչո՞ւ կ'ատեն մեզ օտարները. ի՞նչ է պատճառը »: Որովհետեւ, իսկոյն պէտք է ըսեմ որ ո՛չ Սփոն, ո՛չ Փարէր Հայոց դատին վնասելու համար վարձուած գրողներ չեն: Սփոն ծանուցած էր թէ յօդուածներու ամբողջ շարք մը պիտի հրատարակէր ժուրնաչին մէջ, բայց իր ստացած պատասխանէն յետոյ՝ այլ եւս չըհրատարակեց մնացեալ յօդուածները, մինչ վարձկան մը աներեսաբար պիտի շարունակէր. գալով Պ. Փարէրին, անվիճելի տաղանդով երիտասարդ գրագէտ մըն է. իր մէկ վէպը պատուեցաւ Կոնքուրեան Ակադեմիայէն, որուն անդամներն են Միրզոյի, Լէոն Տոտէի, Տեքալի, Ռոնիի պէս գրագէտներ: Երկուքն ալ անկեղծ են եղած իրենց յայտնած դատումին մէջ. եր-

կուքն ալ գացած են քանի մը օր անցընել , մին թիֆլիս , միւսը Պոլիս , հանդիպած են արգարեւ հակակրելի հայ տիպարներու , լսած են իրենց այնտեղի հայրենակիցներէն աննպաստ կարծիքներ Հայոց մասին , եւ շտապած են աններելի թեթեւութեամբ՝ վճռական դատաստան մը յայտնել զարաւոր ազգի մը նկարագրին վերայ : Բայց ինչո՞ւ Արեւելք հաստատուած Եւրոպացիները — որոնք աւելի երկար կենակցութիւն մը ունեցած են Հայոց մօտ — աննպաստ կարծիք ունին մեր մասին . ինչո՞ւ Փարէրի պէս ուղեւորի մը աչքին չի զարներ ինչ որ հայ կեանքը ունի յաւ եւ համակրելի . ինչո՞ւ արագ եւ հարեւանցի դիտողին՝ մեր ազգը կ'երևայ իրբեւ վաշխառուներու հաւաքածու մը , զրամի սէրէն ուրիշ ո եւ է հրայրք , ո եւ է իտէալ չունեցող :

Ասիկա շատոնց ի վեր կազմուած , տարածուած , ընդունուած գաղափար մըն է , ա՛լ անհերքելի եւ ակնյայտնի ճշմարտութեան մը կարգը անցած , տեսակ մը քլիշէ եղած : Արեւելք գացող ուղեւորները մեծ մասամբ իրենց ճամբու սուպերութեանց մէջ այդ քլիշէն կրկնած են : Նոյն իսկ բարձր գրականութեան մէջ մտած է այդ կարծիքը : ԺԸ. դարու ամենէն մեծ գրագետներէն մէկուն՝ Շամֆորի Իզմիրի վաճառականը , զոր կարգացի այս վերջերս , բեմի վրայ կը դնէ ազնիւ , վեհանձն , երախտագէտ , առատաձեռն , ասպետական թուրքի տիպարի մը մօտ՝ ընչաքաղց , անսիրտ ու նողկալի հայ գերեզմանափ տիպար մը . . . : Եւ ա՛ն այն միակ տողը ուր կէօթէ « Հայ » բառը յիշած է .

« Թողէք լամ , գիշերուան խաւարովը պարուրուած , անհուն անապատին մէջ . ուղտերը կը հանգչին , ինչպէս եւ առաջնորդները . Հայը արթուն է եւ կը հաշուէ : Ես սակայն , անոր մօտ , կը հաշուեմ մղոնները որ զիս Սիւլէյքայէն կը բաժնեւ . . . : »

(Արեւմտեան Արեւելեան Դիւան) .

Կէօթէի երեւակայած պարսիկ հերոսը կ'երազէ , կը սիրէ , — Հայը կը հաշուէ , — աւելի ճիշդը՝ կը համրէ (compte), իր փարային հաշիւը կ'ընէ . . . :

Այս տիեզերական հայատեցութեան ամենէն ընտրոշ ու սարսռեցուցիչ խտացումը կը գտնենք

Լորա Սուզպէրիի սա խօսքին մէջ (զոր Լորա Ապերտին յիշեց՝ հերքելով՝ 1904ին Լոնտոն գումարուած հայասիրական միթինկին) . « Առէք Եւրոպայի ո եւ է կողմը՝ կէտ մը , անկից գծեր քաշեցէք ամէն կողմ , այդ գծերուն անցած ո եւ է սեղը՝ մէ՛կ մարդ մը պիտի չգտնէք որ Հայերը սիրէ . . . » :

Ինչո՞ւ այս կարծիքը , եւ ի՞նչպէս կազմուած է ան : Արդեօք ճի՞շդ է եւ մինք չենք զգար . կամ գէթ ճշմարտութեան բաժին մը կա՞յ ատոր մէջ :

Ես համոզուած եմ որ այդ կարծիքը՝ իբր հայ ցեղին հոգւոյն մշտական ու հիմնական որակում՝ անճիշդ է : Բայց ճշմարտութեան բաժին , այո՛ , կա՞յ այդ կազմուած կարծիքին մէջ . բաժին մը միայն , եւ այն ալ խեղաթիւրուած :

Անուրանալի է որ Հայ ցեղին էական ճիւղերէն մին է — եւ եղած է սկիզբէն ի վեր — վաճառականական ընդունակութիւնը . իր պատմութեան առաջին օրերէն սկսեալ , Հայը ամենակարեւոր դեր կատարած է տիեզերական սոսեւտուրին մէջ . ինքն է եղած գլխաւոր միջնորդներէն մին Արեւելքի եւ Արեւմուտքի արսաղրութեանց փոխանակութեանս Բայց ապուշութիւն պիտի ըլլար ասիկա իրեն մեղադրել իբր յանցանք մը : Հայ « սարաֆ » ին կամ վաշխառուին զգուելի գոյութիւնը չեմ ուրանար , բայց այդ տիպարները չնչին տոկոս մը կազմած են միշտ Հայութեան մէջ , միջավայրի արդիւնք աւելի քան ցեղին հոգւոյն . Հայը « վաճառական » է աւելի քան « վաշխառու » . արդ , վաճառականութիւնը քաղաքակրթութեան ուժերէն մէկն է , մարդկային բարօրութեան նպաստող գործունէութիւն մը . վաճառականն է որ երկրիս այլեւայլ մասերուն բերքերն , իրենց բնական վիճակին մէջ կամ մարդկային արուեստին շնորհիւ բարեփոխուած , աւելի օգտակար ձեւ մը ստացած , կը դնէ տրամադրութեանը մարդկութեան այն հատուածներուն որ զուրկ են այդ նիւթերէն . կեանքի ճոխացման , դիւրացման գործիք մըն է , եւ ատկից զատ՝ անցեալին մէջ մեծ միջոց մը եղած է մարդկային հեռաւոր հատակտորներու միջեւ յարաբերութիւն հաստատող , — որովհետեւ ապրանքներուն հետ վաճառականը կը փոխադրէր նաեւ յաճախ իր

երկրին գաղափարները, բարքերը, սովորոյթները, եւ իր երկիրը կը տանէր նոր սեսած աշխարհներուն հոգիէն բան մը : Հելլենները այնքան վաճառական ողգ ելած են որքան արուեստագէտ : Անգլիացիք կը պորձենան նոր ժամանակներու ամենէն վաճառական ազգն ըլլալնուն : Ֆրանսացիք ու Գերմանացիք հե ի հե կը ճգնին Անգլիացուց հաւասարելու վաճառականութեան մէջ : Միջնադարեան ազնուականութեան արհամարհանքը վաճառականութեան համար՝ այսօր անխմաստ է այլ եւս : Որքան ալ զուտ գեղեցկագիտական տեսակէտով խանդավառող հանգամանք ունեցող բան մը չըլլայ, վաճառականութիւնը օգտակար ու յարգելի ճիւղ մըն է մարդկային գործունէութեան, ընկերական կեանքի համար անհրաժեշտ եւ բարերար :

Կան ալ Եւրոպացիք որ Հայոց կը մեղադրեն ոչ թէ վաճառականութիւնը նախասիրելին, այլ զայն խարդախ կերպով ընելին, այսպէս, զոր օրինակ, Փիէր Մորան, իր « Ֆինլանտա եւ Կովկաս » գրքին մէջ կը գրէ .

« . . . Հայերէն անոնք իսկ որոնց կարելի չէ մեղադրել թէ վաշխատութիւն կ'ընեն, գործ ընելու այնպիսի ձեւ մը ունին յաճախ, որ զանոնք կասկածելի կը դարձնէ Ռուսերուն եւ Վրացիներուն : Մանուածապատ է իրենց ձեւը . շիտակ չեն . իրենց հետ գործի մը մասին բանակցողը, միշտ ծուղակի մը մէջ իննալու վախն ունի . գողունի եղանակով մը կ'ընեն բանակցութիւնը, կը սահին, կը սողան, եւ տակէն է որ՝ եթէ կարելի է այսպէս ըսել՝ կը տիրանան բոլոր մեծ ձեռնարկներուն : »

Այս կարծիքն ալ անարդար է . յայտնի է որ Արեւելքի առեւտրականը՝ շատ յաճախ՝ հեռու է պարկեշտութեան մտասիպար մը ըլլալէ . բայց ատիկա արդիւնք է Արեւելքի մէջ տիրող աւազակային բեթիմին . եւ ուղղամտութեան, օրինաւորութեան պակասը կը տեսնուի այնքան Հրէային, Յոյնին, Պարսիկին, Թուրքին որքան Հայուն, ինչպէս եւ Արեւելք հաստատուած Եւրոպացիին քով : Զգենք որ ատոր համարժէքը բնաւ դժուար չէ գտնել Արեւմուտքի մէջ, ոչ այնքան տարածուած (որովհետեւ բարքերը եւ օրէնքները կ'արգելեն), բայց անհունապէս աւելի ահաւոր ձեւերով արտայայտուող : Ամենէն խոշոր եւ եղեռնագործ « տզրուկ » ները՝ Արեւմուտ-

քի մէջ է որ կարելի է գտնել : Միայն թէ Արեւելքի առեւտրականին խարդախութիւնը աւելի աչքի կը զարնէ եւ զզուանք կը պատճառէ, որովհետեւ ճղճիմ, փոքրիկ, վրան-բաց, գրեթէ միամիտ, նահապետական աներեսութեամբ մը կը կատարուի, մինչ Արեւմուտքին իր « մանէօվր » ներուն մէջ կը դնէ նուրբ ու ճարպիկ հաշիւ, օրինական մանուածապատութեանց տակ կը սքողէ զանոնք եւ անոնց կուտայ ընդարձակութեան եւ յանդգնութեան նկարագիր մը որ գծաւորութեան կը փրկէ զանոնք եւ քրտմնելի մեծութիւն մը կ'ընծայէ անոնց : Այս բոլորը նկատի ունենալով հանդերձ, անվիճելի է որ Արեւելքի մէջ՝ յարաբերաբար ամենէն պարկեշտ ու կանոնաւոր վաճառականը՝ նորէն Հայն է : Թուրքիոյ ինչպէս Կովկասի մէջ, Հայք՝ տեղական ցեղերէն՝ առաջինն է իբր վաճառական տարր, եւ անմտութիւն է կարծել թէ միմիայն խարդախութեամբ կարելի լլլայ այդպիսի դիւրբի մը հասնել . ատոր համար անհրաժեշտ են զբաղական յատկութիւններ, հնարամտութիւն, նախաձեռնութեան ոգի, աշխատասիրութիւն, գործի բնազդը, հաշուելու կարողութիւն, կարգաւորութիւն, խնայասիրութիւն : Եգիպտոսի մէջ ուր քառորդ դարէ մը ի վեր Եւրոպական բեթիմ մը հաստատուած է, Հայերը բոլորովին Եւրոպական ձեւով վաճառականութիւն կ'ընեն, եւ յարգուած են իբր լուրջ առեւտրական տարր (լուրս Բրոմէր իր անցեալ տարուան տեղեկագրին մէջ մեծ գովեստով կը յիշատակէր Եգիպտոսի հայ տարրին պատուաւորութիւնն ու աշխատասիրութիւնը) :

Կան՝ վերջապէս՝ հայատեսացիներուն մէջ, այնպիսիներ որ Հայոց կը մեղադրեն՝ դրամական գործերէ ուրիշ ո եւ է բանի անարամադիր եւ անկարող ըլլալին . Հայը իրենց համար « շուկայի մարդ » ն է, եւ ուրիշ ոչինչ : Այդպէս բանաձեւուած՝ մեղադրանքը աւելի լուրջ հանգամանք մը կը ստանայ, եւ այդ ձեւով՝ մեղադրանքը արդար պիտի ըլլար՝ եթէ ճիշդ ըլլար . ազգ մը որ մտաւորական ստեղծագործ գործութեան, բարոյական գեղեցկութեան, անձնութեան, անշահախնդիր իտէալասիրութեան ապացոյցներ չէ տուած եւ միայն դրամ վաստկելով է զբաղած, իրօք արժանի պիտի ըլլար արհամարհանքի :

Բայց, այդ ձևով ալ ճիշդ չէ մեղադրանքը : Որքան ասին որ Հայը ունեցած է քաղաքական անկախութիւն, ի յայտ բերած է քաղաքակիրթ ազգի մը բարձր ու բազմաձև կեանքը, տուած է ապացոյցները իր ուժեղ ձիրքերուն թէ՛ զինուորական ու մտաւարական եւ թէ՛ վաճառականական-արգիւնարեական գործունէութեան մէջ : Տիգրանակերտը, Գուինը, Անին, Սիւրը, յաւիտենական յիշատակութեան արժանի քաղաքներ եղած են՝ ամէն տեսակէտով : Ու եթէ քրիստոնէութենէն առաջ՝ մեր հայերուն մտաւոր կեանքին վրայ որոշ դաշափար չունինք, սաչափը գիտնեք սակայն որ Մեծն Տիգրանի արքունիքին մէջ գեղարուեստը սիրալիր հիւրընկալուած էր եւ Արտաւազդ դահաժառանգը ողբերգութիւններ կը շարագրէր, փոյթ չէ թէ յոյն լեզուով (Եւրոպայի նոր ազգերն ալ՝ իրենց լեզուով գրելէ առաջ՝ լատիներէն գրած են երկայն ատեն) : Անկախութեան կորուստէն ետքն է որ Հայ ցեղին — աւելի ճիշդ քաղաքաբնակ Հայերու — գործունէութեան գլխաւոր սարքը՝ վաճառականութիւնը կ'ըլլայ : Հոտ է « ճշմարտութեան բաժինը » : Անի կործանումէն սկսեալ՝ մեծ Հայաստանի մէջ, Ռուբինեան թագաւորութեան անկումէն յետոյ՝ Կիլիկիոյ մէջ, Հայը կ'ենթարկուի մահմետական լուծին, կը ստրկանայ, եւ իր թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական գոյութիւնը պահպանելու համար իր ուժերը դժբաւորապէս կը նուիրէ գրամ բերող գրագումներու : Զինուորական, քաղաքական սպարէզը փակ է իրեն առջեւ : Ընկճող, խեղդող, նուաստացնող, անբարոյականացնող լուծ մը կը ծանրանայ իր վրայ : Իւրաքանչիւր անհատ գիտէ թէ գլուխն ուսերուն վրայ կը մնայ իր « տէրերուն զթութեան չնորհիւ » եւ թէ անոնց ամենափոքր մէկ քմահաճոյքը կրնայ զայն թռցնել մէկ հարուածով : Տէրերը չափազանց զօրեղ են, եւ ինք՝ դարաւոր պայքարէ մը ուժասպառ, քայքայուած, ապուշցած, ցրուած, տարտղնած, լուծը փշրելու անկարող, եւ այդ անկարողութեան գիտակցութեամբ իր նուաստացման մէջ ա'լ աւելի ընկղմած : Մտաւորական կանոնաւոր, ճոխ ու զարգացած գործունէութիւն մը սպասել այդպիսի պայմաններու մէջ ինկած ժողովրդէ մը՝ հիւանդէ մը ըմբշամարտութիւն սպասելու պիտի նմա-

նէր : Եւ Հայը — քաղաքներու Հայը — կ'ըլլայ « հաստատարիւմ ազգ », այսինքն իր լուծը լզող ստրուկ, եւ « փերեզակ ազգ », « շուկայի ազգ » :

Ահա այդ սխալը շրջանին Արեւելք այցելող Եւրոպացի ճամբորդներուն յայտնած դատաստանն է, որ կը պարունակէ « ճշմարտութեան բաժինը » : Բայց ան իսկ « բաժին » մըն է, եւ ոչ թէ ամբողջ ճշմարտութիւնը : Հայերը մօտէն եւ իր ամբողջ մանրամասնութեանց մէջ քննողի մը համար՝ նոյն իսկ այդ տհաւոր, արկածալի շրջանին՝ Հայութիւնը միշտ կը պահէ, ստուերի մէջ, կայծեր իր հիմնական ազնիւ ու խորիստ ձիրքերէն : Ղարաբաղ, Սասուն, Զէյթուն կը պահպանեն զեղին քաջութեան կենդանի աւանդութիւնը : Բազմաթիւ հայ անհատներ, չհանգուրժելով իրենց հայրենիքի մէջ տիրող անարգ կացութեան, կ'երթան Բիւզանդիոն, Սթէնք, Հոտ, Լեհաստան : քաղաքական կամ մտաւորական աստիճանակարգ անճանա որութիւններ կ'ելլեն իրենց մէջէն : Ու երկրին մէջ մնացող այդ ստրուկ Հայութիւնն ալ, եթէ մօտէն քննենք անոր ներքին կեանքը, կը ներկայացնէ նորէն շատ համակրելի, մերթ նոյն իսկ սքանչելի գրծեր, որոնց արժէքը՝ պէտք է բազմապատկուի արդար եւ ազնիւ դիտողի մը աչքին՝ երբ նկատի առնուին շրջապատող դժոխս ին պայմանները : ստուար զանգուածը, մեծամասնութիւն կազմող գիւղացի Հայութիւնը, նուիրական հողին կզած, իր աւանդական արօրը կը վարէ, եւ հացը կը հայթայթէ իրեն եւ իր բնակակիցներուն : Մնացեալները երաժիշտ են, ճարտարապետ, աշուղ, եւ մանաւանդ արհեստաւոր, եւ իրենց ճարտար ու բեղուն մասը կայ Արեւելքի արուեստագործական ամենանուրբ արտադրութեանց մէջ (թէպէտ եւ ատոնք կը վերագրուին իրենց տէրերուն որ աշխատանքին չեն մասնակցիր) : « արտադրող » տարրն են : Կան նաեւ վաճառականները, որոնք կարաւաններով Հնդկաստանէն ու Չինաստանէն մինչեւ Եւրոպայի խորերը կ'երթեւեկեն եւ կը կատարեն դեր մը օգտակար ամբողջ աշխարհիս : Կան վերջապէս վաշխառուները, սարաֆները, ինչպէս ամէն ազգի մէջ, եւ որոնք ազգին փոքրամասնութիւնն են եւ անոր մենաշնորհը չեն կազմեր : Ընդհանուր ակնարկի մը տակ՝ հայ հասա-

բակութիւնը կ'երեւայ օգտակար, արտադրող, բեղուն, հնարագիտ, թէպէտ՝ բարոյապէս թուցած, ամբած, ազնուականութենէ, խրոխտութենէ զուրկ, գերի: Շահագրգիռ, որ հոյակապ Ջուղան կործանեց եւ այնտեղի Հայերը քչեց Պարսկաստան, այդ բանն ըրաւ ոչ թէ հայատեցութենէ մղուած, այլ որովհետեւ հայ տարրին սնկրածուց պէտքը կը զգար իր երկրին մէջ վաճառականութիւնն ու ճարտարարուեստները վարդաջնելու: հայ մտքին եւ հայ մատներուն մեծարանքի ցոյց մըն է որ կ'ընէր, ցոյց մը աւագակային . . . : Ու խեղճ Հայը, ստորուկ ու ստեղծագործ, իրօք կատարեց զերը զոր Շահագրգիռ կը սպասէր իրմէ: Պարսկաստանի վաճառականութիւնը հասցուց զարգացման մը զոր ան երբէք չէր ճանչցած, ինչպէս եւ ճարտարարուեստը: Շահագրգիռի դարուն զմայլելի գորգերը որ պարսկական արուեստի հրաշալիքներ կը նկատուին եւ այսօր ամբողջ աշխարհիս հիացումը կը սրբեն, հայ մատներու արգիւնք են անտարակուսելի կերպով: Լեհացիք ամենասիրալիր ընդունելութիւն ըրին Անիէն գաղթող Հայոց, որովհետեւ անոնց վաճառականական, ճարտարարուեստական կարողութիւններն իրենց ծանօթ էին եւ կ'ուզէին որ այդ ձիրքերէն օգտուէր իրենց երկրին վաճառականութիւնը: «Վրացիք ԺԷ. դարուն իրենց Թիֆլիս քաղաքը հրակերեցին Հայերը որոնք վաճառականութեան համար համբաւաւոր էին: Իրենք օգտակարին հօգը շատ դուռնի կը գտնէին իրենց համար: հպարտութիւնը, ծուլութեան միացած, զիրենք կ'արգիլէին աշխատելէ: ամենքն ալ ազնուական էին եւ ուրիշ բանով չէին ուզեր զբաղել բայց եթէ պատերազմելով կամ իրենց գղեակներուն մէջ գինովնալով: Հագուստ, պաշար, հանդրատութիւն գտնելու համար, պէտք ունէին Հայերուն: Անազմուկ, այդ վաճառականները տեղաւորուեցան: իրենց հարստութիւնը ամեցաւ, եւ իրենց թիւն ալ: Շարտէն, իր ծաւրնորդութիւն ի Պարսկաստան գործին մէջ, որ 1686ին լոյս տեսաւ, կ'ըսէ թէ Թիֆլիսի մէջ ութ հայ եկեղեցի համրած է եւ վեց վրացական եկեղեցի: Կիւտենչթէս, 1772ին, կը գրէ թէ հայ տարրն է որ կը տիրէ Թիֆլիսի մէջ(1)»:

(1) Փիէր Մորան, Ֆինլանսա եւ Կովկաս:

Ինչպէս կը տեսնուի, օտարները գնահատած եւ խրախուսած են Հայուն մէջ այն վաճառականական գործունէութիւնը զոր այսօր իրեն մեղք կը համարին:

Ու անոնք որ կը մեղադրեն Հայոց՝ թէ «ուրիշին տունը» գացած են հաստատուելու եւ շահագործել ուրիշ ժողովուրդներ, կը ստեն անազարձեալ, քանի որ յայտնի է թէ Հայը, իր հայրենիքին մէջ զժրագող, եթէ մերթ ինքնին դուրս նետուած է եւ ուրիշ երկիրներ գացած է լաւագոյն բաղդ մը փնտռել, շատ հեղ ալ օտարները զինքը քաշած, կանչած, հրախրած, պահած, նոյն իսկ՝ ինչպէս Շահագրգիռ բոնի տարած են, նկատելով զայն անհրաժեշտ, կենսաբեր, օգտակար տարր: Վրացի մը, Պարսիկ մը, Լեհացի մը որ այսօր ելլէ «Հայը տղրուկ է, շահագործող է, վաշխասու է» ըսէ, ասկերտիտ ու անազնիւ ընթացք ունեցած պիտի ըլլայ եւ իր պատմութիւնը: Երացած (ու չեն պակսիր այս ժողովուրդներուն մէջ իսկ՝ մեղ տղրուկ անուանողներ . . .):

Վերջապէս, այդ «օգտակար» գերը դարելով կատարելէ յետոյ, Հայ ցեղը, ԺԸ. դարուն՝ իր թանձր ստրկութեան խորէն՝ փառաւորապէս ապացուցուց թէ իր բարոյական ուժը, ազատութեան սէրը, մտաւորական լայն ու տնկաշէնը զարգացման տենչը մշտակենդան մնացած էին իր մէջ՝ երեւան հանելով, ամենախոր ստրկութեան մը ծոցէն, Մխիթարի եւ Իսրայել Օրբի պէս երկու մեծ նկարագիրներ որ ազգին քաղաքական, մտաւորական ու բարոյական վերականգման առաջին քարերը զրին ամենայանդու գն ճիգով մը:



Այս բոլորը անծանօթ մնացած է Եւրոպացուց, բաց ի ամենասակաւաթիւ անձերէ որոնք առիթ ունեցած են ներքնապէս ճանչնալ Հայ հոգին՝ առաջնորդուած ըլլալով ազգը ուղիմօրէն ճանչցնել պիտոցող Հայէ մը (ինչպէս՝ օրինակի համար՝ Փարրոտ եւ Հաստկհուզէն ունեցան Սրովեանը): Ընդունինք որ այդ անկման շրջանին մէջ՝ այս բոլոր համակերպի գծերը կը կորսուէին ընդհանուր տխուր պատկերին մէջ՝ օտարին համար, որ կուգար կ'անցնէր, եւ

ուրիշ բան չէր տեսներ բայց կորաքամակ, չըզ-
 թայակապ ազգ մը՝ շուկային մէջ հոռոզեռուն,
 եաթաղանին սարսափին տակ գլխիկոր, աչքը
 խորամանկութեամբ ու վախով լեցուն: Ի՞նչպէս
 բացատրել սակայն, որ ԺԹ. դարուն մէջ Հայոց
 ցոյց տուած մտաւոր ու բարոյական ահագին
 զարթումը՝ տակաւին սեանուած եւ գնահատ-
 ուած չըլլայ Եւրոպացւոցմէ եւ Հայ ցեղը հիմ-
 նովին եւ անվերապահօրէն անուանարկող այդ
 հին քլիշէն փշրած չըլլայ: Ահա ինչ որ զար-
 մանալի է, եւ գայթակղեցնող: Որովհետեւ՝
 առանց չովինութեան կրնանք ըսել թէ ԺԹ.
 դարուն Հայութեան կատարած վերականգնումի
 ճիգը լայնօրէն կը քաւէ նախորդ դարերու ըս-
 տորնացումը: Պէտք չունիմ հոս մանրամասնօ-
 րէն ապացուցանելու մեծութիւնն այդ ճիգին .
 ամէն Հայ գիտակցութիւնն ունի անոր, եւ կա-
 րող է հպարտանալ անով:

Ի՞նչու Եւրոպացին նկատողութեան չ'առնէր
 այս բոլորը՝ մեր վրայ դատաստան յայտնած ա-
 տեն: Որովհետեւ չի գիտէր: Եւրոպացին ոչ մեր
 անցեալին գեղեցկութեան ծանօթ է, ոչ մեր
 ներկային վերանորոգման ջանքերու պատմու-
 թեանը: 1893ին երբ Հանրի Պօէրը տեսնելու
 գացի, « Դուք յատուկ լեզու մը ունի՞ք » հար-
 ցուց մեծանուն քննադատը: 1897ին, Հայաս-
 տանի պատմութեան եւ գրականութեան մա-
 սին բանախօսութիւնս ունկնդրելէ յետոյ, Ժո-
 ըէս եկաւ զիս շնորհաւորել սա խօսքերով .
 « Այս բանախօսութիւնը բոլորովին ՆՈՐ գոյնով
 մը ցոյց կուտայ մեզի հայկական հարցը, տը-
 պազրեցէք զայն եւ բոլոր մեր երեսփոխաննե-
 րուն զրկեցէք »: « Նոր գոյն » . . . պարզ էր որ
 Ժորէսն իսկ այդ իրիկունէն առաջ չէր գիտեր
 թէ Հայերը պատմութիւն եւ գրականութիւն
 ունին: Անաթոլ Ծրանս, որ կը նախագահէր
 այդ բանախօսութեանս, իր ճառին մէջ սա
 խօսքերն ըսաւ .

« . . . Պ. Ա. Չօպանեան մեզի պիտի ծանօ-
 թացնէ գրականութիւնն այն երկրին զոր մենք
 միմիայն իր դժբաղգութիւններովը կը ճանչ-
 նանք: Մեզի պիտի յայտնէ (dévoilera) հայկա-

կան մտածումը՝ ժամանակաց ընթացքին մէջ .
 եւ մեզի լսելի պիտի ընէ ձայնը՝ մերթ դիւցազ-
 ներգական ու մերթ ողբագին՝ ժողովրդի մը որ
 այնքան դարերէ ի վեր, իր հայրենիքէն այրի,
 կը տեւէ, կը տոկայ, կը յուսայ: Պիտի իմա-
 նանք (nous découvrirons) թէ այդ Հայերը ճըշ-
 մարտապէս ժողովուրդ մըն են՝ լեզուի եւ կրօ-
 նական հաւատալեայ նոյնութեամբ, նոյն յի-
 շատակներու եւ նոյն յոյսերու մէջ հոգեհաղոր-
 դութեամբ, զգացումներու հղբայրութեամբ .
 միեւնոյն կեանքով ապրելու, միեւնոյն հոգով
 մտածելու իրենց ուժեղ ու յարատեւ կամքով,
 են: »

Ասիկա պայծառ խոստովանութիւնն մըն էր
 թէ ինքն իսկ՝ Ծրանս, Եւրոպայի առաջին գրա-
 գէտներէն մին, դեռ նոր կ'ունենար « յայտնու-
 թիւնը » Հայ « ժողովուրդի » մը եւ հայ « գրա-
 կանութեան » մը գոյութեան:

Ու կարելի ալ չէ մեղադրել Եւրոպացի-
 ները մեր մասին իրենց ունեցած տգիտութեան
 համար: Եւրոպական արուեստի մէջ իսկ՝
 կան տաղանդներ, հանճարներ, որ իրենց ող-
 ջութեան ատեն չեն հասկցուիր, իրենց մա-
 հէն յետոյ բոլորովին կը մոռցուին, եւ տարի-
 ներ կամ դարեր յետոյ իրենց արժէքը երեւան
 կ'ելլէ: Նոյն բանը կը պատահի եւ ազգերու
 համար: Հիթիթները որ ահագին պետութիւն
 մը կանգնած եւ դարերով Երկրագնացուց հսկայ
 զօրութիւն հակակշռած էին, բացարձակապէս
 մոռցուած էին, եւ երբ Աէյս զանոնք երեւան
 հանեց՝ իր գործը անուանեց « Մոռցուած պետու-
 թիւն մը »: Հնդիկները աշխարհիս ամենէն հրա-
 շալի գրականութիւններէն մին արտադրած են .
 բայց ԺՁ. կամ ԺԷ. դարուն, Եւրոպացի ամե-
 զարգացած անձնաւորութեան մը իսկ իթէ կար-
 ծիքն հարցուէր անոնց մասին, պիտի ըսէր՝
 « վայրենիներ են »: Հնդիկ գրականութիւնը
 « գտնուեցաւ » ԺԸ. դարուն վերջերը եւ ԺԹ.ին
 սկիզբը: Մենք ալ մոռցուած ազգերուն կար-
 գէն ենք եղած: Եւրոպան երբեք չէ գիտցած՝ նոր
 ժամանակներուն մէջ մանաւանդ, թէ հայկա-
 կան քաղաքակրթութիւնն մը գոյութիւն ունե-
 ցած է: Տիեզերական պատմութեան գրքերուն
 մէջ՝ Հայը հազիւ թէ կը յիշուի՝ քանի մը տար-
 տամ տողերով, իսկ ընդհանուր գրականութեան

և արուեստի պատմութեան գրքերուն մէջ՝
 Հայը լնաւ չի յիշուիր : ԺԹ. դարուն մէջ՝ Հայ
 բանասէրներու եւ Եւրոպացի հայագէտներու
 ջանքերով՝ Հայոց պատմութիւնն ու գրականու-
 թիւնը սկսան ֆիչիկ մը ծանօթ դառնալ Եւ-
 րոպայի , բայց այդ բոլոր ջանքերը զուս « գի-
 տական » հանգանակն ունեցած են եւ Եւրոպացի
 արեւելագէտներու շրջանէն դուրս չեն տարած-
 ուած , եւ անոնց աչքին ալ՝ Հայոց գրականու-
 թիւնը գրեթէ միշտ իբր պատմական տղքի-
 մաններու հաւաքածու մը նշանակութիւն ունե-
 ցած է եւ ոչ զուտ գեղեցկագիտական արժէք :

Կրնանք խոստովանիլ թէ՛ Եւրոպայի մեր
 մասին ունեցած տգիտութեան մէջ , մենք ենք
 յանցաւոր : Չենք ըրած ամէն ինչ որ կարելի
 եւ հարկաւոր է Եւրոպացոց ճանչցնելու հա-
 մար մեր պատմութիւնն ու քաղաքակրթու-
 թիւնը : Շատոնց ի վեր Նարեկացին պէտք էր
 թարգմանուած ըլլար եւրոպական բոլոր լեզու-
 ներով . շատոնց ի վեր Քուչակը , Երզնկացին ,
 մեր բոլոր հին բանաստեղծները՝ նախ մենէ
 ճանչցուած ու յետոյ Եւրոպայոց ներկայաց-
 ուած ըլլալու էին . շատոնց ի վեր Արովեանի
 գործը եւ Բագրատունիի Հայկը թարգմանուած
 ըլլալու էին եւրոպական լեզուներով . շատոնց
 ի վեր եւրոպական լեզուներով Հայոց իրակա-
 տար եւ լուսաբանուած պատմութիւն մը շա-
 րադրուած ըլլալու էր : Եթէ այդ բոլորը եղած
 ըլլար 1894էն առաջ , եւրոպական հանրային
 կարծիքը այլապէս պիտի հետաքրքրուէր եւ
 յուզուէր , եւ այնքան անտարբերութեամբ պիտի
 չլիցուէր որ ջարդերը կատարուէին : Իրաւ է որ
 մեր այս « յանցանքը » արդարանալի կողմեր
 ունի . դարաւոր ստրկութիւնէն ապուշցած ,
 թուլցած , կոտորած խեղճ ազգ մը որ յանկարծ
 կ'արթննար ու կը ձգտէր դէպ ի լոյսը , չէր
 կրնար ընել աւելի քան ինչ որ ըրած է . եւ ինչ
 որ ըրած է՝ նոյն իսկ այդ ուղղութեամբ՝ ար-
 դէն իսկ մեծ գովեստի արժանի է :

Ուրիշ պատճառ մը՝ Հայոց մասին Եւրո-
 պացոց տգիտութիւնը բացատրող , Հայոց նկա-
 րագրի յատկանշական գծերէն մին եզոզ քաշ-
 ուածութիւնը , երկչոտութիւնը , ինքնամոհոմու-
 թիւնն է . Հայը կը սիրէ ինք իր մէջ կողիա-
 նալ . ուրիշ ազգերու հետ շփման մէջ կը մտնէ՝
 միայն երբ անհրաժեշտ հարկը կը ստիպէ զինքը .

իսկ երբ մտնէ օտար միջավայրի մէջ , շատ յա-
 ճախ՝ բոլորովին կ'օտարանայ . Պոլսոյ Հայութիւ-
 նը որ 200,000է աւելի անհատներէ կը բաղկա-
 նայ , սակաւաթիւ բացառութիւններէ զատ՝ ոչ
 մէկ յարաբերութիւն չունի՝ բաց ի գործի յա-
 րաբերութիւններէ՝ քաղաքին Եւրոպացիներուն ,
 նոյն իսկ Յոյներուն հետ . ի զուր պիտի փըն-
 տուէք հայ մեծ սալոններ ուր Հայն ու օտարազ-
 ցին մտերմական միջնորդաբի մը մէջ իրարու
 հանդիպին եւ իրար ճանչնան : Դարէ մը ի վեր
 այդ Պոլսոյ Հայութեան մէջ այնքան շահեկան
 շարժումներ տեղի ունեցած են , գրական , սոց-
 ցային , դպրոցական . քաղաքին օտար հասարա-
 կութիւնները գրեթէ ոչինչ իմացած են անոնց-
 մէ . հարցուցէք պոլսաբնակ Եւրոպացիի մը
 կամ Յոյնի մը՝ թէ Յ . Պարոնեանի կամ Պէշիկ-
 թաշլեանի , Դուրեանի կամ Միսաքեանի մա-
 սին ի՞նչ գիտէ . անուննին անգամ չեն լսած :
 Եւ սակայն Պոլիս եւրոպական լեզուով թերթեր
 կան , որոնց խմբագիրներէն ոմանք Հայ են . եր-
 բեք չեն մտածած այդ Հայերը՝ իրենց գրականու-
 թիւնը ճանչցնել իրենց բնակակից օտարներուն :
 Միայն Աղամեանն էր որ գնաց Յունաց թատ-
 րոնը՝ Յոյն դերասաններու հետ Օթեղջօ ներկա-
 յացուց , եւ Յոյները իրեն ամենափառաւոր ըն-
 դունելութիւն ըրին : Միեւնոյն բանն ըլլալու է
 Թիֆլիս . գիտեմ թէ այնտեղ կան հայ մեծ սա-
 լոններ , բայց անոնց աէրկրը հայերէն չեն խօ-
 սիրու . անունով միայն Հայ են : Տարիներէ ի
 վեր Փարիզի մէջ կազմուած է ստուար գաղութ
 մը . քանի մը հոգի գիտեմ միայն որ Ֆրանսացի
 ընտանիքներու հետ յարաբերութիւն ունին ,
 միւսները գործի կապեր լոկ ունին Ֆրանսացոց
 հետ . մէկ տուն մը չունինք ուր կարելի ըլլայ
 Ֆրանսա մը , Քլէմանսօ մը , Ժորէս մը , Վանտալ
 մը , Քոչէն մը հրաւիրել . Յոյները հոս ունին
 մէկէ աւելի այդպիսի սալոններ՝ ուր Փարիզի
 ամենարարձր անձնաւորութիւնները կ'ընդուն-
 ուին : Եւրոպացի հայասէրներուն հետ Հայոց
 յարաբերութիւնները գրեթէ միշտ կը կայանան
 իրենց դատին համար զիմուսներ ընելու մէջ .
 ո՛չ մէկ մտերմութիւն : Դիմումը վերջացածին
 պէս՝ Հայը կ'անհետանայ , երկրորդ պիմումին
 նորէն երեւան ելլելու համար : Հայուն այդ
 քաշուածութիւնն ալ կը բացատրուի ստրկաց-
 ման ազգեցութեամբ . դարերով կոխտուած ,

արհամարհուած , շան տեղ գրուած՝ իր մահմե-
տական տէրերէն , Հայը անսխալակցօրէն ներքին
համոզում մը գոյացուցած է թէ ինքը իրօք
նուաաս , չնչին , արհամարհելի էակ մըն է .
և է օտար իրմէ անհունապէս բարձր կը հա-
մարի , անմատչելի :

Ուրիշ պատճառ մը՝ վերջապէս՝ Հայոց դէմ
Եւրոպացւոց սածած հակակրօթիւնը բացատ-
րող , Հայոց անբարեկրթութիւնն է . Երբ պա-
տահի որ Հայը յարաբերութեան մասնէ Եւրոպա-
ցիի մը հետ , անթաքթ եւ անտաշ լեռնցիի մը
տպաւորութիւնը կը թողու շատ յաճախ : Էտ-
ման Ֆադի , որ Պոլիս մնացած է քանի մը
տարի եւ կը սիրէ Հայերը , իր « Ժամանակակից
Թուրքերը » գրքին մէջ՝ Հայոց համար շատ հա-
մակրական բաներ ըսելով հանդերձ՝ գիտել տը-
ւած էր , իրաւամբ , թէ Հայերը tact mondain
չունին : Լուրճի Վիլլարի որ վերջերս կողկաս
էր գացած եւ հայաթաթարական պայքարին
վրայ շատ լուրջ , արգար եւ Հայոց մեծապէս
նպաստաւոր ուսումնասիրութիւն մը հրատարա-
կած էր , նկատած էր նաեւ թէ Հայը կոպիտ է ,
անհամակրելի : Հայոց այդ թերութեան բացատ-
րութիւնն ալ պէտք է փնտռել իր ստրկացմանը
մէջ : Բարեկրթութիւնը կը կազմուի անկախ
ազգերու բարձր , ախրող դասակարգերուն մէջ .
ազատ , խրոխտ , ուժեղ , պերճ ու նրբաձեւ
կեանքը կը ստեղծէ վեհութիւնը , շնորճը , արժա-
նապատուութիւնը , բարեկրթութիւնը՝ զգալու
եղանակներուն եւ զանոնք արտազրող ձեւերուն
մէջ . հայկական պալատներու եւ զգեակներու
մէջ , երբ մեր ազգն ունէր իր ինքնուրոյն կեան-
քը , իր արքունիքն ու նախարարական մեծ
տուները , մեր թագաւորներն , իշխաններն ու
բամբիչները անշուշտ ունէին այն ազնուական
բարեկրթութիւնը որ այսօր կը պակսի մեզի :

Անիի կործանումէն յետոյ՝ Հայոց ազնուա-
կանութիւնը գրեթէ ամբողջապէս գաղթեց Լե-
հաստան , Բիւզանդիոն , Կիլիկիա՝ եւ այլ տեղ-
ուանք . չկրնալով հանդուրժել ստրկական պայ-
մաններուն . շատերն ալ զարերու ընթացքին
մէջ մահմետականացան . Ռուբինեանց թագա-
ւորութեան անկումէն յետոյ , ինչ որ կը մնար՝
Կիլիկիոյ մէջ՝ այդ հայազարմ ազնուականութե-
նէն , ջնջուեցաւ կամ ցրուեցաւ , կորսուեցաւ ,
ու հայրենի հողին վրայ իբր Հայ մնաց միայն

պուրժուա եւ զիւղացի դասակարգը , որոնք
արդէն իսկ մեր նախարարներու « ճորտ »երն
էին , որով եւ գոհնիկ , անբարեկիրթ , կոպիտ
Մահմետական լուծը , ստրկացնող եւ լղրճող ,
բնականաբար ասանապատկեց չարիքը . Պարսիկ-
ներն ու Թուրքերը որ իրենք իրենց մէջ ու մա-
նուանդ օտարին հետ՝ շատ նուրբ — նոյն իսկ
ճայրայեղ — քաղաքավարութեամբ գիտն վար-
ուիլ , իրենց բայաներուն հետ կը վարուէին
ամենազգուելի կոպտութեամբ . այդ թանձր ու
գձուձ մթնոլորտին մէջ՝ Հայը դաղափար իսկ
կազմուեւ անկարող էր բարեկրթութեան մա-
սին : ԺԹ . դարու մէջ Հայութիւնը գիտցաւ
սքանչելի ճիգերով մտաւորապէս վերականգնել ,
բարոյապէս ալ՝ գէթ մասամբ լուացուիլ սորը-
կացման աղաէն , բայց իր ծուծը մտած անբա-
րեկրթութիւնէն չկրցաւ զերծանիլ , ու՝ ինչ որ
սարօրինակ է՝ ջանք ալ չըրաւ ատկից զերծա-
նելու . մեր զպրոցներուն մէջ ոչ մէկ ծանօթու-
թիւն կուտան բարեկրթութեան մասին . ամէն
բան , նոյն իսկ ամենէն անպէտ բաները կը սոր-
վեցնեն , բայց կեանքի գիտութիւնը որ ամենէն
անհրաժեշտ բաներէն մէկն է՝ չեն սորվեցնեն :
Չարիքը հեռու է անդարմանելի բլլալէ . զուտ
եւրոպական կրթութիւն ստացած Հայերը ինչ-
պէս եւ՝ մեծ մասամբ՝ կաթոլիկ Հայերը որ
եւրոպական միջավայրի մէջ կ'ապրին , այնքան
բարեկիրթ են որքան ո եւ է Եւրոպացի . նոյն
իսկ Եւրոպացւոց մէջ քիչ տեսած եմ կարա-
պետ Գարագաշի , Թերզեանի , Տիգրան Երկաթի ,
Պետրոս Ազամեանի պէս շնորհայի անձեր :
Մեր լուսաւորչականներուն մէջ է որ ամենէն
աւելի լայնատարած կը փոռուի անկրթութիւնը :
Մեր ամենէն « ուսեալ » անձերուն մէջ իսկ
(բայ ի զուտ եւրոպական կրթութիւն ստացող-
ներէ) կը գտնենք կոպտութիւնը , անգիտակից
ու սիրական : Այդպիսիներուն քով նոյն իսկ
աւելի անտանելի կը զառնայ անկրթութիւնը ,
որովհետեւ կը ջանայ ինքզինքը արգարացնել ,
փառաւորել՝ « անկեղծութիւն » գտնելով ուր որ
աւանակութիւն կայ : Յայանի բան է որ քա-
ղաքավարութիւնը յաճախ կեղծիքի վրայ հիմ-
նուած է , բայց կայ բարեբար ու անհրաժեշտ
կեղծիք մը , զոր պէտք չէ շփոթել կեղծաւո-
րութեան հետ , եւ առանց որուն կեանքը ան-
հնար կը դառնայ . թոքախտաւորի մը կամ տգե-

դի մը երեսին չես կրնար ըսել թէ թողախտա-
 ւոր է , տգեղ է , ինչ որ շատ անկեղծ բան մը
 պիտի ըլլար սակայն : Իրարու հետ իրենց յա-
 րաբերութեանց մէջ , մարդոց ձգտումը պէտք է
 ըլլայ կարելի եղածին չափ իրարու աւելի հա-
 ճելի ըլլալ , չվիրաւորել զիրար , շնորհալի յի-
 շատակ մը թողուլ իրարու մտքին մէջ . գե-
 ղարուեստն ալ , որ կեանքը գեղեցկացնող մե-
 ծագոյն բանն է , այդ վսեմ կեղծիքին վրայ
 հիմնուած է : Բաղաքավարութիւնը կեանքի
 գեղարուեստն է : « Բարեկրթութիւնը , ըսած է
 Վոլթեր , այն է մտքին համար ինչ որ է շնորհը
 զէմքին համար » : Յրանսացիք , որ Եւրոպայի
 ամենէն քաղաքավար ազգը եղած են , ամենէն
 սիրուած ազգն են եղած ատոր համար : Եւ սէր
 ու համակրութիւն ներշնչելը ազգի մը ինչպէս
 անհատի մը համար՝ մեծագոյն ուժն է : Մեր
 մէջ — մանաւանդ մեր մտաւորականութեան
 կամ մեր ունեւոր դասակարգին մէջ , — ամ-
 քարտաւանութիւնը կը չփոթեն արժանապատ-
 ուութեան հետ , քծնումը համեստութեան հետ ,
 անթաքթութիւնը , զգացման կոպտութիւնը՝
 անկեղծութեան հետ : Ու տամին ինը՝ զիտած
 եմ որ այդպէս կը վարուին , որովհետեւ չեն
 գիտեր , չեն հասկցած բարեկրթութեան նշա-
 նակութիւնը . դադափար չունին քաղաքավա-
 րութեան մասին : Շատ անգամ Հայը կոպիտ ,
 նոյն իսկ անագնիւ կը հանդիսանայ՝ կարծելով
 շատ խորիւտ ու վեհ ընթացք մը ունենալ : Օր
 մը կը գտնուէի երիտասարդ մտաւորականի մը
 հետ , սրճարանի մը մէջ . հանդիպեցանք հոն մեր
 մէկ ուսուցչին որ գաւաթ մը գարեջուր հրամ-
 ցուց մեզի . երբ ուսուցչիչը մեկնեցաւ , զիտեցի
 որ ընկերս շնորհակալութեան ոչ մէկ բառ չար-
 տասանեց . դիտել տուի իր այդ պակասութիւնը .
 « Ինձի այնպէս կը թուի որ , ըսաւ , նուաասա-
 ցում մը ըրած կ'ըլլամ « շնորհակալ եմ » ըսե-
 լով . . . Նախագահը ուսանողական ընկերութեան
 մը որուն գործադիր մարմնոյն կ'անդամակցէի ,
 անգամ մը առանց խորհրդին հետ կանխաւ հա-
 մաձայնելու , որոշած էր ի նպաստ այդ ընկերու-
 թեան վիճակահանութիւն մը սարքել եւ այդ
 նպատակով նամակ գրած էր Փարիզ գտնուած
 բոլոր հայ նկարիչներուն՝ հրաւիրելով զանոնք
 որ ընկերութեան գրասենեակը զան այսինչ ի-
 րիկունը՝ ժողովին ներկայ գտնուելու , որովհե-

տեւ ընկերութիւնը կը փափաքէր իրենցմէ նկար
 մը նուէր ուզել . դիտել տուի , երբ իմացայ
 այս տարօրինակ արարքը , որ երբ ընկերութիւն
 մը կամ մարդ մը մէկէ մը նուէր մը կը խնդրէ ,
 անհրաժեշտ է որ ինքն անոր մօտ երթայ եւ ոչ
 թէ զայն իր սուքը կանչէ . տարրական բարե-
 կրթութեան այս կէտը անկարելի եղաւ հասկը-
 ցնել այդ պարոնին . « ա՛խր , բացագանչեց , դա
 ի՞նչ ուսման թիկական բաներ են , միթէ նկա-
 րիչները մեզանից բա՛րձր մարդիկ են , եւն . . »
 Այն իրիկունը ուր խումբ մը Հայեր հաւաքուե-
 ցան Անաթոլ Յրանսին երախտագիտական ճաշ-
 կերոյթ մը տալու , հայ մտաւորական մը յան-
 կարծ ցցուեցաւ ու հայկական խնդրոյն մէջ
 Յրանսայի կատարած դերը սկսու երկայն բա-
 րակ քարկոծել խարանոզ բացատրութիւննե-
 րով . որքան ալ ազատամիտ մարդ ըլլայ Յրանս ,
 որքան ալ ինքն իսկ համոզուած՝ եղած այդ դի-
 տողութեանց ճշդութեան , ինքը միակ Յրան-
 սացին՝ Հայերու խումբի մը մէջ , իր Յրանսացիի
 արժանապատուութեան մէջ պիտի խոցուէր ան-
 շուշտ , վերջապէս անախորժ տպաւորութիւն
 պիտի կրէր , ինչպէս կրեց ալ եւ ստիպուեցու
 մինչեւ անգամ սուքի ելլել եւ քանի մը խօսքով
 պատասխանել բանախօսին : Մինչեւ այսօր այդ
 բանախօսը չէ համոզուած թէ իր ըսածները
 կարելի էր ըսել ո եւ է ատեն եւ ո եւ է տեղ՝
 բայ ի այդ իրիկունէն ուր Հայոց դատին յա-
 ջողմանը աշխատող ազնիւ Յրանսացիի մը յար-
 գանք եւ շնորհակալութիւն յայտնելու համար
 հաւաքուած էին Հայերը : Վերջին օրինակ մըն
 ալ , աւարտելու համար այս շարքը՝ որ կըր-
 նայ յանհունս երկարիլ . մեր նոր սերունդին
 ամենէն նրբաթրթիւ գրագէտներէն մին , իրի-
 կուն մը ներկայ ըլլալով հայ տան մը մէջ , եւ
 մասնակցելով սալոնի խաղի մը ուր պէտք էր
 բաղադատական քոմիլիման մը ընել ներկայ տիկ-
 նանց՝ կը ցցուի տանտիկնոջ առջեւ (որ շատ
 բարի անձ մըն է , բայց մարմնեղ) ու կ'ըսէ .
 « Տիկին , կովու կը նմանիք . . . »

Երբ մեր « զարգացեալ » պարոններն ան-
 գամ այսքան բոպիկ են բարեկրթութեան մէջ ,
 հասկանալի է որ մեր ժողովուրդը օտարին վրայ
 թողու սնտաշ , հաստ ու գոեհիկ սարրի մը
 տպաւորութիւնը :

Այս բոլորը, անշուշտ, ո եւ է չափով չարգարացներ Ֆարէրներուն վարմունքը, նախ սրովհետեւ այդ պարոններուն մեր ժողովուրդն ուսումնասիրելու եղանակը հարեւանցի է, թեթեւ ու անխղճամիտ, ու յայտնած կարծիքնին՝ իր կտրուկ բացարձակութեան մէջ՝ անձիշդ եւ անարդար. երկրորդ՝ ու մանաւանդ՝ Ֆարերները յանցաւոր են, որովհետեւ կուզան անուանարկել ժողովուրդ մը որ անաւորապէս դժբաղդ է եւ որ, ազատելու համար իր գերութենէն, ամուսնէն անհաւատար ու սաժանելի պայքարին մէջ կը տապալուի: Ֆարէրները կրնան չգիտնալ մեր պատմութիւնն ու գրականութիւնը, բայց իրենց մամուլին, իրենց խորհրդարանական կեանքին չեն կրնար տնծանօթ մնացած ըլլալ. իրենց մեծագոյն խմբագիրներուն, իրենց ամենէն նշանաւոր ճարտասաններուն յօդուածներն ու ճառերը պէտք էր կարդացած ըլլային, եւ գիտնային թէ 300,000 մարդկային էակ ջարդուած է այդ Հայաստանին մէջ որուն վրայ աիդմ կը թափեն եւ թէ իրենց վախառու համարած ժողովուրդը հարիւրաւոր հերոսներ արտադրած է որոնք կեանքերնին զոհեցին գաղափարի մը համար: Ասիկա չգիտնալնին աններելի է, եւ դժբաղդութիւնը նախատելը վատութիւն է:

Ինչ պէտք է ընենք դարմանելու համար մեզի դէմ տարածուած այս հակակրօթեան չարիքը: Անարդար կամ արդար, այդ հակակրօթիւնը կա՛յ, իրողութիւն մըն է, եւ իրողութիւն մը մեր ազգային շահերուն համար միծապէս վնասաբեր: Պէտք է ինքզինքնիս պաշտպանենք այդ չարիքին դէմ:

Ամէն անգամ որ Ֆարէր մը կը մրտտէ մեր ցեղային պատիւը, անոր հարկ եղած պատասխանը տալը՝ տարրական պարտականութիւն մըն է որ պէտք է կատարենք, եւ որ իր ազդեցութիւնը կրնայ ունենալ: Ժուրնալը չհրատարակեց Սփոնի յաջորդ յօդուածները: Մերֆիւր այսուհետեւ չի հիւրընկալեր Ֆարէրի նորավէպին նման գրութիւններ, եւ Ֆարէրներն ալ աւելի զգոյշ կ'ըլլան: Բայց ատիկա չի բուեր: Ամենէն ուժեղ եւ հիմնական միջոցը այդ չարիքը արմատախիլ ընելու՝ Եւրոպացւոց ճանչ-

ցնելն է մտաւորական ուժի եւ հոգեկան արութեան բոլոր ապացոյցները զոր Հայ ցեղը՝ անցեալին ու ներկային մէջ՝ տուած է, հաւաքաբար ու անհատօրէն: Դիւցազնական արարքի մը կամ մտաւորական գլուխ-գործոցի մը հանդէպ՝ ամէն զրպարտութիւն, ամէն վարահաչուութիւն կը լռէ: Դուք կը կարծէք որ Հայը գձո՞ւձ, անհոգի՞, գոհի՞կ ցեղ է, ո եւ է գեղեցկութենէ զուրկ. ահա՛, պարոններ, ինչ որ այդ ազգը ըրած, ինչ որ արտադրած է: Այն զգուելի տիպաբները զոր օտարները մեր մէջ կը նկատեն եւ զոր ամբողջ ազգին իբր բնորոշ ներկայացուցիչներ կը համարին, անոնք՝ նոյնքան եւ աւելի զազիր՝ կը գտնուին Ֆրանսայի, Անգլիոյ, Գերմանիոյ, բոլոր մեծ երկիրներուն մէջ, բայց ոչ ոք կը համարձակի Ֆրանսացին, Անգլիացին, կամ Գերմանացին այդ տիպաբներուն վրայէն դատել, որովհետեւ ամէն ոք գիտէ թէ այդ ազգերը արտադրած են Բորնէյլ, Հիւլիօ, Փասթէօր, Բլոս Պերնար, Ժան ատար, Լաֆայէթ, Շէքսպիր, Կէօթէ, եւն:

Մենք չենք եղած մեծ ազգ մը, բայց չենք ալ՝ վերջապէս՝ այն գնչուներու ու վախառուներու ջուրը զոր կ'ուզեն մեր մէջ ածանել մեզ չճանչցողները: Մեր պատմութիւնը ունի իր եղերական ալեծուփ ամբողջութեանը մէջ՝ մէկէ աւելի վեհ էջեր, եւ մեր մտաւորական գորութիւնը ինքզինքը սպացուցած է քանի մը գեղեցիկ արտադրութեանց մէջ, որոնք, որքան ալ սակաւաթիւ ու սահմանափակ, Գեղեցկութիւն կը պարունակեն, եւ ինքնուրոյն Գեղեցկութիւն մը: Ուրեմն մենք իրաւունք ունինք մարդկային Պանթէոնին մէջ մեր անկիւնն ունենալու, փոքրիկ բայց պատուաւոր անկիւն: Ու մեր պարտքն է այդ մեր իրաւունքը ճանչցնել քաղաքակիրթ աշխարհին: Չենք կրնար սպասել որ օտարները գան մեր անցեալը ուսումնասիրելու կան գիտուններ որ կ'ընեն այդ բանը, ու մերթ՝ Հայոցմէ աւելի լաւ. բայց գիտուններուն գործը՝ ինչպէս դիտել տուի արդէն՝ կը մնայ միշտ գիտուններու շրջանին մէջ. մեր գրագէտներուն, բանասէրներուն, գործիչներուն պարտքն է կատարել այդ գործը. փոքր ազգերը իրենք իսկ պէտք է ճանչցնեն օտարին ինչ որ ունին արժանիք. Իպսէնն իսկ Ֆրանսային ճանչցողը սկանտինավ մը եղաւ, կոմս Փրոզորը:

Պէտք է տեղեկանալ, որ պատմութեան մէջ Հայ ցեղին դերը նշանակուի : Պէտք է Եւրոպացիք ըմբռնեն Վարդանանց-Վահանեանց պայքարին խիզախ գեղեցկութիւնը եւ համաշխարհային մեծ նշանակութիւնը . պէտք է ըմբռնեն հոյակապութիւնը այն տարօրինակ հրաշքին զոր ժԲ. դարուն հայ ցեղը կատարեց՝ բիւզանդեան ծովին ու մահմետական ովկիանոսին ամէն կողմէ խուժող կոհակներուն դէմ՝ իր բուն հայրենիքէն դուրս՝ Ռուբինեանց արի տունը կանգնելով . պէտք է գիտնան որ մենք Լեւոն Բ. մը ունեցած ենք, որ այսարհիս ամենէն քաջ, ամենէն իմաստուն եւ ամենէն ազնիւ թագաւորներէն մին է եղած ու Թրէտէրիք Պարպուռի մը երախտագիտութեանն արժանացած . պէտք է ճանչնան նաեւ այն բոլոր հերոսական դէմքերը զոր հայ ցեղը արտադրեց այս վերջին 10-15 տարուան պայքարին մէջ . մեր յեղափոխական կուսակցութեանց պարտականութիւնն է հայկական դատին համար ամենէն աներեւակայելի շարժարանքներն յանձն առնող, արտակարգ յանդընդութեան ապացոյցներ ցոյց տուող մեր ժամանակակից Վարդաններուն մանրամասն կենսագրութիւնը եւրոպական լեզուներով շարադրուած՝ հազարաւոր օրինակներով ցրուել եւրոպական հասարակութեանց մէջ (որովհետեւ Եւրոպա Հայ ու « ջարդ » հոմանիշ կը նկատէ դժբաղդարար, եւ չի գիտեր անհասներու կամ խուժբերու ցոյց տուած անսովոր արութիւնը որ կըրնայ չբնականացնել անգէն զանգուածին ոչխարակերպ կոտորումը) :

Պէտք է մարդկային Արուեստի ու Գրականութեան Տաճարին մէջ Հայուն խորանը կանգնի եւ իր յարգանքի իրաւունքն ստանայ : Պէտք է Պոլիս այցելող ճամբորդ մը գիտնայ թէ Վոսփորի ափանց վրայ իր գմալումը գրաւող պալատները հայ հանճարի արդիւնքն են : Կովկասէն անցնող ու եւ է ուղեւոր պէտք է գիտնայ թէ Անի մը կայ հոն, եւ անհրաժեշտ նկատէ երթալ երկիւղածօրէն այցելել մեր մեծ քաղաքին վեհաշուք աւերակները : Այն ոտեն Հայը պիտի յարգուի, եւ Թարէրները երբեք պիտի չփորձուին կտրուկ վճիռներով մեր ցեղը մրտաելու :

Ու պէտք է նաեւ որ այս ամենն ընելով հանդերձ, ուշադրութիւն դարձնենք մեզի դէմ

եղած քննադատութեանց իրաւացի կէտերուն վրայ, եւ ջանանք սրբագրել մեր իրական թերութիւնները : 7-8 տարի առաջ, Անգլիատեցութիւնը շատ տարածուած էր, եւ բուն ձեւով, Եւրոպայի գրեթէ բոլոր ազգերուն մէջ . անգլիական ամենալուրջ օրկանները հարց պիտի շատ ազնուօրէն թէ արդեօք այդ ատելութիւնն արդարացնող պատճառներ չե՞ն տուած Անգլիացիք, թէ իրենց ծայրայեղ եսականութիւնը, յափշտակիչ սքին, ամենուն գործը խանգարելով, ամենը իրար ձգելով միշտ իրենց գործը յառաջ քշելու սիտեմը ատելութեան արժանի չե՞ն կացուցաներ Անգլիացին . էտուարդ թագաւորը ըմբռնեց ինչ որ կար ճիշդ Անգլիոյ դէմ ուղղուած քննադատութեանց մէջ, գիտցաւ զըզրացի ազգերուն ընել զիջումներ զոր կարելի էր եւ պէտք էր ընել, եւ այսօր, ամբողջ Եւրոպայի — բաց ի Գերմանիայէն, — խանդավառ համակրութիւնովը պաշարուած է Անգլիան : Մենք ալ պէտք է ճանչնանք մեր պակասութիւնները, որոնք քիչ չեն, ու պզտիկ չեն, եւ պէտք է ուղղենք զանոնք :

Մեր թերութիւններէն լուացուելու ամենէն հզօրագէտ նպաստող միջոցը՝ ազատութեան ստացումն է անշուշտ, որովհետեւ մեր թերութիւնները գրեթէ բոլորն ալ ինչպէս նկատեցի՝ ստրկութեան արդիւնք են : Բայց սպասելով որ այդ ցանկալի օրը համի եւ անոր ծագումը փութայնելու համար անհրաժեշտ եղած բոլոր ճիգն ընելով հանդերձ, ճշմարտագէտ « Եւրոպացած », գիտակից ու պարտաճանաչ ուսուցիչներ, առողջ եւ ազնիւ գրականութիւն մը, լուրջ ու շինիչ մամուլ մը՝ այժմէն իսկ կրնան մեծ չափով մը « քրքարել մեր թերութիւնները » : Պարուն մէջ՝ զպրոցը, գրականութիւնը եւ մամուլը մեծ արդիւնք տուած եւ արդէն զգալի բարեփոխութիւն յառաջ բերած են Հայոց բարքերուն ու նկարագրին մէջ . այդ կենսական գործը պէտք է շարունակել, ու հետզհետէ սուելի դիտակից ու զօրեղ կերպով : « Հայկական Միութիւնները » շատ բան ունին ընելու այդ ուղղութեամբ :

Ա. ԶՊԱՆԵԱՆ



Ֆ ե ր դ ու լ ս ի

Ա. ԴՐՈՒՍԳ

Արտաշիր Բարակեան

Երբ առ այսպէս լըսեց արին Արտաշիր ,
 Բարձրացուց գրուի քան զԱնահիտ եւ Տիր .
 Գովեց անոնց եռանդն ու այնուհետեւ ,
 Բոլոր թափովն ինկաւ վըրիժու ետեւ :
 Մի քաղաք հաստատեց ծովեզերքը որ
 Գործի . յետոյ , դարձաւ կեդրոն կարեւոր :
 Մի մովպետ Արտաշիրին յայնժամ մօտեցաւ ,
 Ասաց . « Ա՛րքայ գերաստղ ու սըրտագըրաւ ,
 Տէրութիւն կը հիմնես Դու այսօր անկախ ,
 Սակայն պէտք է Փարսէն խել որոմը նախ .
 Յետոյ Արտաւանի հետ մըտի՛ր ի հետ ,
 Քանզի նոր էք թէ՛ աստղ եւ թէ՛ Խոսրով դեռ :
 Ձի գանձով հաւասար չը կայ իշխան ոք ,
 Կըրնայ պատերազմին Քեզ պատճառել հոգ :
 Միանգամ որ խախտես նորա գահ տեղաց ,
 Ոչ ոք ապա կ'իշխէ Քո ելլել դիմաց : »
 Երբ իմացաւ խըրոխան ու սէգն Արտաշիր
 Այս խըրատներն ուղիղ եւ իմաստալիր ,
 Լերանց գըլխէն արեւն հազիւ տըւած ծայր ,
 Չըւեց այն ջըրափէն դէպ ի Ստահրն ի վայր :
 Բահման Արտաւանայ որդին առաւ լուր ,
 Խոցուեցաւ նորա սիրտ , տըրտում ու տըխուր
 Չը յամեց մի ըսպէ վերայ իւր գահուն ,
 Չօրք ժողովեց ու բանակ կազմեց նոյն պահուն :
 Մի մարդ կար անուանի , կոչոին Տաքակ ,
 Շատ զօրք ու զէնք ունէր եւ խելքով ատակ ,
 Ձահրամի նա յայնժամ թագաւորըն էր ,
 Կենցաղագէտ՝ խոհմ ու հրամանի տէր :
 Եօթ բարեբաստ որդւոց հայր էր նա պառաւ ,
 Թողուց Բահմանն իսկոյն երբ այս լուրն առաւ .
 Սըլացաւ ի Ձահրամ դէպ ի Արտաշիր ,
 Չօրք՝ թըմբուկ՝ կարասի՝ աղիս , համայնն ի կիր :
 Երբ ըՍպահապետի նըշմարեց երես ,
 Ձիէն ցած իջաւ շուտ , որպէս էր դա ծէս ,
 Վազեց համարյր տըւաւ ոտիցը նորա

Եւ շատ բան խօսեցաւ Սասանեանց վերայ :
 Փառահեղն Արտաշիր սիրով ընդունեց
 Եւ շուտ գալուն համար պատիւ ցուցուց մեծ .
 Սակայն կասկած ունէր Տաքակէն նա միշտ ,
 Կը տագնապէր սիրտն ու կը վախէր ալ ճիշդ :
 Ճանապարհին շատ էր նա ծերէն ըզգոյշ ,
 Ձի նորա շատ էր զօրքն ու առաւել ոյժ :
 Աշխարհի փորձ ունէր ծերուկն հոգեկիր
 Ըզգաց իսկոյն տագնապն յոր էր Արտաշիր .
 Եկաւ Չենդ-Աւետգայն բերելով իւր հետ ,
 Ասաց թէ . « Բարձրեալն Սատուած իրագէտ ,
 Բառնայ թող անպիտան հոգին Տաքակայ
 Եթէ կեզժ ինչ նորա սըրտին մէջը կայ :
 Երբ իմացայ թէ այս ջուրին ափն ի վեր ,
 Արտաշիր արքայն շատ զօրք է հաւաքեր ,
 Այնպէս զըզուանք եկաւ ինձ Արտաւանէ ,
 Որպէս մի պատանւոյն պառաւ մի հանէ :
 Ձիս ծառայ բարեմիտ անձնուէր Քեզ կա՛լ ,
 Համբերատար ըզգօն՝ գաղտնապահ՝ ժուժկալ : »
 Երբ լըսեց Արտաշիր այս խօսքըն՝ անդէն
 Փարատեցաւ կասկածն ի սպառ իւր սըրտէն ,
 Հօրը տեղ զըրաւ զայն ցըվերջ այնուհետ
 Եւ իւր քաջաց կարգեց ըզնա զօրապետ .
 Հանդարտեցաւ Շահին սիրտը խըրովեալ ,
 Միտքը զըրաւ Խորրատ ու Ռամ ուխտ գընալ :
 Կը խընդրէր ու հայցէր Ասաուծոյ առաջ ,
 Որ ուղղէ իւր գընացքն ի բարին յառաջ ,
 Յաջող ելք տայ գործոց որ նա գարնէ ձեռք ,
 Իշխանութեան ծառին պարգեւէ նա բերք :
 Յետոյ մըտաւ խորանն իւր գեղայօրէն ,
 Չօրավարը մատոյց մի աղերս Իրեն ,
 Հետեւակ ու հեծեալ առաւ ի համար ,
 Գիանալ թ՛, որս՛նք ենք սըրտոտ ու սալար :
 Երբ ի հանդէս եկան հինգ հազար զինուոր
 Քաջարի՝ քաջապինդ՝ գոռ դաշունաւոր ,
 Մի առ մի ճանաչեց ու հարցուց անուն ,
 Չօրապետին յայտնեց խընդութիւն անհուն :
 Դըրամ բաշխեց զօրքին , գո՛հ զըւարթ ըրաւ ,
 Յերկնից հայցեց շընորհ բարեաց անզըրաւ :
 Երբ անեղ վագրի պէս զօրքն եկաւ ի կազմ ,
 Բահման Արտաւանի դէմ վազեց ի ռազմ :
 Երբ մօտ եկան տակաւ զօրքը բարդ ի բարդ ,
 Սըլացան կորովի ախոյեանք ի մարտ .
 Երկու կողմէն լաշկարն ի ճակատ բերին ,
 Ճօճացին տէգ՝ նիզակ՝ գեղարդ ի ձեռին :

Երբ հոյացաւ կապոյտ կամարն իւր ծածկոյթ ,
 Յառաջեց Տարակայ զօրքն ի ուզմ' անքոյթ ,
 Պատատեցան զօրէն առիւծներ անեղ ,
 Գետահետեալ վազեց արեւն իբր հեղեղ ,
 Մինչև որ հուսկ ապա շեղնեց արեգակ ,
 Օղբ պատեց փոշի , գետինը՝ զիակ :
 Մի մըրրիկ յիղակարծ փըրթաւ ան ատեն ,
 Արտաչիր խոյացաւ բանակի սըրաէն :
 Խուճապեց ի փախուստ Բահման-Արտաւան ,
 Մարմինը նետախոց , հոգին տըխրական :
 Շահ-Արտաչիր փութով պընդեցաւ ըզհետ ,
 Շեփոքներ հնչելով եւ տեղալով նետ :
 Այսպէս մինչև ի Ստահր հասաւ ըշտապաւ
 Ուր էր Բահմանայ գահն ու փառքն ու համբաւ :
 Երբ ընթացաւ հրոչակն արքային աշխարհ ,
 Վազեց ամէն կողմէ զինուոր անհամար :
 Բացին անոր առջեւ գանձարանը փակ
 Զոր հազար նեղութեամբ զիլած էր Բարակ :
 Բաշխեց ոսկին արծաթն առատ իւր զօրաց ,
 Քաշեց Փարսէն բանակն՝ այսպէս զօրացած :
 Արտաւանին այս լուրն երբ հասաւ ականջ ,
 Սարսափ ինկաւ սըրտին , եղաւ մըտատանջ :
 Ասաց թէ հրկնից այս խորհուրդը թաքուն
 Յայտնած էր ինձ երբեմն այր մի իմաստուն :
 Այն չարը որ խելքի մըտքի տակ չիյնար ,
 Միթէ ջանքով անկէ կա՞յ փախչելու ճար :
 Զէի կարծեր բընաւ թէ Արտաչիրէն ,
 Մի փառախընդիր զուրս գայ առիւծօրէն :
 Բացաւ զուր գանձին՝ վըճարեց ոռճիկ ,
 Ճամբեց զօրքն , հոգալով պէտքերը քաջիկ :
 Գիլանէն , Դայլամէն զօրքն եկին հասին ,
 Փոշին բարձրացաւ վեր մինչև ի լուսին :
 Միւս կողմէն Արտաչիր հաւաքեց լաշկար ,
 Որ քամու կը կըտրէր անց ու ճանապարհ :
 Երկու նէտընկեց լոկ մընաց անջըրպետ ,
 Հողին տակի օձէն քունն եղաւ անհետ :
 Զի բոմբէր թըմբուկ ու փողեր գոռային ,
 Ղօղանջէն արոյրք ու զանկ հընդկային ,
 Աղմըկէր գոռայր զօրք , գրօշներ փողփողէր ,
 Մանիշակ սուրն հընձէր մարդու գըլուխներ :
 Քառասուն օր տեւեց այս նախճիրն անեղ ,
 Հըպատակաց համար աշխարհ եկու նեղ :
 Եւ զի դաշտի երես լեռնացած էր յոյժ ,
 Վերաւորեալք կեանքի չունէին այլ ժոյժ :
 Հուսկ ապա մի թուխ ամպ կանգնեցաւ վերեւ ,
 Որ այլ ամէն ճիգ ջանք հանեց ի գերեւ :

Մի փոթորիկ փըրթաւ անգնածըխոր ,
 Սարսափով համակեց սըրտերըն ի խոր :
 Տատանեցան լերինք , պատուեցան դաշտեր ,
 Դըղըրդին բարձրացաւ քան զեթեր ի վեր :
 Զարհուրեցաւ բանակն Արտաւանի՝ սպառ ,
 Գոչեցին մի բերան եւ միաբարբառ
 Թէ այս հողմ յերկնից է մեզ համար փորձանք ,
 Ա՛լ այս բանակին վրայ պէտք է լանք ողբանք :
 Եւ այն օրն որ սաստիկ էր ջարդն ու խաթար ,
 Խելքի մարդիկ համայն խընդրեցին դադար :
 Թուաւ ամբոխին մէջէն Արտաչիր Դարբար ,
 Լըսուեցաւ շտաչիւն նետից ի տարափ ,
 Խըռան մէջ ձեռք ինկաւ Արտաւան անոյժ ,
 Թագի համար տըւաւ իւր հոգին անոյժ ,
 Մարդու մը ձեռամբ որ Խորրատ էր անուն ,
 Որ տարաւ քաշելով լըկամը ձիուն :
 Կանգնեցուց առաջի Արքայի զգերի ,
 Արտաչիր զայն տեսաւ երբ շատ էր հեռի :
 Փութապէս Արտաւան ձիէն իջաւ վար ,
 Մարմինը ծակծրկած , հոգին մութ խաւար :
 Դըժխեմին(1) ակնարկեց Արտաչիր Արքայ —
 « Ընդ առաջ ե՛լ , անա թշնամին կուգայ ,
 Զա՛րկ դաշտնը , կըտրէ՛ մէջքէն անխուսափ ,
 Թող վատախոհներուն սիրտն իյնայ սարսափ : »
 Դահիճը կատարեց շուտ հըրամանն այդ ,
 Եղաւ վաղ աշխարհէ անուանին անյայտ :
 Այսպէս է հինաւուրց մեր այս անուոյ խաղ ,
 Այսօր Արտաւանի եւ Արտաչրի վաղ :
 Այն որ մինչև յաստեղս բարձրացուց այսօր ,
 Վաղն ի հող ի փոշի կայ թաւալզլըրոր :
 Բըռնըւեցան երկուքն յորդուց այնգունակ
 Որ ազգատոհմն Արշայ մնաց անփառունակ :
 Երկուքին ալ պընդեց ոտքերն ի կոճեղ ,
 Եւ ուղարկեց ի բանտ թագաւորն անեղ :
 Միւս երկու մեծ որդիք փախան վաղ արդէն ,
 Զերծան վրասնգներու անել թակարդէն :
 Հընդկաստանի ճամբան ձեռք առին լալով ,
 Կ'արծէ ասոնք ուրոյն պատմել խընամով :
 Թարգւլ. ՏՐ. Յ. ԹԻՐԵԱՒԵԱՆ



(1) Դահիճին « դժխեմ » ալ կ'ըսուի :

Ճ Ա Փ Ո Ն Ը

(Շար. եւ վերջ)

Թէ՛ Ֆրանսայի եւ Թէ՛ Ճափոնի մէջ, յեղափոխութիւնը գահավէժ պայթում մը ունեցաւ՝ օտար միջամտութեան հետեւանքով . 1853ին ամերիկեան նաւատորմին գալուստը ունեցաւ այն ազդեցութիւնը զոր ունեցած էր Պրուսիայի յայտագիրը 1712ին : Քոստ տարի շարունակ Ճափոնացի յեղափոխականները եւրոպական պետութեանց դէմ պատերազմ պահանջեցին , բայց անոնց ամենէն ուշիմները շուտով ըմբռնեցին Թէ բաղձացուած բարենորոգումները չը պիտի կրնային իրադրծել առանց Եւրոպայէն եւ իր հաստատութիւններէն ներշնչուելու , եւ ամբողջ ժողովուրդը վերջ ի վերջոյ յարեցաւ անոնց տեսութեանց եւ առաջուց ընդունեցաւ ստոնց բոլոր հետեւանքները(1) :

Իրենց ցեղային ծագումը , իրենց երկիրը , իրենց պատմութիւնը՝ բարդ նկարագիր մը տուած են Ճափոնացուց :

Հայրենասիրութիւնը անոր ամենէն ցայտուն գիծն է : Ի ծնէ արուեստագէտ , կը սիրեն նախ իրենց երկիրը՝ իր գեղեցկութեանը համար . շնորհիւ հողին հրաբխային բնույթին , բուսականութեան ճոխութեան , հան կը գտնուի մեծ պէսպիսութիւն մը ձեւերու եւ գոյներու , եւ Քուրոչիվոյի գոյացուցած մշուշները , որ , առարկաներու մէկ մասը սքողելով , միւսները աւելի որոշ , կարծես աւելի մօտիկցած , ցոյց կուտան ,

(1) 1867ին է որ տեղի ունեցաւ Ճափոնական յեղափոխութիւնը , որու հետեւանքով ի գահ բարձրացաւ Մուցուհիլեօ մի բառօն , որ իր անկեղծ սահմանադրականութեամբ եւ յառաջդիմասիրութեամբ լիովին իրագործեց յոյսը զոր իր վրայ դրաւ բարենորոգիչ կուսակցութիւնը . հռչակեց կրօններու ազատութիւնը , վարչական սիստեմը եւրոպականին վրայ ձեւեց ծաղտոններու ժառանգականութիւնը գաղութացուց , Սոյլ տալու որ ո եւ է Ճափոնի իր արժանիքով կարեւոր ամենէն բարձր պաշտօններուն հասնել . 1885ին կազմեց նախարարաց խորհուրդ մը՝ որուն գլուխը կը գտնուի նախարարապետ մը , եւ որ իրեն աշակից ունի խորհրդականներու ժողով մը . 1890ին հիմնեց ճափոնական խորհրդարանը , եւ առաւ՝ այսպէս՝ իր ժողովրդին այն լուսամբու ուղղութիւնը որու շնորհիւ ան կը ներկայանայ՝ այս պահուստ՝ իբր մեծագոյն քաղաքակրթ եւ հզօր ազգերէն մին աշխարհիս :

այդ ձեւերն ու գոյները քնքոյշ բանաստեղծականութեամբ մը կը համակին : Հոս , ներքին Մովսէ է որ , իր կապոյտ երինաւորումներով եւ իր եզերքներուն չըջագծելովը՝ Յունաստանի ծովերը կը յիշեցնէ . լեռներն ու կղզիները՝ « եղեւիններով հագուած » , ճունկաներուն կարմիր առագաստները « որ աշնան տերեւներու կը նմանին » , առաւօտը որ անհաւասար մառախուղին մէջ « երկինքը կը ձերմիցնէ , Թեթեալի կը կարմրցնէ լեռներու գիծը , որմէ կը կախուին շառագոյն բարակ ամպեր » , չըվէժները որոնք պաշարուած են պրիսմակներով շերտաւորուած ամպերով , այդ գոլորշաւոր խորքերը որ գարիւէ ի վէր նկարիչներուն հրճուանքն են : Հոն , Ֆուժին , խորհրդանշանը հայրենիքին , զոր հին հեղինակ մը « արուեստին զանձը եւ Ճափոնի պաշտպան աստուածը » կը կոչէ . գրագէտները չեն դադար գայր նկարագրելէ , փորագրիչները՝ զայն իր բոլոր երեւոյթներով պատկերացնելէ , — ձիւնապատ , եւ առտուան վարդերով փափկօրէն շոյուած , լուսնի լոյսով , մառախուղի մէջ , ամպերով պաշարուած , անձրեւով գծաւորուած , կայծակով ճեղքուած . ան կ'երեւայ՝ գետ մը եզերող կղզիներուն վերեւ , պամպուկներուն մէջտեղը , առագաստի մը կամ ուռկանի մը ետեւ , սարդի ոտտայնի մը ետեւ , « իր պատկերը դիտելով » ծովուն մէջ որ զայն հազիւ Թէ կը խորշումէ :

Ճափոնացիք կը սիրեն իրենց ծառերը : Ամբողջ տարին կ'ախորժին կորսուելի չոճի անտառներուն մէջ , հսկայ « քրեփթումիրիաններով եզերուած ճամբաներէն քալել : Գարնան , խըմբովին կ'երթան այն պարտէզները ուր պտղատու ծառեր կը մշակեն՝ իրենց ծաղիկներուն համար :

Սալորենիին ծաղիկն է (ումե) որ կ'աւետէ գարնան գալուստը . զայն կը բաղդատեն կնոջ ներքնամտի ու փափուկ առաքինութեանց .

« Ձիւնին տակ , լուսնի լոյսով , ի՞նչպէս որոշել սալորենիի ծաղիկները : Իրենց հոտէն՝ առաջնորդուելով : »

Կամ ,
« Ո՞վ կրնայ ըսել Թէ ի՞նչ է այսօր մարդու սիրտը : Բայց ո՞վ սալորենիի ծաղիկները մեր հայրենիքին , զուր միշտ նոյն անուշահոտութիւնը պիտի ունենար : »

Սալորենիի ծաղիկներուն կը յաջորդեն կե-
ռասենիի ծաղիկները (սաֆուրա) .

« Արդէն , կեռասենիի ծաղիկները : Ոչ ,
ճերմակ ամպերը՝ լերան կողերն ի վար :

« Ի՞նչը պաշարող ծառայաւոր լերանց զառի-
թափին վրայ , կեռասենիները ծաղկած են .
բլուրներուն շուրջը սողացող մառախուղները
թող չբարձրանան ու չծածկեն զանոնք մեր աչ-
քէն : »

Ճափոնց՝ը ուրիշ ուխտագնացութիւն մըն
ալ կը կատարեն « վեսթարիա »ի (Ֆուժի) պար-
տէզները . պատաստուկ տունկ մըն է , որ մեր
ճենողկուզուկները կը յիշեցնէ , բայց 20-30
մեթր բարձրութեամբ ոստերով ու մանուշակա-
գոյն , կապոյտ կամ գորշ-ճերմակ ծաղիկներու
ողկոյզներով :

Աշունը Ճափոնի երկրորդ զմայլելի եղանակն
է . քրիզանթէմները (ֆիֆու) կը ծաղկին , եւ
ծառերը հրաշալի կերպով կ'երփնաւորուին ,
մանաւանդ գըլքիները (մոնիթի) , որոնց տերեւ-
ները Ճափոնացիք կը բաղդատեն ճամկաւոր դի-
պակներու , արիւնի , չինական մելանի ազուր
ծիրանեկառ թոյրերուն , ինչպէս եւ հաժին ,
որ սա սիրուն տողերը ներշնչած է .

« Ո՛ւրկից կը ծնին ցօղի կաթիլները որ հա-
ծիէն կը թափին : Անշուշտ աչքերէն եղջերուին
որ ողբագին կը գոչէ : »

Ճափոնացիք կը սիրեն թռչունները ինչպէս
ծաղիկները . հարիւր ձեւով կը նկարեն ու կ'եր-
գեն վայրի սագերը որ աշնան երկնքի մը մէջ
կը փախչին , կոնչող ագռաւները , կռուկները ,
ջուրի հասերը , բայց մասնաւորապէս երգող
թռչուններն է որ կը սիրեն . կը սխալին անոնք
որ կը կարծեն թէ Ճափոնը այն երկիրն է ուր
թռչունները անդայլայլ ու ծաղիկները անբոյր
են : Ոչ մէկ բուրում աւելի փափուկ է քան
սալորենիին . ոչ մէկ երչ կը հաւասարի եւս-
մապարօին՝ Ճափոնական տղաւնիին՝ վուվուին ,
եւ ուկուիզուին մելամաղձիկ նօթերուն : Նոյն
խակ կկուին (հօրօթօթիզու) ճիշդ ամմնագողտրիկ
է Ճափոնի մէջ :

« Գիշեր է , կ'ըսէ հին բանաստեղծ մը , եւ
քունս չի տանիր : Ծիչ մը՝ յա՛նկարծ : Լերան
կկո՛ւն է : Ան ալ սիրոյ տէր է , եւ անքուն կը
մնայ : »

Իրենց երկրին համար այս խանդոտ հիացումը

Ճափոնացուց տուած է զուարթութիւնը , ապ-
րելու հրճուանքը . ջղուտ , քաջասիրտ ու խրոխտ
են , եւ իրենց ուժգնութիւնները կը յիշեցնեն
իրենց երկրին բնութեան յանկարծական ցնցում-
ները , երկրաշարժները , թիֆոնները , ողողում-
ները . իսկ անոր հրապոյրն է որ կազմած է
իրենց մշտածիծաղ անհոգութիւնը . մերթ նոյն
խակ կը թուին խոշոր տղաք՝ խաղալու սիրա-
հար , քիչ մը ծոյլ , աւելորդապաշտ եւ ամօթ-
խածութեան պայմանադրութեանց համար քիչ
հոգածու : Իրենց հայրենասիրութիւնը զիրենք
կը համոզէ թէ կարելի չէ դժբաղդ ըլլալ այդ-
քան գեղեցիկ երկրի մը մէջ . թէ այդ ցեղը՝
որուն այդպիսի նուէր մը բրած են աստուած-
ները՝ առանձնաշնորհեալ ցեղ մըն է , թէ այդ
ցեղն ինքն իսկ աստուածային է , մարմնով ու
սրտով առողջ , ուղղամիտ , բնազդով զիտակից
բարիին եւ ճշմարտութեան . եւսմարքո սուրաշիին ,
ճափոնական ողին , առաքինութեանց հոմանիշ
զարձած է :

« Գերերջանի՛կ կղզիներ , կը գոչէ բանաս-
տեղծը , եթէ երբեք օտարները ջանան ձեր ճա-
փոնական ողիին թափանցել , պատասխանեցէք .
« Առտուան պայծառ օդը անուշ հոտով կը լեց-
ուի . վայրի կեռասենիին անմասն հո՛տն է : »

Կեռասենիին ծաղիկը ճափոնական հոգիին
խորհրդանշանն է :

Հայրենասիրութեան հետ սերասօրէն կը կապ-
ուի նախահայրերու պաշտամունքը : Ճափոնա-
ցիք իրենց հայրենիքը միայն իր գեղեցկութեանը
համար չէ որ կը սիրեն . զայն կը սիրեն իբրեւ
այն երկիրը ուր իրենց պապերն ապրած են ,
ուր իրենց պապերը դեռ կ'ապրին : Մեռելներու
ողիները (ֆաւի) Ճափոնի աստուածներն իսկ են .
Ամաթերագու , ծագող արեւու աստուածուհին ,
դշխոն ու պաշտպանուհին , մեծ մայրն է Մի-
քատօին , որ գէնիկա կը ներկայացնէ աշխար-
հին վրայ . ուստի եւ մեռելոց պաշտամունքն ու
հայրենասիրութիւնը նախ կը պահանջին սնն-
նուերութիւն դէպ ի կայսրը : Ինչպէս հին բա-
նաստեղծները , այսօրուան հեղինակներն ալ
այս վարդապետութիւնը կը քարոզեն : Սահմա-
նադրութեան նուիրած իր մեկնաբանութեան
մէջ , Իթօ մարքիզը սապէս կը բացատրէ .

« Նուիրական Գահը հաստատուեցաւ այն
ժամանակէն՝ երբ երկինքը զտուեցաւ երկրէս :

կայսրը երկնքի որդին է . աստուածային է , նուիրական է . Ամենքը պարտին զայն պատուել . անբռնարարելի է ան . նուիրական Գահուն շքեղութիւնը շարունակուած է վեհապետներու անընդհատական յաջորդութեամբ մը . Ճափոնը միշտ միա՛կ Հարստութիւն մը ունեցած է՝ անբռնարարելի , ինչպէս երկնքին ու երկրին . մինչեւ վերջը , Ճափոնի կայսրութիւնը նոյնացած պիտի մնայ կայսերական ընտանիքին հետ»

Ահա ինչու Սահմանադրութեան երզում ընելու համար , կայսրը իր աստուածային նախահայրերուն միայն ուղղեց իր խօսքը . անոնց հանդէպ յանձնառու եղաւ պահպանել կառավարական սկզբունքները զոր անոնք հաստատած էին , յետոյ՝ յայտարարելով թէ նոր ժամանակները միեւնոյն սկզբունքներուն տարբեր կիրարկութիւն մը կը պահանջէին , երզունքաւ համակերպիլ այն օրէնքներուն զոր ինքն իսկ կուտար :

Ինչպէս որ կայսրը արեւու զիցուհիւն կը սերի , մեծ գերզաստաններու պետերը կը սերին կա՛մ բնական աստուածութիւններէ եւ կա՛մ նշանաւոր պատերազմիկներէ որոնք , իրենց մահուընէն յետոյ , երկրին պաշտպան աստուածներն են դարձած . աւատական պատերազմներու ինչպէս եւ վերջին պատերազմներու հերոսները իրենց սրբավայրերն ունին :

Վերջապէս , բոլոր մեռելներու ոգիները բընութեան մէջ միշտ կ'ապրին , տեղատուութիւններն ու գետակները կը վարեն , արտերը կը բեղմնաւորեն , ամենուրեք ծաղիկ ու բուրում կը սփռեն : Մասնաւոր նախանձախնդրութեամբ՝ կը հսկեն իրենցմէ սերած մարդոց բնակարանին վրայ : Ամէն տան մէջ կայ երկու բագին , մին նուիրուած է աստուածներուն , միւսը կը կրէ ինսիները , տախտակները ուր փորագրուած են նախահայրերու անունները : Տորքան այդ պաշտամունքը հաւատարմօրէն կը պահպանուի , նախահայրերը՝ աներեւոյթ՝ միշտ պիտի բնակին տանը մէջ՝ իրենց որդիներուն օգնելու , զանոնք պաշտպանելու կամ մխիթարելու համար :

Մեռելներու այս պաշտումը , շինքօն , կը բացատրէ նաեւ աւանդութեան յարգանքը : Եթէ թօքիօ իր պալատներն ու նախարարատուններն ունի , Օզաքա՝ իր գործարանները , Գոպէ եւ Եոքոհամա՝ իրենց նաւահանգիստը ուր նաւերը

ապրանք կ'ընդունին . եթէ պաշտօնատարներն ու սպաները եւ արքունիքի տիկիները եւրոպական ձեւով կը հագուին , Ճափոնացւոց մեծ մասը դեռ թղթէ միջնորմերով փոքրիկ տուներու մէջ կ'ապրի , դիւրակեցիկ մարդիկը դեռ կապոյտ պատմուճանք կը կրեն , գործաւորներն ու գեղջուկները՝ անզրավարախօն ու պլուզը՝ Եւ հագուստ-կապուստէն ու բարբերէն աւելի , ժողովրդին երբեմնի զգացումները մնացած են :

Ճափոնացւոց պաշտամունքը ընտանիքի համար՝ Ժ.Է. դարէն սկսեալ աւելի զօրացած է Գոնֆուչիոսի բարոյականին ներմուծմամբ : Այդ բարոյականը նահապետական է : Մարդու առաջին պարտականութիւնն (ըստ այդ բարոյականի) ամուսնանալն է եւ ունենալ որդիներ որ զոհարեցութիւններ կատարեն ի պատիւ մեռելներուն . եթէ չկարենայ որդի մ'ունենալ , պէտք է հատ մը որդեգրէ : Երկրորդ պարտականութիւնը՝ իր ծնողաց քով մնալն է . վաթսուն տարեկանին հասնելէն յետոյ , ասոնք այլ եւս չեն աշխատի , իրենց զաւակները պարտաւոր են զանոնք մնուցանել եւ հաճելի ծերութիւն մը պատրաստել անոնց : Ամուսնացած աղջիկը այլ եւս իր ծնողաց դուստրը չի նկատուիր , այլ իր ամուսնոյն ծնողաց դուստրը . շատ Ճափոնացիք ստիպուած կ'ըլլան զատուիլ իրենց սիրած կընոջմէն՝ որովհետեւ իրենց մայրը զէնիկա քիչ ուշադիր կամ քիչ հնազանդ կը գտնէ : Զինաստանի սուրբերը որդիական սիրոյ հերոսներն են : Ճափոնը կը պատուէ զանոնք . բայց ունի իր ուրոյն սուրբերը , որոնց կեանքը աւելի սրբտաշարժ է : Աղջիկ մը կը խնդրէ աստուածներէն որ իր հիւանդ հայրը առողջացնէ . իր հօրը կեանքին փոխարէն իր կեանքը տալ կը խոստանայ . իսկոյն , հակառակ որ գիշեր է , հազարաւոր թռչուններ տունը կը պաշարին եւ կը սկսին երգել . երեք նոր աստղեր կը փայլին երկնքին մէջ , աւելի պայծառ քան լուսինը : Քիչ յետոյ , լոյսը կը բացուի , հայրը հրաշքով բժշկուած է . այդ դիւզը պիտի կոչուի Որդիական Սիրոյ Սրբավայրը :

Նահապետականութեան չինական յղացումը կը տարածուի նաեւ կառավարութեան . հպատակները զաւակներն են , նախարարները՝ անդրանիկ եղբայրները , վեհապետը՝ հայրն ու մայրը : Ժ.Ը. դարէն ի վեր , միքատօն այլ եւս

իրը միմիայն Ամաթերազուի շառաւիղն ու քահանայապետը չ'երևար . Թեևնօն է միանգամայն , քոնֆուչիականութեան նահապետական կայսրը , ներկայացուցիչը երկնքին ու երկրին , որոնք մարդուն հետ կը կազմեն աշխարհի մեծ ընտանիքը , չինական փիլիսոփայութեան երրորդութիւնը :

Քոնֆուչիականութեան հետ, Չինաստանը ճափոնացոց աւանդից եւ Պուտտայականութիւնը : Հակառակ իրենց անհոգութեան ու պատերազմասէր բնաւորութեան, ասոնք ընդգրկեցին անոր վարդապետութիւնը որ մարդոց եւ անասուններու նկատմամբ քաղցրութիւն ու գթութիւն կը քարոզէ . անոր միստիքական հրապոյրն ալ ճաշակեցին . ճափոնը ծածկուեցաւ մեհեաններով ու վանքերով . հազիւ չափահաս եղած կայսրեր , շոկուներ , նախարարներ ու գորավարներ կը քաշուէին , վանականի զգեստ հագնելու համար . աստուածարանական գրքեր կը գրէին , ինքզինքնին կը շարչարէին , ժամեր կ'անցընէին յափշտակութեան մէջ երազելով Ամիտային , սիրոյ պուտտային , եւ իր Արեւմուտքի դրախտին : Երկիրքը ոսկեղէն է այնտեղ . ամպերը, որոնցմէ կը ծաւալի քաղցր երաժշտութիւն մը , ծաղկանց անձրեւ մը կը հոսեցնեն . կանտահարվաներու (հրէշտակ) դասեր , կը ծածանին այդ ամպերուն վրայ , իրենց գեղեցիկ ընկերուհիներուն՝ Ափսարաներուն հետ : Գետեր , որոնց ջուրը ոսկի աւազի վրայ կը սահի , զմրուխտէ վարդեր կը թանան եւ անտաններ որոնց ոսկի կոճղերը թանկագին քարերով կազմուած տերեւներ ունին : Այդ գետերուն ափանց վրայ , կը սահին արդարները , որոնց մորթը՝ ոսկեզօծ ինչպէս պուտտաներունը , լոյս կը սփռէ . ամենափոքր բաղձանքը որ անոնց մտքէն կ'անցնի , իսկոյն իրականութեան կը փոխուի :

Սակայն պուտտայականութեան միստիքական ձգտումները ճափոնացոց վրայ նուազ ազդեցին քան անոր յուսահատ մեղամաղձութիւնը : Կրքոտ են ու բուռն , բայց շուտով կը գանին գործունէութենէ , եւ այն ատեն յօժարակամ կը խոկան մարդկային իրերու ունայնութեան վրայ :

Իրենց վանքերուն մէջ , իշխանները զեղարուեստական առարկաներով զիրենք կը պաշարէին . միքտաս մը մինչև . իսկ բլուր մը ամբողջապէս ճերմակ մետաքսով պատել աւուտ . ամառ ատեն ձմեռուան քաղցր սպաւորութիւն մ' ունենալու համար : Գրահմո տ վանականները իրենց յոսե-



ԲՆԱՆԿԱՐ (Հոֆուգաի)
(Քիշիշե Revue Universelle)

տեսութեան մէջ տեսակ մը նեշտութիւն կը գտնէին :

Ահա մէկ տալը շատ հին բանաստեղծի մը .
« Յորմեհեաէ երկիրը երկիր է եւ երկիրքը երկինք , մարդիկ չեն դադրած տրտնջալէ՝ ոչինչ կրնայ տեսել այս կեանքին մէջ : Նայի՛նք երկինքը . ահա լուսինը . կը ծնի , կը մեծնայ , նուազելու եւ անհետանալու համար : Գարունը բլուրները ծաղիկներով կը ծածկէ . գիշերուան ցօղէն սառած , ուրականէն փրցուած , աշնան տերեւներն ընդհուպ գետինը կը փառլին : Այդ-

պէս եւ մարդը , այտերը շուտով կը դեղնին , սեւ մազերը շուտով կը ճերմկին . իրիկուան ստուերներուն մէջ ի զուր կը փնտռէք թարմ ժպիտը առաւօտին : Եւ ես որ կը դիտեմ այս աշխարհն ուր ամէն բան կը մեռնի , արյունքներս կը հոսին , կը հոսին անզաղար , որովհետեւ ամէն բան գետի պէս խոսափուկ է ու հովի պէս աներեւոյթ :

Եւ ահա էջ մը Հօծոփէն , որ ԺԲ. դարու վանականի մը նշանաւոր մէկ զիրքն է .

« Առտուն՝ լոյսը կը դիտենք , իրիկուան՝ արդէն գացած ենք այն բնակարանը ուր մարդ երկա՛ր կը մնայ : Մեր ճակատապարհը կը նմանի ծովու փրփուրին : Ո՛ւսկից կուզանք . ո՛ւր կ'երթանք : Այս աշխարհին մէջ ուր ոչինչ իրական է , կա՞ն միթէ բաներ որ կարենան իսկապէս մեզի ուրախութիւն կամ վիշտ պատճառել : Մեր սուներէն մին՝ իր բնակիչներովը որ միշտ կը փոխուին , ցօղով սքողուած առաւօտին փառքը չէ՞ միթէ : Մերթ ցօղը կը շոգիանայ , եւ ծաղիկը կը սպաննուի տուրն՝ հան առաջին շողիւններէն . մերթ ալ՝ ընդհակառակն՝ ցօղը ծաղկէն աւելի կ'ապրի . բայց քանի մը ժա՛մ միայն , իրիկունէն շատ առաջ , ցօղն անհետացած է արդէն : »

Այսօր , պուտտայականութիւնը արհամարհուած է ուսեալ մարդոցմէ , թէպէտեւ իր ազդեցութիւնը զեռ չէ կորանցուցած ժողովրդին վրայ . բայց անոնք իսկ որ զայն կը դատապարտեն՝ անոր ծոյլ մեղամաղձութեանը չեն դիմանար : Եթէ շիւնքօն կը քարոզէ չվախնալ մահէն , պուտտայականութիւնը կը քարոզէ արհամարհել կեանքը , եւ տարիքն առած ճափոնացին , որուն վրայ իր զաւակները պէտք է հսկեն , տեսակ մը հեշտութիւն կը զգայ կեանքի տաղտուկներուն վրայ մտածելով , այն ոգւով որ ըսել կուտար Ովրատիոսին՝ « Անոր համար որ , ափունքին վրայ , վախնալու սրտճառ չունի , քաղցր է ծովուն որտու՛մը լսել : »

Միջին դարուն , նոր դասակարգ մը կազմուեցաւ , զինուորական ազնուականներու , սաւառարաններու դասակարգը . ատոնք այսօր շիզոֆրէ կը կոչուին : Աւտտական բարքերը սամուրախներուն մօտ զարգայուցին ասպետական առաքինութիւնները , քաջասրտութիւնը , պա-

տերազմի սէրը , անձնուիրութիւնը զիպ ի պեան ու զինակիցները , տկարը պաշտպանելու մտահոգութիւնը , պատուոյ զգացումը՝ մերթ մինչեւ հիւանդոտ դիւրագրգութիւն տարուած ու մերթ մինչեւ վայրագութիւն : Ժէ. դարուն , ասպետական առաքինութեանց օրինագիրքը խառնուեցաւ բոլորովին տարբեր նկարագիր ունեցող բարոյականի մը հետ , այն իսկ զոր Ժ. եւ ԺԱ. դարու չինացի մեծ փիլիսոփաները քաղած էին Քոնֆուչիոսի պատուէրներէն : Այդ ճուլումէն ծնուաւ պուշիսօն , բառ մը որ կը նշանակէ՝ զինուորական ազնուականութեան վարմունքի սկզբունքներ (սյո՛ւ՝ ազնուական , վինուորական , շիսօ՛՝ գերագոյն առաքինութիւն) : Այս սկզբունքները այնքան նուիրական են Ճափոնացւոց համար որ լաւագոյն նոր հեղինակները չեն քաջուիր պուշիսօն Ճափոնի միակ կրօնքն անուանելու :

Որքան ալ ճիշդ է թէ Ճափոնացւոց ասպետական առաքինութիւնները աւելի բնագոյի ծրնունդ են քան վարդապետութեանց , պուշիսօսի տեսակէտները կը նկրտին , չինացի փիլիսոփաներուն պէս , ամբողջ բարոյականը բանականութեան վրայ հիմնելու : Իրենց համար բանականութիւնը նախ եւ առաջ իմացականութեան նուիրական առաջնորդն է :

« Եթէ բանականութիւնը երկնքէն կ'իջնէ , կ'ըսէ անոնցմէ մին , միմիայն մեր մէջ է որ կը գտնենք զայն , եւ այս սիրուն գիւտը կը գերագանցէ իրմէ առաջ եղած ամէն փորձարկութիւն , ինչպէս որ հարիւր անգամ աւելի կը սիրենք բարեկամ մը երբ կ'իմանանք որ ան մեր կ'որոտած եղբայրը կամ հայրն է : »

Բանականութիւնը նամանաւանդ զրգիչն է բոլոր գործողութեանց :

« Ապահովապէս , կը գրէ Քիսպօ՝ ԺԸ. դարուն , պէտք է որ ճանչնանք օրէնքները եւ՝ աւտոր համար՝ կարգանք դասականները , ինտուսուսներու ճանապարհը , բայց յետոյ պէտք է այդ օրէնքները կիրարկենք մեր վարմունքին մէջ : Ինտուսուսներու ճանապարհը ուրիշ բան չէ բայց եթէ ամենօրեայ կեանքը , ուղղամտութիւնը , հնազանդութիւնը , բարեկամութիւնը : Մեր շարժումներէն ամէն մէկը , ի՞նչ կ'ըսեմ՝ նոյն իսկ հանգիստը՝ իր պարտականութիւններն ունի : »

Բացատրելու համար թէ ինչո՛ւ բանական-

նութիւնը կարող է այսպէս մեր մտաւոր ու բարոյական առաջնորդն ըլլալ, ճափոնացիք Մենչիոս Չինացի փիլիսոփային վարդապետութեան վրայ կը կրթընին. ասիկա որոշապէս կը քարոզէ թէ մարգս ի բնէ բարի է եւ չար կը դառնայ այն ատեն միայն երբ յոռի կառավարութեամբ մը իր բնութիւնը բռնաբարուի. այս վարդապետութիւնը, որ Ռուսօի էմիլիինն է, առաջնորդեց ճափոնացի յեղափոխականները, ինչպէս եւ ֆրանսացի յեղափոխականները, այն գաղափարին թէ պէտք է հիմնել կառավարութիւն մը որուն բոլոր հաստատութիւնները փիլիսոփայական սկզբունքներէ ներշնչուին:

Բանավարականութիւնը, ինչպէս ճափոնացիք զայն կը հասկնան, իր մէջ ունի արհամարհանք ո եւ է գերբնական օգնութեան համար: Քոնֆուչիոս արդէն ըսած էր. « Երբ երկիրքը կը պատժէ, այլ եւս աղօթքի տեղ չի մնալ ». աւելի յանդուգն, սամուրախները ամէն կրօնք կը դատապարտեն, բաց ի շին-թօն, նկատուած՝ իբրեւ պաշտամունքը կայսեր եւ հայրենիքին: ԺԸ. դարուն, եթէ գեռ չէին համարձակեր ուրանալ աստուածներուն ու դեւերուն զօրութիւնը, ձեռքերնին սուրբնուն կը տանէին ու կը սպաննային անոնց. իսկոյն՝ գեւերը կծիկը կը դնէին ու աստուածները ներողութիւն կը խնդրէին՝ եթէ խոստմնազանց էին եղած զիրենք ոգող կանանց եւ սղայոց:

Մարդ իր վարմունքին համար միմիայն ինքզինքին հաշիւ տալ պարտական է: Եթէ ունի գիտակցութիւնը բարւոյն եւ չարին (քենշի-սիսն), եթէ իր յանցանքները զինքը ամօթով կը ձգեն երկնքին հանդէպ (թէն-իւ-հաժիրու) [ասիկա՝ Քոնֆուչիոսի անանձնական երկիրն է] եւ ամօթով՝ ինքզինքին հանդէպ, սամուրախ կը քննէ իր վարքը այն խղճամիտ անձկութեամբ զոր Նիցչէ « ինքզինքին նկատմամբ անգթութիւն » կ'անուանէր. Նախ՝ իր մէջ ոչինչ կրնայ հանդուրժել որ վատութեան մը նմանի. ֆիզիքական կամ բարոյական ո եւ է տառապանք պէտք չէ որ իրմէ ցաւի ձիւ մը խլէ: Աւատական ըծիմիսն ատեն, բոլոր մանուկները կը վարժուէին տաժանելի ու վտանգաւոր հրահանգներուն, ձիւնին մէջ բոպիկ կը քալէին կամ ամառուան մեծ տաքերուն կը վազէին:

Ինքնավարութեան այս սիստեմը ժիւոժիցուն է. մինչեւ ցարդ կը կիրարկեն զայն, բայց հրապարակաւ, ու բոլոր զպրօցներուն մէջ. անհետացած են այն ճեմարանները ուր ժառանգական վարպետներ զնուառի ազնուականներուն կ'ուսուցանէին ըմբշամարտութեան ու զինավարժութեան գաղտնի գիտութիւնը: Ով որ իր ֆիզիքական տկարութիւնը կը մատնէ, անպատուած կը նկատէ ինքզինքը: Չինաստանի դէմ պատերազմի միջոցին, սպայ մը պարտաւորեցաւ իր դասակը առաջնորդել Փորթ-Արթիւրի վրայ յարձակման. թանչքէ կիսամեռ, կը նետուի կրակին մէջ. ու մաթափ կ'ըլլայ, ու մարած կ'իյնայ: Հիւանդանոց կը սանին զինքը. հազիւ թէ ինքզինքը քիչ մը նուազ տկար կը զգայ, գիշեր մը կը փախչի ու ինքզինքը կը սպաննէ այն տեղն ուր ինկած էր. վրայէն սա նամակը կը գտնեն. « Հոս է որ հիւանդութիւնը զիս ստիպեց կանգ առնելու եւ ձգելու որ իմ մարդիկս առանց ինծի կրակին մէջ նետուին: Կեանքիս ոչ մէկ արարքը չի կրնար այս ամօթը սրբել. մաշը միայն կրնայ պատիւս ինծի վերադարձնել: Նամակս թող որոշու մտացատրէ: »

Եւ ինչպէս մարմինը կը « վարժեցնեն », այնպէս ալ հոգին. բոլոր կրքերը, բոլոր ուրախութիւնները, բոլոր ցաւերը պէտք է որ ծածկուին ժպիտին տակ, ճափոնական այդ համբաւաւոր ժպիտին որ այնքան խորհրդաւոր երեւցաւ Եւրոպացւոց: Միեւնոյն ստոյիկութիւնը ունենալ պարտաւոր են կրնելը. սիրով կը յիշեն օրինակն այն տոհմիկ կնոջ որ, իր աղջկան խողխողուելը տեսնելով, սա երկտողեանը (ուքա) յօրինեց,

« Մամուռները որ լքուած հորին խորը կ'աճին՝ մերթ ինքզինքնին կը մատնեն ու իրենց դաւարիքը ցոյց կուտան օտարականին. երբեք մարդկային նայուածք մը պիտի չտեսնէ ինչ որ կը զգայ սիրոս: »

Բայց քաջութիւնը ոչինչ է առանց այն բծախնդիր փափկանկատութեան որ ամենօրեայ կեանքի արարքներէն շատերը ասպետի մը համար չափազանց զձուձ ու ճղճիմ կը ցուցնէ, առանց պատուոյ այն խղճահարութեանց որ հին սամուրախները կը ստիպէին մինամարտելու կամ

անձնասպան ըլլալու. եթէ մենամտորը եւ զա-
տական հարախորին արգիլուած են այժմ, հին
ոգին չէ մեռած, եւ պատուոյ զգացումը մնա-
ցած է նոյնքան զիւրազգած սրբան տոհմով :

Պէտք չէ սակայն պուշխոսն նկատել իբր
եսական բարոյական մը. անոր մէջ կը տիրա-
պետէ Գոնֆուչիական ոգին, որ մարդը կը նկա-
տէ միմիայն իբրեւ անգամ ընտանիքի մը եւ
ընկերութեան : Ճափոնացի փիլիսոփաներուն
համար, սամուրաիի մը մասին աւելի մեծ գու-
վեստ կարելի չէ ընել բայց եթէ զայն կոչել
« ես չունեցող մարդ » :

Ատենով, սամուրաիի մը առջին պարտա-
կանութիւնն էր իր աւատական իշխանին, Տաի-
ւիօին ծառայել, զայն պաշտպանել, ի հարկին՝
անոր վրէժը լուծել. որովհետեւ հանի մը կամ
աւատական « քլան » ի մը բոլոր ազնուականները
մեծ ընտանիք մը կը ձեւացնէին որուն հայրն էր
տախմիօն, եւ այդ քաղաքական ազգականու-
թիւնը կը գերադասուէր բնական ազգականու-
թեանէն. Ժէ. դարուն, շոկուներ ստիպուեցաւ
որոշապէս արգիլել որ տախմիօի մը նախընտ-
րեալ սամուրաիները անոր գերեզմանին վրայ
փորերնին չձեղքեն այլ եւս : Աւատականու-
թեան ջնջումն ի վեր, կայսրը միակ տէրը ե-
ղած է բոլոր Ճափոնացւոց. իրենց փրատիրու-
թիւնը ասով աւելի աճած է. հայրենիքի պաշ-
տամունքը չի զանազանուիր կայսեր պաշտա-
մունքէն : Այս վերջին տարիներուն մէջ, շատ
մը չիզոքուններ ինքզինքնին սպաննուցին նամակ
մը ձգելով որուն մէջ շատ յարգալից կերպով
իրենց թոյլ կուտային Թէննոյն ուշադրութիւնը
հրախրել այն վասնգներուն վրայ զոր կ'ընծա-
յէին Ճափոնի համար Ռուսիոյ փառասէր դի-
սուսները : Երբ Չարեւիլը, այժմ Նիքոլա Բ.
կայսր, քիչ մնաց սպաննուէր՝ Ճափոնի մէջ՝
ոստիկանէ մը, դեռատի աղջիկ մը Թորթօէն
Քիոթօ գնաց եւ հոն ինքզինքն սպաննեց իր
արիւնին մէջ լուալու համար ամօթը զոր այդ
ոճիւրը իր հայրենիքին վրայ ցատքեցուցած էր
եւ ցուցընելու համար Թեննոյն թէ որքան ինքը
տառապած էր այն տհաճութեանէն զոր այդ ամօ-
թը իրեն պատճառած էր :

Իր պետէն յետոյ, սամուրաիի կը պաշտ-
պանէ իր ծնողքը, իր եղբայրները, իր բարե-

կամները, իր « քլան » ին անդամները (որովհե-
տեւ եթէ իրաւաբանապէս քլանները ջնջուած
են, պարտաւորութիւնները որ այդ քլաններու
անդամներն իրարու կը կապեն՝ դեռ կը մնան).
վերջապէս, բոլոր մարդոց ան պարտական է
է ցոյց տալ բարեսացականութիւն ու արդարու-
թիւն :

ԺԸ. դարու փիլիսոփայ մը սապէս կը բա-
ցատրէ .

« Երկնքի ու երկրի սիրաւ մարդուս սիրտը
կը դառնայ, Երկնքի սիրտը՝ ամէն բան արտադ-
րին է, եւ որովհետեւ երկնքի սիրտն է որ
մարդուս սիրտը կը դառնայ, մարդկային սրտին
առաքինութիւնը պիտի ըլլայ սիրել իր նման-
ները : »

Բարեացակամութեան սովորական ձեւը՝
քաղաքավարութիւնն է. ոչ մէկ ժողովուրդ
Ճափոնացւոց չափ առաջ տարած է ներքողա-
կան բանաձեւերու եւ ծաղկեալ ոճի արուեստը :


Բայց Գոնֆուչիականութիւնը ամէն բանէ
առաջ քաղաքական սիստեմ մըն է, եւ յորմե-
հետէ թոքուկավաները վերջ գրին աւատական
պատերազմներուն, սամուրաիներուն դերը եղաւ
տէրութիւնը կառավարել. այսօր ալ այդ է ի-
րենց դերը, որովհետեւ նախարարներու, սպա-
ներու, պաշտօնատարներու, ոստիկաններու,
նոյն իսկ ուսուցիչներու ամենամեծ մասը զին-
ւորական ազնուականութեան կը պատկանի :
Ինչ որ կը բնորոշէ հին կառավարութիւնը,
ինչ որ եւ նորը կը բնորոշէ, միշտ չինական
գաղափարն է նահապետական ընտանիքին՝ պատ-
ւոյ եւ հաւատարմութեան Ճափոնական գաղա-
փարներով :

Պուշխոսն նախ սամուրաիներու բարոյա-
կանը եղաւ. թատրոնն ու վէպը զայն տարա-
ծեցին ժողովրդին մէջ. Ճափոնացիք, որ նկար-
չութեան մէջ « արուեստ արուեստի համար »
տեսութիւնը կ'ընդունին, զայն բացէ ի բաց կը
գատապարտեն զրականութեան մէջ : Դարերէ
ի վեր, բարձր դասերը կ'արհամարհեն ժողովրդ-
ական տրամներն ու պատմուածքները, որոնք
սակայն տեսարանի վրայ միմիայն տախմիօներ
ու սամուրաիներ ցոյց կուտան. հոն ուրիշ բան
չի տեսնուիր բայց եթէ ճորտեր որ ինքզինքնին
կը զոհին իրենց պետին համար, ազնուազարմ

օրիորդներ որ կեանքերնին կուտան իրենց հօրը վրէժը լուծելու կամ իրենց պատիւը փրկելու համար :

Այս գրականութիւնը ժողովրդին մէջ արթնցուց զինուորական բարքերու եւ զգացմանց համար խանդոտ հիացում մը. Մինչեւ ժ.Ձ. դարը, գիւղացիները, որ ժողովրդին անհուն մեծամասնութիւնը կը կազմէին, ստրկութեան վիճակին էին ենթարկուած. սակաւթիւ վաճառականները որ կը գտնուէին Գիոթօ եւ Օգաքա, աւատական իշխաններուն կամքէն կախուած էին: ժ.Ձ. դարու խոզվութիւնները բոլոր ճորտերուն ազատագրումը յառաջ բերին, թէպէտեւ մինչեւ 1871 ճորտութեան շատ հետքեր դեռ մնացած էին. ատկից զատ, Օգաքայի, Գիոթօի եւ նոր հիմնուած Եսօի (Թոքիօ) վաճառականները խոշոր հարստութիւններ զիգեցին: Ամենքն ալ այնուհետեւ փառասիրութիւնն ունեցան սամուրախներու դասակարգին մէջ մտնելու. կարող էին՝ գնելով տիտղոսը, ստանալով կարգ մը հանրային պաշտօններ, կամ՝ աւելի պարզ կերպով՝ աղնուականի մը մօտ ծառայութեան մտնելով իբր զինուոր, մարտասոյց, որսաչանց վերակացու կամ բազէավարժ: Դարու հեղինակները կը գանգատին այն ձգտումէն զոր գիւղացիներն ունէին՝ հողը ձգելով զինուոր կամ սպասաւոր ըլլալու: Անոնք որ չէին կրնար սամուրախ ըլլալ՝ ընկերակցութիւններ կը հիմնէին, որոնց կանոնադրութիւնը պուշիտօն կը ներշնչուէր. այսպէս՝ Եսօի Օթօքօթաթէները, որոնք միեւնոյն արհեստը կը քանեցնէին եւ նոյն ազգեցութիւնն ունէին ինչ որ, այժմ, Գորէայի փերեզակները: Գիւղացիներն ու պուրժուանները կը ձգնէին սամուրախներու ձեւերը իւրացնելու, անոնց քաղաքավաճարութեանը հաւասարելու. իրաւունք չունենալով երկու թուր կրելու՝ ինչպէս սամուրախները, հոգի կուտային գէթ մէկ հատ մը կրելու եւ անոր գործածութեան արուեստը սորվելու. կը կատարէին անձնուիրութեան միեւնոյն արարքները, միեւնոյն վրէժխնդրութիւնները որոնց սովոր էին ասպետական վէպերու հերոսները:

Միեւնոյն խորխտութիւնն ունէին: Մուրացիկ մը, լեցուն քսակ մը գտած ըլլալով, զայն տիրոջը կը յանձնէ, որ կ'ուղէ վարձատրել: Բայց մուրացիկը գործը վերէն կը բռնէ: Նուէրի առջարկը անարգանք մըն է իրեն համար: Միւսը՝ խոնարհաբար՝ « Տուածս բրինձի օղի, սաֆի խմելու համար է միայն »: Մուրացիկը կ'ընդունի եւ այդ դրամէն ոչինչ իրեն չպահելու համար՝ խնջոյք մը կուտայ երկրին բոլոր ան-



ԲՆԱՆԿԱՐ (Հոֆուգաի)
(Բոյիշի Revue Universelle)

կուտիներուն: Սամարտղութեամբ կը սպաննէ ինքզինքը, ամչնալով իր հին արհեստը վերսկըսիլ՝ իշխանի հովեր առնելէ յետոյ: Գաջարտութիւն եւ խորխտութիւն՝ զոր կը քարոզէ պուշիտօն, անա յատկութիւններ, որ երկու դարու կիրարկումով մը, ճափոնացի գեղջուկը այսօրուան հերոսական ռազմիկին

փոխեցին . ինչպէս երբեմնի ազնուականները , իւրաքանչիւր զինուոր , իւրաքանչիւր « քուլի » ինքզինքը կայսեր համար մեռնելու պարտաւոր եւ հայրենիքի պատուոյն պատասխանատու կը զգայ :

Բայց պուշիտօին տարածումը ժողովուրդին մէջ , ուրիշ արդիւնքներ ալ յառաջ բերած է : ԺԹ. դարուն , վաճառականներն ու գիւղացիները , այնքան քաջ դարձած որքան սամուրաիները , նոյնքան հոգատար իրենց պատուոյն , սկսան ատել աւատական ընդդէմը որ զիրենք կը դատապարտէր նուաստացման եւ աղքատութեան : Անշուշտ , այն պատճառները որ յեղափոխութեան ծնունդ տուին՝ բարդ են , եւ պետերն ալ սամուրաիներ եղան . բայց ժողովուրդը ուրախութեամբ հետեւեցաւ անոնց . երբ կայսերական հրովարտակները ջնջեցին աւատական ընդդէմը , ան ամէն տեղ իր իրաւագուրկ տէրերուն ծառայեց միեւնոյն յարգանքով զոր ունէր առաջները . իրբ տախիօները անհետացան , մեծ հաճոյքով քանդեց ինչ որ հին օրերը կը յիշեցնէր , այնպէս որ հազիւ թէ քանի մը տախիօի զղեակ կարելի ըլլայ գտնել այժմ Ճափոնի մէջ . գրեթէ ամենուրեք սամուրաիներէն բնակուած թաղերը քարուքանդ են եղած :

Եթէ Պուշիտօն ճափոնացի ժողովուրդը զիւցազնական ժողովուրդի մը փոխեց , թոյլ չտրուաւ անոր իր վաճառականական ընդունակութիւններն ազատօրէն զարգացնել : Ճափոնացիք ընդգրկած չեն Չինացւոց բաժանումը չորս գասակարգի , գրահմուտներ կամ զինուորներ , հողագործներ , արհեստաւորներ , վաճառականներ : Բայց Չինաստանի մէջ որ խաղաղասէր երկիր մըն է , վաճառականները , հակառակ պաշտօնատարներէն իրենց կրած հալածանքներուն , կարողացան խոշոր հարստութիւններ զիջել . գործի մէջ եփեցան ու վճռողականութեան ու պարկեշտութեան յատկութիւններ ստացան զոր Եւրոպացիք հաճոյքով կը խոստովանին : Աւատական Ճափոնին մէջ որ ինքզինքն ամբողջ աշխարհէն կ'անջատէր , վաճառականութիւնը արհամարհուած էր . սամուրաիներուն համար , ամօթ էր դրամի խօսք ընել , նոյն իսկ առարկայի մը գինը յիշել : Սակայն , կարեւոր « Ժիյճ » երկային Ետօ եւ Օզաքա , ու քանի մը վաճառա-

կանական ընտանիքներ , մանաւանդ մետաքսի առուստուրին մէջ , իրենց տուները նահապետական ձեւով մը կազմակերպած էին . գլխաւոր « Ժիլտ » ը բրինձի վաճառականներունն էր . որովհետեւ արտաքին վաճառականութիւն չկար ու ինչքերու եւ ապրանքներու արժէքը բրինձի չափերով կը հաշուէին , անոնք էին որ դրամի ընթացքը կը վարէին : Արհամարհուած եւ ստուած՝ հակառակ իրենց հարստութեան , վաճառականներէն շատերը ամէն տեսակ միջոցներով դրամ կը դիպէին . իրենց բռնագրօսիկ կացութիւնը ստեղծեց վաճառականական այն ցաւալի բարքերը որոնց դէմ Եւրոպացիք անընդհատ բողոքած են . այդ բարքերը այսօր կ'անհետանան , տարբեր ընկերական վիճակ մը ապացուցուց թէ երկրին ապագան կախում ունէր մանաւանդ իր ճարտարաբանական եւ վաճառականական զարգացումէն :

Այս յատկութիւններուն հետ որ զիրենք Եւրոպացիներէն կը տարբերեն , ճափոնացիք ունին այնպիսիներ որ կը ձգտին զիրենք անոնց մերձեցնելու :

Նախ՝ կարեւոր բարենորոգումներ կատարելու քաջութիւնը : Ը , դարուն , չինական քաղաքակրթութիւնն ընդգրկեցին : ԺԶ. դարուն , սիրայօթար ընդունեցան Փորթուկալցիներն ու Սպանիացիները , նաեւ ու հրագէտներ չինեցին՝ անոնց հայթայթած օրինակներուն համեմատ . հարիւր հազարաւոր զինուորներ , արհեստաւորներ , հողագործներ քրիստոնէութեան յարեցան : Յաջորդ դարուն , Թոքուկավաները , Սպանիացւոց էնթրիկներէն կասկածոտ դարձած , քրիստոնեաները հալածեցին եւ Ճափոնը փակեցին արտաքին վաճառականութեան : Բայց այն երկու դարերու միջոցին ուր իրենց օրէնքները մահուան կը դատապարտէին ով որ Եւրոպացւոց հետ յարաբերութեան կը մտնէր , բաղմամբիւ սամուրաիներ գաղտնի կը գնէին հողանտական գրքեր . իրենց աշխատութիւններն են որ պատրաստեցին 1871ին կատարուած բարենորոգումները : Անկից ի վեր կառավարութեան բոլոր արարքները ցոյց տուին թէ անցեալին բոլոր յարգանքը , պաշտումը՝ Ճափոնացիները չեն արգելիւր հասկնալէ այն պարտականութիւն-

ները զոր հարկաւոր կը կացուցանեն ժ.թ. դարերու պատերազմներէն, յեղափոխութիւններէն եւ զիւտերէն ստեղծուած տնտեսական ու ընկերական նոր պայմանները . այդ արարքները ցոյց տուին նաեւ թէ ճափոնացւոց նախանձախնդիր հայրենասիրութիւնը կոյր հայրենասիրութիւն մը չէ, թէ գիտեն ուրիշ ժողովուրդներու հաստատութիւններն ընդգրկելու եւ իւրացնել :

Բարենորոգմանց համար իրենց ունեցած այս սիրոյն սերասօրէն կ'ընկերակցի ուսանելու փափաքը . նրբամիտ, ճկուն, ուշիմ, աշխատասէր, ճափոնացիք կ'ուզեն ստանալ ոչ միայն գործնական ծանօթութիւններ, այլ եւ ամենախրթին տեսական ծանօթութիւններ :

Եւ այժմ եթէ վերլուծենք այս երկու զգացումները՝ ուսանելու փափաքը, բարենորոգմանց սէր, անոնց մէջ անշուշտ պիտի գտնենք շատ այլազան տարրեր, անհանգարտ հետաքրքրութիւն մը, նորութեան սէր, ջղային մարդոց փոփոխականութիւն, ամէն բանի մէջ ամենուն հաւասար երեւալու փառասիրութիւնը . ճափոնացի մը՝ Չինաստանի պատերազմէն յետոյ՝ կ'ըսէր . « Այն ատեն միայն գոհ պիտի ըլլանք երբ ցամաքի վրայ Գերմանացւոց յաղթները եւ ծովու վրայ Անգլիացւոց : » Բայց անոնց մէջ պիտի գտնենք մանաւանդ մեծ ու գեղեցիկ յատկութիւններ : Նախ անոնք զոր կուտայ պուշիտօն, ճակատաբաց պայքարին հրճուանքը, ազնիւ մըրցում մը, սիրուած բաներ հայրենիքի փառքին զոհելու քաջութիւնը . յետոյ՝ ճշմարիտ դիտական ոգի մը, ճշմարտութեան բաղձանքը, որոշութեան պէտքը, այն եռանդը որ ըսել կուտար ժ.Ը. դարու սամուրաբի մը՝ հոլանտերէն քանի մը բառ կարգալու յաջողած ըլլալէն ուրախացած, « կարծես թէ ձեռքս թանկագին քարերով լիցուցած էին » : ճափոնացւոց ըսելուն նայելով, ինչ որ մինչեւ ցարդ իրենց գիտական ուսումնասիրութեանց վիտամ է, իրենց ուշադրութեան պակասն է . այդ պակասը որ իրենց բարքերուն, իրենց դաստիարակութեան հետ առնչութիւն ունէր, օրէ օր կ'անհետանայ . պուշիտօն իրենց թոյլ պիտի սայ մտքերնին կազմել ինչպէս թոյլ տուաւ կազմել իրենց նըկարագիրը : Կարելի էր աւելի ենթադրել թէ գիտական երեւակայութիւնը կը պակաս իրենց .

բայց այդ յատկութիւնը միայն քանի մը մեծ գիտուններու օգտակար է, եւ ճափոնը արդէն ունի այդ մեծ գիտունները, ինչ որ կ'ապացուցանեն այս վերջին տարիներուն մէջ հրատարակուած կարեւոր աշխատութիւնները, մասնաւորապէս նիւթին բնութեան վրայ :

Այսպէս է, իր մեծ գծերուն մէջ, ճափոնացւոց նկարագիրը . անոր յատկութիւնները չափազանց կը տարբերին եւրոպական յատկութիւններէն, որպէս զի կարելի ըլլայ եւրոպացած ճափոն մը երեւակայելու : Ինչպէս ամէն ասիական բարոյական, ճափոնական բարոյականն ալ զեռ հակակիր է անհատականութեան : Անշուշտ նոր ընկերութեանց տնտեսական ու քաղաքական պայմանները պէտք է նպաստեն ճափոնացւոց ընկերակցական ոգին պակասեցնելու, բայց կասկածելի է որ՝ գոնէ դարեր չանցած՝ ճափոնական ընկերութեան համայնական նկարագիրը բոլորովին անհետանայ : Այդ ընկերութեան համար ատիկա ուժի՞ թէ տկարութեան պատճառ մը պիտի ըլլայ, զեռ չենք կրնար որոշ բան մ'ըսել այդ մասին : Համերաշխութեան, ժառանգական իշխանութեան մը հանդէպ հպատակութեան ոգին զոր ունին՝ երեսուն տարիէ ի վեր օգտակար եղած է ճափոնացւոց թէ՛ իրենց քաղաքական ու ղինուորական կերպարանափոխութեանց մէջ . այդ յատկութեանց չնորհիւ՝ քիչ ժամանակի մէջ մեծ յառաջդիմութիւններ կատարած են . ներքին կռիւները որ այդ յառաջդիմութիւնները կարելի ըրած են, քիչ են տեւած, ու կուտակցութեանց միջիւտեղութիւն չեն թողած . կառավարութեան ճարտարարուեստական ձեռնարկները, ամենէն ձեռնհաս եւ ամենէն խստադատ անձերուն կարծիքով, դրուած չնչին դրամադուխներուն փոխարէն՝ շատ մեծ արդիւնք սուած են : Հիմայ այս տնտեսական ու քաղաքական փոփոխութիւնները յամրօրէն կը ստեղծեն նոր ընկերութիւն մը . յանդգնութիւն պիտի ըլլար այժմէն իսկ դատաստան մը յայտնել, բայց կարելի է հաստատել թէ ճափոնի ղինուորական, ճարտարարուեստական ու վաճառականական զօրութիւնը քիչ ատենէն պիտի հաւասարի Եւրոպայի մեծ ազգերու զօրութեան :



ՅՈՒՇԱԽՈՒՐՉՔ



(Շար. եւ վերջ)

ՄԻՋԻՆ ԴԱՐ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Վիթրայլ

Երփնանըկար այս պատուհանը տեսած է մեծ սեպուհներ
եւ բամբիշներ որ ոսկիով ու լազուարթով եւ սատափով
ու բոցերով շողուն , օրհնող վեհ աջին տակ կը հակէին
իրենց խըրոխտ գարգմանակներն ու գլխարկները ազեւոր ,

Երբ կ'երթային անոնք , ձայնովն որսափողին կամ շեփօրին ,
Ափերնուն մէջ բռնած սուսերն կամ կերբազէն եւ կամ ճակուրն ,
Դէպ ի անտառն ու դէպ ի դաշտ , Բիւզանդիոն եւ կամ Քրեա ,
Խաչակրութեան համար մեկնիլ կամ ճայերու որսորդութեան :

Այժմ , իշխանները , քովն ի վեր դըղեկատէր տիկիներուն ,
ու բարակը՝ իրենց երկայն սըրակըտուց մուճակին մօտ ,
Սեւ կամ ճերմակ մարմարեոնէ սալարկներուն վրայ կ'երկնան :

Այնտեղ պառկած են լուռումունջ , անլըսելիք եւ աներեր ,
Ի իրենց քարէ աջուրներովը կը դիտեն ու չեն տեսներ
Գեղանըկար պատուհանին մեծ վարդը միշտ ծաղկափրթիթ :

Ըստ Փեթրարայի

Դուրս կ'ելլէիր դուն ժամէն ու ժեսթով մը բարեպաշտ
Տոհմիկ ձեռքերդ աղքատաց ողորմութիւն կուտային .
ու գաւիթին ներքեւ մուծ՝ գեղեցկութիւնըդ պայծառ
երկնի ամբողջ ոսկին ցոյց կուտար շլացած խեղճերուն :

ու ես բարեւ տըւի քեզ՝ ողջոյնով մը շնորհալի ,
Խոնարհ՝ ինչպէս տըհասոյ լլալ չուզողին կը վայլէ ,
Երբ քողըդ վար քաշեցիր ու՝ կարծես թէ բարկացած՝
Երեսդ անդին դարձնելով աջուրներդ ծածկեցիր :

Բայց սէրը որ կը տիրէ է՛ն ապըստամբ սրտերուն ,
Չըհանդուրժեց որ , նըւազ գորովագին քան աղւոր ,
Աղբերակը գըթութեան մերժէր ինձի ողորմիլ .

ու ձեռքդ այնքան յամր եղաւ լաչակը վար առնելու ,
որ թարթիչներդ ըստուերոտ դողդըղացին ինչպէս սեւ
Տերեւներ ուր կը մըզուի աստղի ճաճանջ մը երկայն :

Փիւր սր Ռահսարի

Տարիսմոհներու գրքին վրայ

Ատենով շատ սիրահարներ, պարտէզներուն մէջ Պուրկէօյլի,
Շատ անուններ են փորագրած կեղեկին մէջը ծառերուն .
Եւ շատ սրտեր, ոսկիին տակ Լուվրի բարձրը ձեղուններուն,
Հրպարտութեամբ սարսըռացած են նայուածքի մը փայլակէն :

Ի՛նչ փոյթ : Ոչինչ անոնց հրճուա՛նքը կամ մորմոքն արտայայտեց .
Կաղնիէ չորս տախտակի մէջ անոնք պառկած են այժմ ամբողջ .
Ու խոտին տակ որ կը ծածկէ զանոնք, ոչ ոք փրկեց երբեք
Կենսազրբաւ անոնց աճի՛ւնը դագաղին մոռացումէն :

Հոս ամէն բան կ'մեռնի: Մարի', էլէ՛ն, եւ դուն, խրո՛խտ Քասանտրա,
Ձեր մարմինները գեղեցիկ՝ հիմայ միայն անշունչ մոխիր
Պիտի յլային — զի վաղորդայն չունին վարդերն ու շուշաններ —

Եթէ Ռոնսար, Սէնին վրայ կամ Լուարին խարտիշագեղ,
ձակատներուն համար ձերին՝ իր ձեռքերովն անմահական
Խառնահիւսած չըլար Փառքի՛ դափնին Սիրո՛յ մրտենւոյն հետ :

Աւխարհակալները

Ինչպէս բընիկ դիակնոցէն դուրս նետուող հոյլ մը բազէներ,
Իրենց գոռոզ աղքատութի՛ւնը կըրելէ այլ եւրս խոնջ,
Աւարառու եւ զօրապետ, հերոսական ու բռնաբիրտ
Երազով մը գինով, Փալո՛ս տը Մոկերէն կը մեկնէին :

Կ'երթային ձեռք ձրգել մետաղն հրաշապատում հըրապոյրով՝
Ջոր Սիփանկօ կը հասունցնէ իր հանքերուն մէջ հեռաւոր .
Եւ ալիզեան հովերն անոնց թեքափայտերն կը հակէին
Խորհըրդաւոր դէպ ի ափե՛րը աշխարհին Արեւմտեան :

Ամէն իրկուն կը յուսային դիւցազնապանծ վաղորդայններ,
Ու ծովերուն Արեւդարձի կապուտակը փոսփորափայլ
Ոսկեգօծուած միրաժով մը անոնց քունը կը հըմայէր .

Եւ կամ ծրած առաջակո՛ղմը նաւերուն ճերմառագաստ՝
Կը դիտէին նորաճաճանջ աստղերը որ այդ անծանօթ
Երկնքին մէջ Ովկիանին խորերէն վեր կ'բարձրանային :

Յորեկուան բուն

Ո՛չ մէկ աղմուկ աւարապտոյտ մեղուի կամ միջատի .
Կը քրնանայ ամէն բան մեծ անտառներուն տակ՝ արեւով
Ծանրաբեռնուած , ուր տերեւները թանձրախիտ՝ լոյս մը կ'մաղեն
Զմրբխտավառ մամուռներուն մուծ ու աղու թաւշին նըման :

Ծակծրկելով գմբէթը մռայլ , շըքեղ կէսօրն հոն կը յածի ,
Եւ իմ քունով հեշտաթուլցած թարթիչներու վրայ կիսափակ
Բիւր խուսափուկ փայլակներու կը կազմէ ցանց մը շառագոյն
Որ ջեռուցիկ ստուերին մէջէն կ'երկարի ու կ'խաչածեւուի :

Դէպ ի շըղա՛րշը հըրեղէն զոր ճահանջները կը հիւսեն ,
Բարակ երա՛մը կը թռչի երանգաճոխ թիթեռներուն
Զորոնք լոյսը եւ հոյզերուն բոյրերն անուշ կ'արբեցընեն ,

Դողդոջ մատներըս այն ատեն՝ ամէն մէկ թե՛լը բռնելով ,
Ոսկեղինիկ օղակներուն մէջ այդ վարմին նըրբահըրաշ ,
Դաշնակաւո՛ր որսորդ , ես իմ երազներս կը բանտարկեմ :

Ասղ ծովուց

Իրենց վուշէ գլխանոցով , եւ կուրծքերնուն վըրայ ծալած
Նուրբ կըտաւով կամ կոշտ բուրդով զգեստաւորուած բազրկներնին ,
Կիներն՝ ամբողջ՝ ծովախորշին ժայռին վըրայ ծունկի եկած ,
Ովկիանո՛սը կը դիտեն որ Պաց կըղզին կը ճերմըկցնէ :

Այրերը , հայր , որդի , էրիկ , սիրող , ամե՛նքն ալ , հո՛ն հեռուն ,
Օտիէրնի եւ Փէմփոլի եւ Բանքալի մարդոցը հետ ,
Դէպ ի հիւսիս , դէպ հեռաւոր ժամանակէտ մը մեկնեցան .
Ո՛րքան յանդուգըն ձըկնորսներ որ պիտ՝ այլ ե՛ւրս չը դառնան :

Մեծաժըխոր շըշընչիւնին վրայէն ծովուն ՚ւ ափունքներուն
Կը բարձրանայ ողբագին ե՛րգը՝ ոգելով մեծաղաղակ
Սըբազան Ա՛ստղը , միա՛կ յոյս վըտանգըւած նաւազներուն .

Եւ Անճելի՛ւսը , կըքելով այդ ճակատներն արեւախանձ ,
Սիպիրիլէն մինչեւ Ռոսքոֆ՝ զանգակատնէ զանգակատուն՝
Կը թռի , թնդուն , ու կը մեռնի վարդ երկնքին մէջ դալկահար :

ԱՐԵՒԵԼԲ ԵՒ ԱՐԵՒԱԴԱՐՁԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐ

Կալանաւորք

Միւէզգիւնները հոն հեռուն դադրեցուցած են գոչիւննին .
 Կանանչ երկինքն՝ արեւմուտքի կողմ՝ կը ծոպուի ծիրանիով
 եւ ոսկիով . կոկորդիլոսն կը մըխըրճի տղմի մահիճ
 Մը փնտռելով , ու մեծ գետն հո՛ւսկ իր շըշունչներն կը բընացնէ :

Ծալապատիկ նստած , ինչպէս որ կը վայլէ ծըխողներուն ,
 Կ'երագէր Պէտը , օրօրուած գիրկն հաշիշին տարօրինակ ,
 Մինչդեռ նաւա՛կը շարժելով բուռն ճիգով , երկու խափշիկ
 կը ծըռէին , մերկամարմին , բադրոնին վրայ թիողներուն :

Ու յետսակո՛ղմը , ցնծալից , 'ւ անարգանքով բերանը լի ,
 Քերելով սուր Կիւզան որ խաղ մը վայրենի կը չափանկէ ,
 Արնաւուտ մը վար կը նայէր վայրագ գըծուծ աչուրներով .

Ձի մակոյկին վըրայ կապուած 'ւ արիւնելով ոտնակապէն ,
 Մերունի Նէխ մը կը դիտէր՝ ձեւով մ'ապուշ ու ծանրալուրջ՝
 Մինարէները սըրածայր որ նեղոսին մէջ կը դողան :

Սամուրախն

Մըտացիք մատ մը խաղցնելով Պիվային վրայ հընչական ,
 Պամպուններով հիւսուած բարակ կաւարներուն արանքէն ,
 Էնի տեսաւ , շըլացուցիչ ու տափարակ ծովափէն՝
 Յառաջանալն յաղթականին գոր իր սէրը երագեց .

Ա՛ն է : Հովհա՛րը վեր բռնած , մէջքը սուրեր , կը քալէ .
 Կարմիր պարա՛նը եւ խանթո՛ւռը շառամոյր կը կտրեն
 Անոր գըրա՛հը մըթագոյն , եւ ուսին վրայ կը շողայ
 Թոքունկ՛վայի կամ Հիզենի գինանըջանն հինաւուրց :

Այդ գեղեցիկ ռազմիկն՝ հագուած շերտերով ու փլաքներով ,
 Պրոնգին ներքեւ ու մետաքսին եւ փողփողուն լայքային ,
 Ողորկպատեան մ'է կարծես սեւ , հըսկայական ու կարմիր :

Տեսաւ գէնի : Ու կը ժպտի մօրուքին մէջ դիմակին ,
 եւ իր քայլը՝ աւելի շտապ՝ կը փայլեցնէ արեւուն
 երկու ոսկի փողկուկները որ սաղւարտին վրայ կ'դողան :

ԲՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԱԶԸ

Հին մեհայլ

Կը հասունցնէ ցայսօր եղնան ծիրանին ու ոսկին գինւոյն
Որով հնաւուրց երիզոնը թէկոյրիտէ՛սը գինովցուց ,
Բայց այն կիներն որոնց շընորհն իր տաղերուն մէջ ան երգեց՝
Բանաստեղծը հիմայ ի զուր պիտի զէնոնք փընտըռէ՛ր :

Իր դիցական կիսադէմքին մաքրութիւնը կորսնցնելով ,
Արեւուզան . երբեմն ըստրուկ ու երբեմն հա՛րճ նախընտրըւած ,
Խառնած է իր երակին մէջ՝ ուր յոյն արի՛ւնը կ'զայրանայ ,
Սարակինեան կատաղութիւնն՝ Անժուական սիգութեան :

Կ'անցնի ատենն : Ու ամէն բան կ'մեռնի : Մարմարն իսկ կը մաշի :
Ագրիգենդան ա՛լ ստուեր մըն է ու կը նիրհէ Սիրակուսան՝
Ներողամիտ իր երկընքին պատանքին տակ կապուտակ .

Ու միայն կարծր այն մետաղը զոր սէրն հըլու է դարձուցած ,
Կը պահպանէ դեռ ծաղկափթիթ , մետայններուն վրայ արծաթէ ,
Գեղեցկութիւնն անմահական Սիկիլիոյ կոյսերուն :

Յուդարկաւորութիւնը

Դէպ ի Փոկի՛տը մեծանուն ու մեհեաններն որոնց վերել
Ժայռուտ Պիւթո՛վը կը ցըցուի՝ փայլակներով միշտ պըսակուած ,
Վաղընչական ռազմիկները երբոր դըժո՛խքը կ'իջնէին ,
Յունաստանը կը պաշարէր անոնց պատկերն աստուածային :

Եւ ըստուերներն անոնց , գիշե՛րը երբ կուգար լուսավառել
Զըւարթաշող Արշիպեղաֆն եւ ամայի ծովածոցերն ,
Կը լըսէին , պայծառափայլ հըրուանդանաց բարձունքներէն ,
Սաղամինի ծովն որ իրենց շիրիմներուն վըրայ կ'երգէր :

Ու ես մեռնի՛մ պիտի հալուր , շըրջապատուած սուգով մ'երկայն .
Պիտի գամեն իմին մարմի՛նըս դագաղի մը մէջ նեղկիկ ,
Ու պիտի հո՛ղը վըճարեն եւ քահանան ու կերոններն :

Եւ սակայն ես այդ փառաւոր ճակատագիրն երագեցի՝
Արեւուն տակ իյնալ ինչպէս նախահայրե՛րը կ'իյնային ,
Երիտասարդ , եւ ողբացուած՝ դիւցազներէն ու կոյսերէն :


Բարձրացող ծով

Արեւն անշարժ ու հերմակ բոցով փարոս մ'է կարծես .
 Բովանդակ ա'փը՝ Ռազէն մինչեւ Փենմարք՝ կը մըխայ .
 Ու միայն, դէ'մը հովին որ փետուրները անոնց
 Վեր կը ցըցէ , փոթորկի'ն մէջ կը յածին որորներն :

Մէկը միւսին ետեւէն , խոյննքներով մոլեգին ,
 Խաժ կոհակները իրենց փրփրախըռիւ բաշին տակ ,
 Տարտըղներով մըշշածեւ՝ որոտումի մը մէջ խուլ ,
 Կ'երթան հեռուն ջրաթաթաւ գարգամանակել վիմուտներն :

Եւ թողուցի որ սլանան ալիքներն իմ խոհերուս ,
 Երազք եւ յոյսք , աւաղա'նքը վատնըւած ուժերու ,
 Արոնցմէ բա'ն չի մընար բայց եթէ դառն յիշատակ :

Ովկիանոսն ինձ ձայնո'վ մ'եղբայրական խօսեցաւ ,
 Վասըն զի նոյն աղաղա'կը զոր ծովը կ'արծակէ ,
 Մարդն Աստուծո'յ կ'ուղղէ զայն , ունայնօրէն մըշտական :



Կոնք

Ի'նչ սառուցիկ ովկեաններէ , ձըմեռներէ ի վեր ո'րքան ,
 —Ո'վ պիտ' երբէք զայդ գիտնայ, կո'նք նրբատարր ու սատափաշող—
 Ծրփանքները եւ հոսանքներն ու ռաքեանները մակընթաց
 Քեզ թաւալած են խորքին մէջ իրենց կանանչ անդունդներուն :

Երկնքին տակ , այսօր , հեռու տեղատուութեանց դառնութենէն ,
 Քաղցր անկողին մ'ըրեր ես քեզ ծովափնատա'փը ոսկեզօծ :
 Սակայն քու յո'յսըդ ունայն է : Երկարաշունչ եւ յուսահատ ,
 Քու մէջըդ միշտ կը հեծեծէ ծովերուն ձայնն ահագնագոյ :

Իմին հոգիս դարձած է բանտ մը հնչական : Եւ ինչպէս քու
 Խորշերուդ մէջ կը կողկողի տակաւին ու կը հառաչէ
 Ողբածայնո'ւմը յանկերգին վաղընջական աղաղակին :

Այնպէս ալ , է'ն խոր ալքերէն այս իմ էնով լեցուն սրտիս ,
 Խուլ ու դանդաղ , անըզգալի եւ սակայն միշտ անլըռական ,
 Կը գողայ մէջըս որոտո'ւմը հեռաւոր ու մըրըրկոտ :



Անկողինը

Նուրբ դիպակով սրբափակուած ըլլայ եւ կամ կոշտ կըտաւով,
Գերեզմանի նըման տըխուր եւ կամ բոյնի մը պէս զըւարթ,
Հոն է որ մա'րդը կը ծընի, կը հանգչի ու կը միանայ,
Մանուկ, էրիկ, ծերունի, կոյս, ամուսին կամ մամիկ :

Հարսանեկան կամ մահաշուք, սրբազան ջո'ւրը զայն օծէ
Խաչելութեան մը ներքեւ սեւ կամ օրհնուած ոստին ներքեւ,
Նախաճաճանջ առաւօտէն մինչեւ բոցը հուսկ կերոնին,
Ամէն բան հոն կը սկըսի, 'ւ ամէն բան հոն կ'աւարտի :

Խոնարհի ու փակ ու գեղջկական, եւ կամ հըպարտ՝ զինանշանովն
Որ յաղթապանծ է նըկարուած վառ կարմիրով եւ ոսկիով,
Պարզ կաղնիէ 'լլայ շինուած, նոճիէ կամ դղբիէ,

Երնէ'կ անոր որ աներկիւղ 'ւ անխղճախայթ կրնայ քնանալ
Հօրենական անկողնին մէջ հաստազանգուած ու մեծարոյ,
Ուր իրեննե'րը բոլոր ծըներ են ու մեռեր են :

Արծիւին մանր

Երբոր արծիւն յաւերժական ձիւներէն վեր է բարձրացած,
Լայնատարած իր թեւերուն աւելի օդ կ'ուզէ գտնել
Եւ արեգակն աւելի մօտ աւելի ջինջ կապոյտի մ'մէջ,
Տաքցընելու համար շողի'ւնը թաղծագին իր բիբերուն :

Վեր կ'ամբառնայ: Ու կը ծըծէ ամբողջ հեղեղ մը կայծերու:
Միշտ աւելի՛ վեր, իր խըրոխտ թըռիչն հանդարտ ուռեցնելով,
Կը սըլանայ դէպ ի մըրիկն ուր փայլակը գինք կը քաշէ.
Բայց շանթն ահա մէկ հարուածով անոր երկու թեւը փշրեց :

Չարագուշակ աղաղակով, կը դարձդարձի, ընդբարշ տարուած՝
Մեծ յորձանքէն, ու պրկըւած, վըսեմ ումպով մը խըմելով
Բոցն համասփիւռ, կը մըխըրձի անդունդին մէջ փայլակնացայտ :

Երնէ'կ անոր որ Փառքի կամ Ազատութեան սիրոյն համար,
Հըպարտութեանը մէջ ուժին 'ւ արբեցութեան մէջ երագին,
Կը մեռնի ա'յսպէս, մահով մը շըլացուցիչ ու կարճատեւ :

Անդրագոյն

Մարդը տիրեց հրուտ երկրին առիծներու եւ երկրին
Ուր թոյներն ու զեռուններն կը վստան ու վրդովեց
Ովկիանն ուր խորշխորշան խեցեմորթներն կը սուրան
Ձրգելով հետք մը ոսկի՝ գալիոններն ինչպէս հին :

Սակայն հեռու աւելի քան ձիւնը եւ ըսթրոմին
Յորձանքներն ու սարսափը Սփիցպերկներուն անբեղուն ,
Բեւեռը գաղջ եւ ազատ ալիքով մը կը ծեծէ
Կըղզիներն ուր իր դրօշակն ո՛չ մէկ նաւազ չըկանգնեց :

Մեկնի՛նք : Պիտի ջախջախե՛մ սառնամանիքն անանցիկ ,
Ձի իմ յանդու՛ղըն մարմնոյս մէջ հոգի մը կը կըրեմ
Որ խոնջ է հեշտ համբաւէն տիրողներուն Ոսկիի :

Պիտի երթա՛մ : Կ'ուզեմ հուսկ հըրուանդանին վրայ ելլել ,
Որպէս զի ծովն այդ որ լո՛ւռ է ամենուն համար դեռ ,
Հըպարտութի՛ւնըս շոյէ շըշընչիւնով մը փառքի :

Մեռելներու կեանքը

ԱՐՄԱՆ ՍՈՂԵՍԹՐԻՆ

Երբոր հողը մեզ երկու՛քս ալ իր ծոցին մէջ թաղէ
Ու երբ սեւ խաչ մը տնկեն մերին վըրան , քու մարմինդ
Պիտի ծաղկի վերըստին շուշաններու ձիւնին մէջ
Եւ իմ մարմնէս պիտի վա՛րդ մը բողբոջի արիւնոտ :

Աստուածային մահն որ քու տաղերուդ մէջ երգեցիր ,
Իր մոռացմամբ ու լուռութեամբ բեռնաւորուած սեւ թռիչով ,
Պիտի բանայ մեզի՛ յամր թաւալումով մ'օրօրուած՝
Երկին նքն ի վեր՝ դիւթական ուղի մ' դէպ ի նոր աստղեր :

Ի՛ արեւուն մէջ բարձրացած , ծոցն իր հնոցին կենդանի՝
Մերին երկու հոգիներն պիտի երթան ընկղմիլ ,
Յաւերժական բոցերուն երանութեան մէջ հալիլ .

Մինչ բարեկամն ու քերթողն սրբագործմամբ օծելով ,
Փառքը մեզի շընորհէ՛ պիտի ապրիլ յաւիտեան
Այն Ստուերներուն՛մէջ զոր Գնարն եղբայրական է ըրած :



ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Auroreի Սեպտ. 10ի քիւրն մէջ, Պ. Փոլ Կիօ, որ այդ քերթին քաղաքական խմբագիրն է այժմ եւ ծանօթ՝ իր Notes sur l'Italie, l'Anarchisme aux Etats-Unis գրեւորվ ու գրական, անսես-սագիտական հետև ուսումնասիրութիւններով, նուիրած է « Հայ Առուղներ » հասոյթին ընդար-ձակ եւ շատ համակրական յօդուած մը, որմէ կը քարգանցեն հետեւեալ քանի մը հասուածները.

« Հայաստանը, ցաւի երկիր, կը թուի մի-անգամայն ըլլալ երկիր մը բանաստեղծնե-րու : Այնպէս, արդարեւ, կ'երեւայ ան՝ լիա-ուատ ու ժրաջան հրատարակութեանց մէջէն այդ տաղանդաւոր հայուն որ կը կոչուի Ա. Չօպանեան : Իարերէ ի վեր՝ տառապանքի մատնուած, համայնակու Արեւելքին աշխար-հակալութեանն ու թալանին ենթարկուած, այդ երկիրը՝ այսու հանդերձ՝ հրաշքը կատա-րած է անեղծ պահելու իր բարոյական ու մտաւոր անհատականութիւնը, նման անց-եալի Իտալիային, երբ ան ալ՝ որս դարձած ամենէն այլազան ցեղերուն, ինք իր մէջ, իր ա-ւանդութեանց, իր հանճարին մէջ կը գտնէր խորապէս ազգային կեանքի մը տարերքը :

« Պատմական դերը զոր կատարած են հայ գրագէտները, որոնց ներշնչման հարստու-թիւնները մեզի յայտնելու կ'աշխատի Պ. Չօ-պանեան՝ հայրենասիրական եռանդով, կէտ առ կէտ կը նմանի իտալացի արուեստագէտ-ներու եւ մտածողներու կատարած դերին : Հակառակ անհամար արշաւանքներուն եւ կոտորածներուն, հակառակ իր հողին ան-բամահատութեանց, միշտ գոյութիւն ունի Հայաստան մը, այնքան սերտօրէն միազօր-որքան Մեծն Տիգրանի Հայաստանը : Ասիկա գիտնալնիս մեծ մասամբ մեր բարեկամ Պ. Չօպանեանին կը պարտինք :

« Ո՞վ չի յիշեր 1895 ի ջարդերը : Հաբիւր հազարաւոր Հայեր ինկան, կեղեքիչներուն անյագութեանն ու մոլեռանդութեանը զոհ դառնալով : Եւրոպան անկարող էր դարձած՝ այն վերապահութեամբը զոր իր վրայ պար-տադրած էր իր հեղծաւոր դիւանագիտու-թիւնը : Միայն, վեհանձն մարդիկ, գլխաւոր-ապէս Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ, կը հա-

մարձակէին զայրացկոտ բողոքներ արձակել : Պ. Չօպանեան, այդ ահաւոր օրերուն մէջ, ընդվզման ու վրէժխնդրութեան բաղձանքնե-րը լռեցնելով, կը նախընտրէր մեզի խօսիլ ոչ թէ ներկայ թրագողութեանց մասին այն ժո-ղովրդին որմէ կը սերի, այլ անոր անցեալ մեծութեան մասին : Եւ յուզուած ձայնով մը, որ իր պերճախօսութիւնը դատին արդա-րութենէն փոխ կ'առնէր, հոյակապ բանա-խօսութեան մը մէջ՝ որու կը նախագահէր Անաթոլ Ֆրանս, մեզի բացատրեց թէ ի՞նչ ը-նելու կարող եղած էր եւ էր տակաւին Հա-յաստանը, զոր թուրքերը բնաջինջ ընելու զբաղած էին : « Կ'ուզեմ ցոյց տալ, կ'ըսէր, ոչ թէ ինչ որ կը տառապի հայ ժողովուրդը, այլ ինչ որ է ան » :

... « Ջարդերը դադարեցան : Ե՛րբ պիտի վերսկսին : Ինչ որ ըլլայ պատահելիքը, Պ. Չօպանեան կը շարունակէ իր հայրենասէրի բեղմնաւոր գործը : Այսօր « Հայ Աշուղ » ներուն նուիրուած հատոր մըն է որ կ'ընծայէ Ֆրան-սական հասարակութեան :

... « Ժողովրդին հետ իրենց մշտական շփման պատճառով, « աշուղ » ները ժողո-վրդական բանաստեղծի կատարեալ տիպար-ներ կը ներկայացնեն : ... Ամենէն ինքնաբեր տպաւորութիւնը զոր կը կրենք կարգաւորվ ի-րենց բանաստեղծութիւնները զոր մեր բարե-կամը հանճարեղօրէն թարգմանած է, իրենց գեղարիկ ժողովրդականութեան տպաւորու-թիւնն է. թէ՛ երբ սիրոյ վրայ խօսին՝ ինչպէս նախապետ Բուչակ կամ Իրիգոր Աղթամարցի, թէ՛ երբ՝ ինչպէս Կոստանդին Երզնկացի՝ կեանքի ունայնութիւնը մեզ յիշեցնեն, թէ՛ երբ՝ ինչպէս Ֆրիկ՝ մեզ հրաւիրեն թուել անար-դար գործերը իբր թէ արդարութեան Աս-տուծոյ մը, միշտ կը զգացուի որ իրենց լե-զուն կղզիացած երգչի մը լեզուն չէ, այլ ամբողջ մարդկութեան մը որ ինք իր վրայ կ'ամփոփուի՝ խորհրդածելու համար :

... « Բանաստեղծը որ կը տառապի, ինչ-պէս ամէն անոնք որ կը սիրեն, պէտքը կը զգայ զինքը շրջապատող ընդութիւնը իր ցա-ւերուն հաղորդակից ընելու : Ժողովրդական բանաստեղծին յատկանիշն է ատիկա : Ան չ'ու-զեր մինակ ըլլալ, Ռոմանթիկներու հպարտ մենութենէն կը սոսկայ : Բուչակ, իր « Եար » էն լքուած, լեռներուն եւ ձորերուն վկայութեա-նը կը դիմէ .

Այ սարեր, այ ձորեր, գլխացէք, կար եմ կորուսել, եւլն :

... «Յոյսը, իր համակերպուած եւ համբերատար քաղցրութեամբ, ամէն ժողովրդական բանաստեղծութեան խորը կը գտնուի: Քուչակ՝ մեզի համար՝ սքանչելի թարգման մըն է այդ էականապէս հաւաքական զգացման, զոր հմուտ բանաստեղծներն ընդհանրապէս վանած են արհամարհանքով:

«Ուրիշ «աշուղ» մը, Կոստանդին Երզնկացի, իր քերթուածները կը նուիրէ աստուածային բաներու ներբողման: Սակայն երկրաւոր բաներու գեղեցկութեան մէջ է որ կը տեսնէ Աստուծոյ գործը:

• *Զարթայ ես ի քնոյս ելայ քամուն կացի պահ մի արթուն, եւայլն:*

«Խորապէս յոռետես է (Այս կեանքս է ունայն, եւայլն) ... բայց ի՞նչպէս կրնայ, ինքըն իսկ, յուսահատիլ կեանքէն, քանի որ ա՛յնքան գեղեցիկ է ան: Առաւօտը կուգայ, խաւարչտին գիշերէ մը ետքը ... «չինչ տւելի արբեցուցիչ է քան առտուան անուշ բուրուրը: Կը տեսնէ արեւը, դեռ «տղայ», արեւը որ «կը լուսաւորէ հոգին ինչպէս աչքերը» ... եւ չի կրնար դիմանալ կեանքի եւ սիրոյ թովզութեանց:

• *Այսօր եղեւ պայծառ գարուն, ցնծան ծաղկունք եւ զարդարին, եւայլն:*

«... «Ֆրիկ» ըմբոստ մըն է:

*Աստուած արդար եւ յիրաւի,
Եւ ողորմած յամենայնի,
Հետ քեզ ունիմ բան մի վիճի,
Թէ դու լըսես քո ծառայի:*

«Կ'ապշի՛ տեսնելով ինչ որ կ'անցնի կը դառնայ աշխարհիս մէջ: Կը տեսնէ հեթանոսներ որ իր նմանները կը ջարդեն: մայրեր որ իրենց զաւակները կ'ողբան: ամէն տեսակ աղէտներ, անարդարութիւններ, որ անդադար դժբաղդութիւն կը ցանեն մարդոց մէջ:

*Ապա այս է՞ր որ կու լինի,
Եւ Թէ յումմէ՞ կայ եւ յայտնի:*

Բայց նորէն իր հաւատքը կը յաղթէ իրեն:

*Տէր, քո կամացն է աշխարհս լի
Այսպէս լինել զոր ասացի.
Քեզ օրհնութիւն ի մէնջ տացի,
Ամենազօր տեսունդ Յիսուսի:*

«Կրնայի դեռ երկար շարունակել յիշատակումներս, որովհետեւ ամէն բան՝ Պ. Զօպանեանի հատորին մէջ՝ արժանի է կարգացուելու եւ միօր պահուելու: Պիտի շատախամ

սակայն յիշելով անունը հայ աշուղի մը, Զիվանի, որ ծնած է 1816 ին, Գարծակ գիւղին մէջ: Զիվանի նուազ շահեկան չէ քան իր նախորդները, եւ իր մտածումներու ըզմայլելի փափկութեամբ եւ այդ նոյն ժողովրդական դրոշմով՝ բառին ամենակատարեալ առմամբ՝ զոր կը կրեն իր գործերը:

«Բոլոր այդ բանաստեղծներուն գեղեցկագիտութիւնը պարզ է, միամիտ, հրաշալի մաքրութեամբ մը. բնութեան եւ գեղեցկութեան զգացումը խոր է անոնց մէջ: Մերթմեստիքական, մերթ ըմբոստ, — միշտ հաւատքով լեցուն, — անոնք ցեղին ինքնատիպ զգայնութիւնը կը խտացնեն, ինչպէս այնքան լաւ կ'ըսէ իրենց մեկնիչը՝ այն սքանչելի յառաջաբանին մէջ որ հատորին սկիզբը դըրուած է:

«Եւ այդ ցեղն է զոր թրքական վայրագութիւնը կ'ուզէ ջնջել, զայն իր հարստահարութիւններովը ջախջախելէ յետոյ:

«Պիտի ապրի՛ ան, եւ դարձեալ բանաստեղծներ ու հերոսներ պիտի տայ:»

Փրքի Փարիզիէնի գրական երոնիկագիրը ուսագրաւ հրատարակութեանց շարքին մէջ յիշած է «Հայ Աշուղներ» հատորը:

Բըվիւ սիւ Մուա ամսագիրը հետեւեալ տողերը նուիրած է այդ հատորին.

«Այս հաւաքածուն կը պարունակէ փոքրիկ հայկական բանաստեղծութիւններ՝ որոնք գործն են ԺԳ. էն ԺԹ. դար ապրող աշուղներու: Այս բանաստեղծութիւնները արեւելեան Տոխ համ մը ունին, եւ պերճ նմանութիւններով կը շողան:

«Այս քերթուածներէն ոմանք կրօնական ներշնչում ունին եւ պատկերալից ոճով մը բարոյական պատուէրներ կը բանածեւեն. ուրիշներ տոգորուած են հրավառ ու բուռն հայրենասիրութիւնով մը: Իր ամբողջութեան մէջ, այս գիրքը պակատուի մըն է որ ի ցոյց կը դնէ, խառնիխուռն, գոհարեղէններ, հետաքրքրական՝ որովհետեւ տարաշխարհիկ, նրբարուեստ ու ինքնատիպ ձեւով բանուած:»

Լ'էրմիթաժ հանդէսը իր սեպտեմբեր 15ի քիւիմ մէջ կը գրէ.

«Չենք կարծեր թէ պէտք է հաւասարապէս գովել, հայ աշուղներու բանաստեղծու-

Թեանց մէջ զոր Պ. Արշակ Զօպանեան Թարգմանած է, Թէ՛ անոնք որ քրիստոնէական եւ բարոյական զգացումներ կը փառաբանեն եւ Թէ՛ անոնք որոնց ներշնչումը հեթանոսական է: Առաջինները մեծ շահեկանութիւն մը չեն ներկայացներ, Թէպէտ եւ երբեմն բաւական տարրինակ կերպով հելլենական Ծաղկաքալուն իմաստասիրական վերտառութեանց (epigramme) ձեւը կը ձգտին իւրացնել: Բայց միւսները ունին մեծ գեղեցկութիւն մը՝ Արեւելքի բուրմունքներով համակ տոգորուն:

«Յայտնի չէ Թէ ո՞ր Թուականին կ'ապրէր նահապետ Քուչակ, սյդ Աշուղներուն ամենէն հուշակաւորը: Սքանչելի արուեստագէտ մըն է, եւ արժանի է Օմար Խայեամի փառքին: Իր գործերը, կ'ըսէ Պ. Ա. Զօպանեան՝ հմտալից յառաջաբանի մը մէջ, կը պարունակեն պանդուխտի երգեր, «որ կը հաւասարին գեղեցկագոյներուն զոր մարդկային քնարը արտադրած ըլլայ»: Կը պարունակեն նաեւ սիրոյ երգեր, որոնց մէջ՝ ամենէն ըզմայլելի բանահիւսութիւնը կը ներբողէ՝ ըստ պարսկական եղանակին՝ վարդերը եւ լուսինը, աղանիներն ու աղջկանց ծիծերը:

Տե՛սէ՛ք զի Թուղուզ քերթին գրական քրոնիկին մէջ, Օթբավ Իւզան հետեւեալ տողերը կը նուիրէ նոյն գրքին.

«Պ. Ա. Զօպանեանի հրատարակած «Հայ Աշուղներ» ու գեղեցկագոյն երգերու ա՛յնքան սրտաշարժ ու Թաղծագին հաւաքածուն արձագանք պիտի գտնէ սրտին մէջ ամէն անոնց որ դժբաղդ ժողովրդի մը վրայ կը գըծան:»

Լը Ժուրնալ զը Ժընեվ կը գրէ:

«Հայաստանի դժբաղդ նահանգը ամբողջ գրականութիւն մը ունի: Դարերէ ի վեր ունէր ան, եւ Թերեւս ունի տակաւին, ալ շուղներ, մեր Միջին Դարու շրջիկ ռափստներու բարքերուն համանման բարքերով: Այս գրքին մէջ յիշուածներուն վերջինը, Ջիվանի, ծնած է 1846 ին եւ կարգ մը երգեր շարադրած է այն եղերական դէպքերու միջոցին (1894-96) որ այդ երկիրը արիւնոտեցին: Այդ բանաստեղծներէն մէկ քանին Յշմարիտ գըրահմուտներ եղան, մեծ մասը՝ պարզ գիւղացիներ, աշխոյժ երեւակայութեամբ մ'օժտուած եւ որոնք իրենց նախորդներէն կը սորվէին իրենց շարադրութեան եւ յանկարծաբանութեան արուեստը: Հայկական բանաս-

տեղծութիւնը ունի քանի մը յատկանիշներ համանման պարսկականին. սակայն իր քրիստոնէական ներշնչումը մասնայատուկ նկարագիր մը կուտայ իրեն: Այդ քերթուածները մերթ սիրոյ երգեր են, մերթ կրօնական, խրատական, այլաբանական երգեր, մերթ ալ պատմական դէպքերու մեկնութիւններ կամ պանդուխտի ողբեր: Պ. Զօպանեան մեզի կը ծանօթացնէ իր ազգակիցներէն մօտ քսան հոգի, որոնց գլխաւոր քերթուածները Թարգմանած է, հաւաքելով այն բոլոր տեղեկութիւնները զոր կարելի եղած է գտնել հեղինակներուն անձին ու կեանքին վրայ:

«... Ատոնց մէջ կան ամենագողտրիկ էջեր որոնք կը յիշեցնեն հին եբրայական, բանաստեղծութիւնը, երգ երգոցին այս կամ այն տունը:

«Այս հմտութեան ու քնարերգութեան հրատարակութիւնը մեզ կը մտցնէ հոգւոյն մէջ այդ Թուառ ժողովրդին, որուն դրժբաղդութեանց համդէպ պաշտօնական եւրոպան անդգայ եւ խուլ մնաց: Մենք սակայն սեցինք իր անձկութեան աղաղակները. յուզմունքով պիտի կարդանք հայ այեղներու երգերը:»

Մերթիւր զը Յրանսի Սեպտ. 15ի թիւին մէջ, էսմոն Ֆազի հրատարակած է ընդարձակ յօդուած մը, որ ընդլայնումն է Ռեփիւպլիք Յրանսէզի մէջ իր արդէն իսկ հրատարակած անփոփ յօդուածին. կը բարգմանեն հետեւեալ հասուածները (1):

«Փոքր Ասիոյ ժողովուրդներուն մէջ, կայ ազգ մը, ամենէն դժբաղդը, եւ մին ամենէն օժտուածներէն, ազգ մը վաճառական ու պատերազմիկ, միստիքական եւ իրապաշտ, որ ունի գրականութիւն մը՝ շահեկան նոյն իսկ Ֆրանսերէնի Թարգմանուած, քաղցրահամ՝ նոյն իսկ երբ՝ մեր արձակին փոխադրուելով՝ կապտուած է բառախաղներէն, նմանաձայնութիւններէն, յանգերէն, արեւելեան տաղաչափութեան բոլոր զարդերէն. Հայերն են այդ ազգը: Նոր լոյս տեսած գրքէ մը հակիրճ յիշատակումներ պիտի ապացուցանեն, քիչ յետոյ, այս ըսածս:

(1) *Տպագրութեան վրիպակով մը՝ այդ յօդուածին տիտղոսը եղած է՝ «Արեւելեան անթարգմանելի բանաստեղծութիւն մը», մինչ յօդուածագիրը գրած էր, «Թարգմանելի» «Մերթիւր» իր Հոկտեմ. 1ի Թիւին մէջ ուղղեց այդ վրիպակը:*

«... Հայ բանաստեղծութիւնը՝ անկեղծութիւնն ու ինքնաբերութիւնն իսկ է : Ահա ի՜նչու, երբ «Հայ Աշուղ» ներու հատուրը կարգաք, զայն նորէն կարգալու փափաք պիտի զգաք : Մենք ամէն բանի զգայուն ենք, բանաստեղծներէն կը մուրանք իրենց զգայութիւնները, իրենց զգացումները, յուզման երանգներ՝ շահեկան, նոր, նուրբ, գեղեցիկ : Բոպէ մը չունինք կորսնցնելու՝ պայմանադրական գործերու հետ, որոնք սիստեմական նմանուութեամբ են յօրինուած, ու այնքան անկենդան որքան գերմանական մուսէոններու գաճէ կաղապարումները : Նահապետ Քուչակ, Կոստանդին Երզնկացի, Գրիգոր Աղթամարցի, զիս կը հմայեն եւ ձեզ ալ պիտի հմայեն, որովհետեւ իրենց միամիտ ու հրայրքոտ արուեստը, նոյն իսկ երբ կը նրբանայ եւ կը կնճուտի, ոչ մէկ նմանութիւն ունի այն մէկ «Թէմ» ի մը վրայ ձեւափոխութեանց (variations) հետ, ուր կը փայլին, դարերու ընթացքին մէջ, մահմետական ստրուկները եւ դպրոցի իմաստակները :

«Ուրեմն, այս Հայերը կեանքով լեցուն ըլլալու գերազանցութիւնն ունին : Ունին ուրիշ գերազանցութիւն մըն ալ, քնքուշ եւ ուժեղ. այն է որ Թէ՛ քրիստոնէայ են մինչեւ սրտերնուն խորը եւ Թէ՛ հեթանոս մինչեւ իրենց ուղեւճուծը : Այդ վանականներն ու աշուղները մահէն կը սոսկան, Աստուածածնին կ'աղերսեն, իրենց մեղքերուն վրայ կը զոջան, ամէն բանի ունայնութիւնը կը հուշակեն, դժոխքի պատիժներուն սարսափն ունին, բայց եւ միշտ հարազատ զաւակներն են այն երկրին ուր, մեծ տոնի օրերը, գեռ եկեղեցիներուն մէջ «մատաղ» կ'ընեն : ... Հայ աշուղները բնութիւնը կը սիրեն ներգործական սիրով մը որ կը հակապատկերի՝ զոր օրինակ՝ Թրքական Թաղթագին հայեցողութեան հետ : Որքան ալ որ խանդավառօրէն ինքզինքնին նուիրեն Յիսուսի պաշտամունքին, բոլորն ալ կը պաշտեն Անահիտը, բեղմնաւորութեան եւ առատութեան դիցուհին, Հայաստանի պաշտպանը :

(Յօդուածը կը շարունակուի մանրամասն վերլուծմամբ մը հասորին լաւագոյն հշեռուն, եւ կ'աւարտի Քուչակի փառաբանումով.)

«... Նահապետ Քուչակ, ամենէն աստուածայինը Պ. Զօպանեանի յիշած բանաստեղծներուն, խորհրդաւոր անձ մըն է. իր

կեանքին վրայ ոչինչ ծանօթ է : Կը կարծուի միայն Թէ արուեստով աշուղ, աշխարհական էր : Նահապետ Քուչակ ինձի շատ գերազանց կը թուի Օմար Խայեամէն, որուն հետ Պ. Զօպանեան զայն կը բաղդատէ : Նիշափուրի աստղաբաշխ-ալմետարագէտը տիպարն է իր արժէքէն շատ աւելի հուշակ ստակած բանաստեղծին : Մեղկօրէն շնորհալի՝ էտուարտ Ֆիցցէրըտի Թարգմանութեան մէջ, քաղցրանուագ ու նուրբ՝ Պոզենշթետի Թարգմանութեան մէջ, ներդաշնակ ու գեղեցիկ՝ տը Նաք կոմսին Թարգմանութեան մէջ, Պարսկին տաղիկները՝ բառական Թարգմանութեան մէջ՝ երեւան կուգան միօրինակ, բռնազբօսիկ, յաճախ ցուրտ, իմաստով ու պատկերներով աղքատ (1) : Նահապետ Քուչակ ընդհակառակն՝ ճոխութիւնը, ջերմութիւնը, բնականութիւնն իսկ է : ... Սիրուն կիներն ու գեղեցիկ պատանիները պէտք է այնքան սիրեն Քուչակը որքան Հանրի Հայնէն :»

Մերֆիւր սը Ֆրանսի նոյն քիւով, ժամ սը Կուրմոն եւս, իր գրական քրոնիկին մեջ, մեծ հաւակըութեամբ կը գնահատէ այդ հասորը. իր յօդուածը, ամփոփում մըն է բարգամնչին յառաջաբանին եւ ձանօրագրութեանց մեջէն բաղուած սեղեկութեանց եւ կարծիքներու. յիշատակելի յետոյ քանի մը գեղեցիկ հասուածներ առուդի քերթուածներէն, ժամ սը Կուրմոն կ'եզրակացնէ .

«Այսպիսի գեղեցիկ պատկերները հազուագիւտ չեն այս քերթուածներուն մէջ, որոնք՝ Ֆրանսերէն Թարգմանութեան մէջ պահած ըլլալ կը թուին իրենց համը ու հոտը :»

(1) Որքան ալ հաճելի ըլլայ մեր ազգային ինքնասիրութեան համար Քուչակի տրուած այս նախապատուութիւնը, մենք Պ. Ֆազիի կարծիքը Խայեամի մասին անարդար կը նկատենք :

Ք Ր Ո Ն Ի Կ

Սորագոյն լուրերուն համեմատ, Սուլթանը այնքան մօտ չի թուիր աշխարհս իր զըզ-
 ... իր գոյութենէն ազատելու: Հաւաս-
 տողներ իսկ կան թէ քանսէր մը չէ իր ունե-
 ցած հիւանդութիւնը, այլ շատ աւելի թեթեւ
 ու բուժելի տկարութիւն մը: Փարիզ նստող
 մարդու մը համար, որ Սուլթանին երկկա-
 մանց մէջ նայելու անկարող է, միջոց չկայ բուն
 ճշմարտութիւնը գիտնալու:

Հաւանական է սակայն որ Սուլթանին լիակատար կազդուրման մասին տարածուած լուրերը՝ Նըլտըզէն թուած — հետեւապէս կաս-
 կածելի — թուչուններ են. թերեւս վախճանը
 այնքան մերձաւոր չէ որքան կը կարծուէր, բայց այդ վախճանին կարելիութիւնը հորիզոնին վրայ կը մնայ միշտ. եւրոպական մամուլը կը շարունակէ զբաղիլ Սուլթանին յաջորդութեան հարցով, ու — ինչ որ աւելի կարեւոր է — եւրոպական պետութիւնները կը զբաղին ատով. Պ. Իսլովսքիի վերջերս Փարիզ գալուն առթիւ, լրագրիւնները հաղորդեցին թէ այդ ուղեւորու-
 թեան պիտաւոր շարժառիթներէն մին Փրանսա-
 կան ու գերմանական կառավարութեանց հետ Սուլթանին մահէն յետոյ երեւան գալիք իրերու վիճակին մասին համաձայնութիւն մը գոյացնելն էր:

Ինչ ալ ըլլայ բուն ճշմարտութիւնը, եթէ պաղ արիւնով քննենք հարցը՝ հայկական տե-
 սակէտով, թերեւս լաւագոյն է որ Սուլթանին մահը դեռ քիչ մը ուշանայ: Այդ հրէշին սատա-
 կումը ամէն Հայու հրճուանք միայն կրնայ պատ-
 ճառել անշուշտ. բայց միմիայն այդ սատակ-
 մամբը՝ հայկական հարցը չի լուծուիր. հայկա-
 կան հարցը մենք Հայերս է որ պէտք է լու-
 ծենք. Սուլթանին մահուամբ բացուելիք նոր կացութիւնը կրնայ շատ նպաստաւոր հանգ-
 մանքներ ընծայել այդ հարցի լուծման, բայց պատրաստ ենք այդ բոլորին համար. եւրոպա-
 կան կառավարութիւնները իրար կ'անցնին, բանակցութիւններ կ'ունենան, ընելիքնին կ'ո-
 րոյեն. իսկ մենք, կովկասի մէջ՝ քառ'ս, երկ-
 պառակութիւն, ներքին կռիւ. արտասահմանի մէջ՝ թոյլ ու դանդաղ սպասողականութիւն:

մինչդեռ աւելի քան երբեք անհրաժեշտ է որ հայ յեղափոխական կուսակցութիւնները համա-
 ձայնին՝ ներդաշնակ ու հզօր գործունէութեամբ մը Հայ ազգին շահեցնելու համար այդ բոլորէն օգուտը զոր ան կրնայ տալ:

Շատ բան կայ նկատելու, — ու տխրու-
 թիւն պատճառող յաներ — այն երկպառակու-
 թեան մէջ որով կովկասի Հայութիւնը այժմ ինք-
 ղինքը կը բզբտէ: Ինչ որ աչքի կը զարնէ մաս-
 նաւորապէս, ազգասիրութեան համար ցոյց տըր-
 ուած արհամարհանքն է. ազգասիրութիւնը հին-
 ցած, « պարիթ » եղած, յետադիմական բան մը կը նկատուի մեր կովկասի մտաւորականներէն. նոյն իսկ անոնք որ որոշապէս սօսիալիսթ չեն, ինքզինքնին պարզապէս « ազգասէր » անուա-
 նելէ կը խորշին. ինչ կ'ըսեմ, — « ազգասէր » բառը նախատինք մը դարձած է հիմա . . . Մշակը « հայ պատրիոտներ » բացատրութիւնը կը նետէ Դաշնակցական պետերուն գլխուն՝ իբր գերագոյն անարգանք. եւ Դաշնակցական Եր-
 կիրը « իսկական Հայեր » անունով կը դատա-
 պարտէ Մշակի խմբագիրները: Գիտեմ որ այդ բացատրութիւնները թարգմանութիւններ են առւերէնէ, բայց ինչ տգեղ, ինչ անճան-
 թարգմանութիւն, ինչքան վիրաւորիչ ու ան-
 ընդունելի՝ ճշմարիտ հայ ազգամտերի մը համար: Ու ո՛րքան կը սխալին այդ բոլոր պարոնները՝ կարծելով թէ ազգասիրութիւնը հինցած զգա-
 ցում է. Արեւմուտքի ամենէն մեծ ազգերուն ամենէն լուսամիտ անձերը խորապէս ազգասէր են. նոյն իսկ Պեպելներուն ու Ժորէսներուն սրտին խորը նայեցէք, հոն պիտի գտնէք կեն-
 դանի՝ ինչ որ ազգասիրութիւնը ունի յաւիտե-
 նապէս գեղեցիկ, տրամաբանական ու բեղմնա-
 ւոր. ոչ մէկ Ժորէս, ոչ մէկ Պեպել երբեք յանձն պիտի չանեն իրենց ո եւ է մէկ հակա-
 ոակորդը՝ նախատելու համար՝ « իսկական Գեր-
 մանացի, իսկական Ֆրանսացի » կամ « պատ-
 իրոտ » անուանել:

Ազգասիրութեան տկարացման կը վերագ-

րեմ թուրքերու հետ ամէն գնով համաձայնութեան գալու այն ձգտումն ալ, որ վերջերս սկսաւ երեւալ Հայոց մէկ մասին մէջ եւ որ երթալով կը տարածուի: Այդ ձգտումը հիմա իր յատուկ օրկանն ալ ունի Թիֆլիսի մէջ, Երկրի ձայնը, զոր այս վերջերս հիմնեց Պ. Տիգրան Զաւէն: Թէ գտնուին Հայեր որ խորհին թէ Հայոց համար աւելի նպաստաւոր է եւ արդիւնաբեր թուրքերու հետ համաձայնութեամբ գործել՝ փոխանակ առանձին ու հակաթուրք գործունէութիւն մը ունենալու, կ'ըմբռնեն ատիկա (ինչպէս ըսի նախորդ յօդուածովս): Թեզ մըն է ատիկա որ կրնայ պաշտպանուիլ. թերեւս օգտակար իսկ է որ գտնուի այդ ձգտումին վրայ հիմնուած կուսակցութիւն մը. ինչ ալ ըլլայ հայ ժողովրդին ապագայ կացութիւնը, Հայութիւնը ցրուած ըլլալով շատ ընդարձակ տարածութեան մը մէջ եւ ամէն տեղ մահմետականներով պաշարուած ըլլալով, Հայերը միշտ ստիպուած պիտի մնան մահմետականներուն հետ իրենց յարաբերութիւններու հարցով զբաղելու. ուչիմ ճիգեր՝ այդ յարաբերութիւնները բարելաւելու նպատակով, կրնան օգտակար ըլլալ. անհրաժեշտ է որ մահմետական ու Հայ իրար ճանչնան, ինչ որ կայ թիւրիմացութիւն իրենց միջեւ՝ փարատի. անհրաժեշտ է որ Հայերը իրենց շահուն համար իսկ՝ օգնեն մահմետականներուն դուրս նետուիլ իրենց նախապաշարուումներէն, տգիտութենէն, մոլեռանդութենէն, որպէս զի դադրին խոչընդոտ ըլլալէ քաղաքակրթութեան յառաջխաղացման: Բայց պէտք չէ ատոր համար ուրանալ « ազգային » դատը. Երկրի ձայնը հակադարձ խաչակրութիւն մը կը քարոզէ Եւրոպայի դէմ, իր նպատակը կը թուի համոզել Հայերը որ Եւրոպայէն ամէն յոյս կտրեն, այլ եւս դիմում ալ չընեն անոր, ըմբռնեն թէ երբեք Եւրոպան ոչինչ պիտի ընէ Օսմանեան պետութեան մէջ ու եւ է փոփոխութիւն մտցնելու համար. այդ թերթը կ'ուզէ որ Հայերը այլ եւս բոլորովին եւ անվերապահօրէն միանան թուրքերուն, գործեն իբր օսմանցի ազատական, եւ աշխատին Օսմանեան պետութեան վերականգման եւ վերանորոգման. ու մինչեւ իսկ կը տեսնենք ծանօթ ազգասէր բանաստեղծ մը, հայ հողի հայազրոյմ երգիչ մը, Աղայեանը, որ կուգայ այդ

թերթին մէջ ըսել՝ « Ես դէմ եմ հայկական բոլոր այն ընկերութիւններին որոնք քաղաքական անկախ միտումներ ունին. ես դէմ եմ ազգային առանձին շարժումների եւ յեղափոխութեան . . . »:

Ատիկա չեմ հասկնար, եւ ատիկա զիս տրտութեամբ կը համակէ: Պ. Տիգրան Զաւէն ու Պ. Աղայեան անշուշտ կը մտածեն թէ այդ ճամբով աւելի ապահովապէս պաշտպանած կ'ըլլան Հայ ազգի շահերը: Բայց՝ ըստ իս՝ կը սխալին: Այդ ուղղութեամբ Հայը լոկ ձգտած կ'ըլլայ վերականգնել Օսմանեան պետութիւնը, եւ իր ազգին գերեզմանը իր ձեռքով փորած: Հայը այն ատեն միայն կրնայ անկեղծօրէն աջակցել Օսմանեան պետութեան վերականգման, երբ Օսմանցիք անկեղծօրէն ընդունին հայ հողի ու եւ է մասի մը մէջ՝ հայկական ինքնավարութեան մը հաստատման սկզբունքը. միայն Սապահէտօին իշխանն է որ տարտամօրէն ընդունած կը թուի այդ սկզբունքը ու Սապահէտօին իշխանը բացառութիւն մըն է, շատ քիչ հետեւորդ ունեցող. Երիտասարդ թուրքերու մեծամասնութիւնը մոլեգնօրէն հակառակ է ատոր. Երիտասարդ թուրքերու մեծամասնութիւնը կ'ուզէ որ Հայը դառնայ Օսմանցի. արդ, ես այն Հայերէն եմ որ չեն ուզեր Օսմանցի դառնալ. աշխարհս շատ լայն է, տեղ կայ Օսմանցիին ալ, Հայուն ալ. իմ զգացումս ուղիղ է, տրամաբանական եւ դրական, արդար իրաւունքի մը վրայ հիմնուած: Պերլինի դաշնագրին ճշրջ յօդուածը ստորագրուած է ո՛չ միայն Եւրոպական պետութիւններէն, այլ եւ թուրք կառավարութիւնէն: Հայոց համար մասնաւոր « բարենորոգումներու » (սանկ ըսենք) պէտքը ընդունուած է թուրք կառավարութիւնէն ու Եւրոպայէն. այդ հողին վրայ պէտք է մնանք մենք միշտ: Պ. Զաւէնի եւ Աղայեանի պէս մտածողները կրնան յուսահատած ըլլալ Եւրոպայէն, շատ լա՛ւ, թող իրենք ալ թուրքէն պահանջեն, թուրքէն յուսան այդ յօդուածին իրագործումը. մենք պիտի շարունակենք թէ՛ հայ ճիգով անոր իրականացումն ստանալու նկրտիլ, եւ թէ՛ անոր գործադրութիւնը Եւրոպայէն ու թուրքէն միանգամայն պահանջել: Կ'ըմբռնեմ ուրեմն որ մեր մէջ գտնուի կուսակցութիւն մը որ թուրքին հետ համաձայնութեամբ գործելու սկզբ-

բունքին վրայ հիմնուած ըլլայ, բայց պայմանաւ որ այդ կուսակցութիւնը իրեն նպատակակէտ ունենայ թուրքին աջակցութեամբ ՅՐԴ յօդուածը իրականացնել. չեմ ըմբռնել կուսակցութիւն մը որ հայ ուժերով աջակցի հայ ազգութիւնը ձուլել, ցրուել ու ջնջել ուզող թուրքերուն վերականգման: Եւ աս՝ այնպիսի պահու մը երբ վաղեմի ծանօթ թրքասէր Փրօֆ. Վամպէրին իսկ կը հրատարակէ յօդուած մը ուր Օսմանեան պետութիւնը ճակատագրականօրէն կործանման դատապարտուած կը հռչակէ եւ թուրքերը զայն վերականգնելու անկարող . . .

Ազգասիրութեան տկարացմամբն է որ կը բացատրուի՝ դարձեալ՝ սոսիալիզմի ծայրայեղ տարածումը Կովկասի Հայոց մէջ: Կան անշուշտ մէկէ աւելի պատճառներ որ կը բացատրեն ընկերվարականութեան ծաւալումը Կովկասի հայ բանուորական զանգուածներուն ու երիտասարդութեան մէկ մասին մէջ. այնտեղ կայ հզօր արուեստագործական կեանք, հետեւաբար եւ ծայրայեղ հարստութեան մօտ՝ չքաւորութիւն. այնտեղ կայ՝ ռուս յեղափոխական մթնոլորտին ուժեղ եւ թափանցող ներգործութիւնը, եւ կայ վերջապէս՝ հայ մտքին բնիկ արամագրութիւնը ազատական նորագոյն վարժապետութիւնները արագօրէն ընդգրկելու. այս բոլորը հասկանալի կը դարձնէ որ Կովկասի ընկերվարական հոսանքին հայ տարրն ալ մասնակցի. բայց — եւ այդ է միայն ինչ որ միշտ նկատել տուած եմ — այդ բոլորը հասկանալի չի դարձնւոր երբեք որ « հայ ազգային դատին » ծառայելու նպատակով հիմնուած կուսակցութիւնները իրենց գործունէութեան մէջ ընկերվարական ձգտումներուն թոյլ տան գերակշռութիւնն ունենալ զուտ ազգային ընդհանուր գործին վրայ եւ վնասել անոր: Գիտեմ որ հին Հնչակեանք եւ Դաշնակցականք առաջին օրէն աւելի կամ նուազ չափով՝ ընկերվարականութիւնը մտցուցած են իրենց ծրագրին մէջ, իբրեւ հետաւոր նպատակ. գէթ պէտք էր միշտ զայն նկատէին իբր հեռաւոր նպատակ, իբր իսկաւ մը, — իրենց ջանքերը նուիրելով գլխաւորապէս եւ առաջնապէս՝ ազգային դատին: Անվիճելի է որ Տաճ-

կահայոց դատին, այո՛րնքն Հայութեան « ազգային-քաղաքական » դատին ո եւ է կերպով ընկերվարականութիւն պէտք չէ խառնել, — այդ դատին բնութիւնը, ինչպէս եւ Տաճկաստանի պայմանները ատիկա կը պահանջեն, եւ կը յուսամ որ գէթ այդ մասին ամէն ոք համաձայն պիտի ըլլայ: Գալով Կովկասի, ըմբռնելի է որ հոն մեր յեղափոխական կուսակցութիւնները անտարբեր չմնան ընկերվարական շարժման. մանաւանդ որ, եթէ անտարբեր մնան, իրենց անգամներէն անոնք որ ընկերվարականութեան յարած են, կարող են հեռանալ կուսակցութենէն եւ յարիլ ռուս սօցիալ-տեմոքրատներուն, եւ այն ատեն բոլորովին ուժանալ թէ՛ հայկական դատէն եւ թէ՛ Հայութենէն. այս նկատումը, զոր վերջերս կը ներկայացնէր ինծի խոհական անձնաւորութիւն մը, լուրջ է եւ ուշադրութեան արժանի: Բայց այդ հակասական կացութիւնը կարգաւորել դժուար չէ, եթէ մեր յեղափոխական կուսակցութեանց վարիչներու սրտին մէջ ազգային զգացումը գերակշիռ մնայ: Կովկասի հայ բանուորական կուսակցութեան մէջ, որ պէտք է գոյութիւն ունենայ՝ զուտ ընկերվարական ծրագրով՝ մեր յեղափոխական կուսակցութիւնները պէտք է ունենան իրենց գործիչներէն մէկ քանին, որ այդ բանուորական կուսակցութեան մէջ ջանան ազգային զգացումը վառ պահել գէթ այն չափով — որ շատ մեծ է — ինչ չափով որ գոյութիւն ունի ան Եւրոպացի ընկերվարականներու ազնուագոյն եւ ստուարագոյն մասին մէջ: Ատկից զատ, իրենք իսկ յեղափոխական կուսակցութիւնները կարող են իրենց մէկ մասնաձիւղն ունենալ, իրենց ընկերվարական ընկերներուն գործովը զբաղող, Կովկասի ընկերվարական շարժման մասնակցող: Անհրաժեշտ է սակայն որ ընկերվարականութիւնը տիրապետող տարրը չըլլայ մեր յեղափոխական կուսակցութեանց ծրագրին, ձգտումներուն եւ գործադրութեան մէջ, ինչպէս հղած է ան՝ յաճախ՝ հին Հնչակեանց մօտ, եւ ինչպէս է ան մօտ մէկուկէտ տարիէ ի վեր Կովկասի Դաշնակցականներուն մօտ: Թիֆլիսի Դաշնակցական թերթերուն մէկ ու կէս տարիէ ի վեր հրատարակած աժանագին մատենադարանին բողոք գրքերը ընկերվարականութեան շուրջ կը դառնան . . . իսկ հին-

Հնչակեանց Երիսաւարդ Հայաստան եւ Հնչակ թերթերը՝ մինչեւ ասկից վեց-եօթ ամիս առաջ՝ երեք քառորդը ընկերվարականութեան նուիրուած էին եւ մէկ քառորդը ազգային դատին։ Ուրեմն, եթէ կարելի չէ՝ կովկասի արդի պայմաններուն մէջ՝ բոլորովին գատել ընկերվարականութիւնը յեղափոխական կուսակցութեանց գործունէութենէն, կարելի է եւ պէտք է՝ զայն վտարել այդ կուսակցութեանց սահմանայ դատին նուիրած բովանդակ գործունէութենէն, իսկ կովկասեան գործունէութեան մէջ անոր տալ այնքան տեղ միայն որքան տեղական պայմանները անհրաժեշտ կը դարձնեն եւ այն ալ՝ միշտ «ազգային» շահերուն առաջնութեան սկզբունքներէն ղեկավարուելով։

* * *

Այս ամենուն մէջ, ուրախառիթ երեւոյթ մը՝ այն քանի մը կարեւոր իրողութիւններն են որ արտասահմանի Հայութեան մէջ յայտնուեցան այս օրերս իսկ՝ ի նպաստ հայ յեղափոխական կուսակցութեանց համերաշխ գործակցութեան կամ միութեան գաղափարին։ Պէտք է զիտել թէ բաւական ատենէ ի վեր արտասահմանի հայ կուսակցական թերթերու մէջ իրար անուանարկող, իրար անարգող յօդուածները մեծապէս պակասած են։ Վերակազմեալ Հնչակեաններու եւ հին Հնչակեաններու միջեւ ոչ մէկ բանակութիւն չկայ այլ եւս, նոյնպէս Դաշնակցականներու եւ Վեր. Հնչակեաններու. միայն հին Հնչակեաններու եւ Դաշնակցականներու միջեւ կայ զեռ լրագրական պայքար մը. բայց այդ պայքարն ալ յուսալի է որ շուտով վերջ կը գտնէ, (այդ է որ ցանկալ կը թուին երկու կողմի ամէն լուրջ եւ ազնիւ գործիչները)։ Պոսթընի Հայրենիքը, որ ատենով բացէ ի բաց Միութեան գաղափարին դէմ կը գրէր, այս վերջերս հրատարակեց մերձեցման, համերաշխ գործակցութեան նպաստաւոր յօդուածներ, զորոնք հաճոյքով կարդացի։ Ռազմիկ հրատարակեց հոչակաւոր Անդրանիկին մէկ գեղեցիկ կոչը, որ կ'ըսէ՝ շատ ազնուօրէն։

« Ընկերներ, տարիներ առաջ երբ մենք յեղափոխական գործին մէջ անփորձ էինք, բնական է որ ակամայ, թերութիւններ գործէինք,

բայց այսօր 15 տարուան կեանքը մեզ փորձառու եւ գիտակից ըրաւ։ Այսպէս եղած է բոլոր յեղափոխական ազգերու կեանքը. ժամանակ է որ օգտուիլ գիտնանք մեր անցեալի սխալներէն։

« Ատենէ մը ի վեր է որ մեր մէջ սկզբունքային խնդիրներ չատ սուր կերպարանք ստացած են. կովկասահայ մամուլը, շնորհիւ իր ստացած խօսքի ազատութեան, շատ ծայրայեղ վիճակի մէջ մտաւ. եւ ասիկա գլխաւոր պատճառներէն մէկը եղաւ մեր փոքրիկ ուժերուն անջատուելուն, բան մը որ իսկապէս թշնամուն փնտռածն ու չգտածն էր։

« . . . Ես դէմ չեմ համամարդկային գաղափարներուն, բայց սա եւս ճշմարիտ է որ համամարդկային գաղափարներն Եւրոպայի մէջ իսկ իրենց թէօրիական շրջանին մէջ են, եւ ընկերվարական առաջնորդներն անգամ հայրենիքի գաղափարը չեն ժխտեր։

« . . . Իմ կոչս է բոլոր յեղափոխական ընկերներուս, բոլոր հայ ժողովուրդին — կուսակցական ինչ դաւանանքի ալ պատկանին — ժամանակ է որ սթափուինք, սեղմենք մեր շարքերը. ազատութեան գործը շատ զժուարին գործ մը դարձած է, մեծ ուժի կը կարօտի. ազգովին քոյ քովի գանք, եւ այդ մեծ ուժը կազմենք. քաջութիւնը, զրամը, զէնքը չէ որ մեզի կը պակսի, այլ կամքը. զօրացնենք մեր կամքը եւ վստահ ըլլանք որ կը փրկուինք։ »

Վերջապէս « Մուրատ » Հնչակի վերջին թիւին մէջ հրատարակած է պատուական յօդուած մը, զոր ամէն Հայ յուզմունքով ու երախտագիտութեամբ պիտի կարդայ, եւ ուր կ'ըսէ .

« . . . Չեմ կարող հաւատալ թէ ըլլայ մէկը որ բռնակալի լծի ծանրութիւնը զգացած լինի ու միութեան կամ համերաշխութեան օգուտը ժխտէ։

« . . . Ամենքս ալ անյիշաչար լինելով՝ պէտք է աշխատինք անբիծ ու մաքուր սրտով մօտենալ իրարու եւ եղբայրական ձեռք երկնցընել փոխադարձ։

« . . . Անհրաժեշտ է ժողովրդին ձայնը եւ արդարացի պահանջները լսել, քանի որ հասած ենք այնպիսի ժամանակի մը որ խիստ վճռական է, պէտք է որ մեր թշնամիներուն դիմագրա-

ւելու եւ Գործի պահանջին բաւականութիւն տալու չափ ուժ եւ միջոցներ ունենանք :

« . . . Վաղուայ ծագելիք խառնաշփոթութեանց մէջ մեր գոյութեանը սպառնացող վրտանգը . . . աչքի առջ ունենալով , պարտք կը զգամ դիմում ընել Հայ ժողովրդին , միահամուռ յեղափոխական Գործին փարելու եւ խնդրել կուսակցութեանց վարիչ մարմիններէն որպէս զի մեր ցրուած ուժերը ընդհանուր թըշնամույն դէմ համերաշխելու կամ միացնելու գաղափարին զարկ տան եւ աշխատին իրականացնել այդ :

« Եւ որպէս զի այդ ցանկալի գաղափարը օր առաջ մարմին ստանայ , կրկին եւ կրկին կը խնդրեմ , որ հայ յեղափոխական կուսակցութեանց վարիչ մարմինները միջոցներ ձեռք առնեն կազմելու Հայ Յեղափոխական Կոնգրէս մը , որուն մասնակցին անխտիր հայ ժողովրդին մէջ գործող բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչները : »

Այդ յօդուածին կից , հրատարակուած է հին Հնչակեանց Կեդրոնին հետեւեալ որոշումը . « Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութիւնը՝ սկզբունքով ընդունում եւ համաձայն է որ ըստ կարելույն փութով գումարուի հայ յեղափոխութեան Կոնգրէս , գալիք քաղաքական անհրաժեշտութիւններին միահամուռ ջանքերով դիմագրաւելու համար : Կեդր. վարչութիւնս գտնում է ընկեր ՄՈՒՐԱՏԻ առաջարկը բոլորովին նպատակայարմար եւ ժամանակակից : »

Կը մաղթեմ որ այս բոլոր բերկրառիթ իրողութիւնները յանգին բաղձացուած արդիւնքին : « Անյիշաչարութիւն » բառը , զոր գործածած է Մուրատ , ծափահարելի է՝ շատ տեսակէտով : Ըմբռնելու է որ ազգը պիտի ունի հայ յեղափոխական կուսակցութեանց համերաշխ գործակցութեան . այդ համերաշխութիւնը գոյացնելու համար , անցեալին վերքերը քրքրելը հեռու է ապահովագոյն միջոցն ըլլալէ . պէտք է անշուշտ մեծ զգուշութեամբ՝ վարուիլ մերձեցման համար բանակցութիւնները վարելու կոչուելիք անձերու ընտրողութեան մէջ , բանակցութեանց մէջ զնել մեծ լրջութիւն , շրջահայեցութիւն , խոհեմութիւն . բայց էականը՝ կամենալն է . երբ կամք կայ , եւ երբ այդ կամքը Մուրատի եւ Անդրանիկի պէս գործիչներու կողմէ բացայայտ

կը հռչակուի , հայ յեղափոխական կուսակցութեանց մերձեցումը , համերաշխ գործակցութիւնը մտաւուտ կարելիութիւն մը պէտք է համարիլ :

Եթէ հին Հնչակեանները իրենց որոշումը պաշտօնապէս հաղորդած են Վեր. Հնչակեան եւ Դաշնակ. կուսակցութեան , ինծի աւելի քան հաւանական կը թուի որ համակրական պատասխան պիտի ստանան Վեր. Հնչակներէն , ու չեմ կրնար երեւակայել որ Դաշնակցականները ո եւ է պատճառ ունենան մերժելու խորհրդակցական հաւաքման մը համար եղած հրաւէր մը :

Մուրատի կոչէն քիչ առաջ , Դրօշակը ուրիշ առաջարկ մը մէջտեղ նետած էր , այն է գումարել ընդհանուր « քոնկրէ » մը ուր հայ , թուրք , քիւրտ , ալպանացի , արաբ , չերքեզ , մակեդոնացի ներկայացուցիչներ գան խորհրդակցիլ եւ « մշակեն օրուայ անյետաձգելի պահանջները որոնք պէտք է ներկայացուին Օսմանեան վաղուան կառավարութեան , ինչպէս եւ այն գործնական միջոցները որոնցմով պէտք է ստիպել գործադրելու այդ պահանջները : » Հոյակապ եւ մեծաշուք գաղափար , բայց անգործադրելի , եւ որ՝ եթէ նոյն իսկ գործադրուի՝ քառասոյին արդիւնք մը միայն կրնայ տալ . Մանօթ ըլլալով մեզի երիտասարդ թուրքերու մեծամասնութեան ձգտումները , նորէն փորձել ինչ որ անցեալի մէջ տասն անգամ փորձուած է ապարդիւնօրէն , աւելորդ է եւ անխոհեմ : Թուրքերը շատ լու գիտեն թէ մեր պահանջներն ինչ են , իսկ մեր պահանջները գործադրելու համար մեր ձեռք անելիք միջոցները անոնց յայտնելու բնաւ պէտք չունինք : Ատկից զատ , տարրական տրամաբանութիւնը կը պահանջէ որ Օսմանեան պետութեան բոլոր ցեղերուն հետ համաձայնելէ առաջ՝ Հայերը իրարու եւ կարելին , հայ կուսակցութեանց համաձայնութիւնն է՝ այն թաքթիքին վրայ զոր հայ ցեղը պէտք է բռնէ՝ Տաճկաստանի մէջ . այդ համաձայնութիւնը գոյանալէ յետոյ — եւ չեմ տարակուսիր որ ան պիտի գոյանայ , երբ ամէն ոք Անդրանիկներուն եւ Մուրատներուն պէս ըզգայ — հայ կուսակցութեանց համերաշխ խորձը կարող է եւ պէտք է մասնաւոր բանակցութեանց մտնէ Ալպանացուց կամ Արաբներուն ,

Քիւրտերուն կամ Մակեդոնացւոց հետ, նոյն իսկ ի հարկին՝ դարձեալ Թուրքերու հետ, հրաւիրելու համար գործակցութեան մը որ կարենայ նպաստել մեր դատին յաջողման: Առ այժմ, որուան պահանջը՝ իայ յեղափոխական կուսակցութեանց Քոնկրէտն է: Իաջնակցութիւնը անգնահատելի ծառայութիւն մը պիտի մատուցանէ հայկական դատին՝ հզօր աջակցութիւն մը բերելով այդ գաղափարին իրագործման:

Ա. ՉՕՊԱՆՆԱՆ



ԱԼՊԱՆՆԵՐԷՆՆ ՈՒ ՀԱՅԵՐԷՆԸ

Ծանօթ է արդէն այն աւանդութիւնը Սերպիոյ մէջ թէ, Ալբանիացիք Հայաստանի կողմերէն պաղթած եկած են իրենց այժմ գրաւած երկիրը սրուն տուած են իրենց անունը, անուն մը որ երեսանց դատելով՝ մեծ նմանութիւն կը ցուցնէ Աղուան ցեղանունին հետ, ուրկէ նաեւ առաջարկուած է նոյնացնել Ալբանիացիները Հայոց ծանօթ եւ երբեմնի գրացի Աղուաններուն հետ (Բ. ու Վ. արտասանուած, ինչպէս Արուաստան, Արարատան եւայլն): Ինքնին զբուռարութիւն մը Հնարկայացներ կողմասէ մինչեւ Ալբանիա ցեղի մը կամ իր մէկ հատուածին տեղափոխուած, որովհետեւ պատմական համանման օրինակ մը ունինք Հոնկրու տեղափոխութեան մէջ կողկասէն Եւրոպա, եւ անկաւրելի չէ որ Հոնկրու կողկաս նախնի բնակութեան մօտ գտնուող Աղուաններէն հատուած մըն ալ Հոնկրու հետ կամ անոնց հետեւելով անցած ըլլան Եւրոպա: Բայց այս ամէնը հարեւանցի հանգիստութիւններ են զեռ որոնք զուտ վարկած կը մնան ասանց աւելի զօրեղ փաստերու օգնութեան: Լեզուաբանական փաստեր կրնային մեծ նպաստ մը բերել այս հարցին լուսաւորման: Եւ ահա այս պատճառով է որ կ'արժէ ոչ զարձնել Ալբանիէնի մէջ գոյութեան կարգ մը հայ բառերու որոնց ցուցակը ստորեւ: Անշուշտ հարցը լուծուած չըլլար բոլորովին, զի այդ բառերէն մեծ մասը կը գտնուին բոլոր հնդեւրոպական լեզուներու մէջ եւ կրնան հասարակաց ծագումէ մը երկու լեզուներուն մէջ անկախօրէն մտած ըլլալ: Բայց շատ հեղբառերու ձեւին նոյնութիւնը աւելի մօտաւոր կապ մը մատնանիչ ընել կը թուի, փոխառութիւն մը որ զրացութեամբ, սերտ յարաբերութիւններով կրնայ բացատրուիլ: Ինչ որ այ ըլլայ, կ'արժէ լեզուաբաններու եւ բանասէրներու ուշադրութիւնն հրաւիրել սոյն խիստ շահեկան հարցին վրայ:

1. Ar (անդ, արտ) Հայ՝ ար-ար-ք, ար-տ, ար-ա-հետ
2. Boukhar (ծինելոյզ) Հայ՝ բուխեր-իկ.
3. Gadz (կայծ, կրակ) Հայ՝ կայծ (որ «կած» կ'արտասանուի)
4. Dhalé (կաթէն անուռած հեղուկ, վրայէն հումները չառնուած) Հայ՝ դալ (մօր մը առաջին կաթը, զեղնորակ).
5. Dham (ակոս) Հայ՝ ստամն.
6. Dherë (լեղի) Հայ՝ դառն.
7. Dzan (ուսնիմ, գիտեմ) Հայ՝ ծանեայ, ծանօթ.
8. Err (մթութիւն) Հայ՝ երբ.
9. Ze, zan (ձայն) Հայ՝ ձայն (որ «ձան») կարտասանուի).
10. Zok, zogou (թռչուն, թռչունի ձագ) Հայ՝ ձագ.
11. Im, yim (իմ) Հայ՝ իմ.
12. Kam (եմ, ունիմ, օժանդակ բայ ապանի կազմող) Հայ՝ կամ.
13. Kanëp (կանեփ) Հայ՝ կանեփ.
14. Karr (կառք) Հայ՝ կառք.
15. Këleph (պատման) Հայ՝ կեղեւ.
16. Koskë (ոսկր) Հայ՝ ոսկր որ հաւանօրէն սկզբնաբար եղած է «կոսկր».
17. koritë (նաւակ) Հայ՝ կուր.
18. Mbarë (լաւ, բարի) Հայ՝ բարի.
19. Myergoulë (մառախուղ) Հայ՝ մառախուղ.
20. Mis (միս) Հայ՝ միս.
21. Mouré (հրախօս ծով) Հայ՝ մորիկ.
22. Mourk (մութ, սեւ) Հայ՝ մուղջ (աղջ-ա-մուղջ).
23. Ourth (պատատուկ) Հայ՝ որթ.
24. Pakë (քիչ) Հայ՝ պակ-աս.
25. Pyëse (մաս, բաժին) Հայ՝ բաժին.
26. Pul (անտառ) Հայ՝ պուր-ակ.
27. Siri (սեռ, տեսակ) Հայ՝ սեր-ել.
28. Skyüre (պնակ) Հայ՝ սկաւառակ.
29. Zus (սուզանեմ) Հայ՝ սուզանեմ.
30. Sour (ջուր) Հայ՝ ջուր.
31. Tsitse (ծեծ) Հայ՝ ծեծ.

Գ. ՓԱՌՆԱԿ

Հարցը զոր կը յարուցանէ Փառնակ, շատ շահեկան է մէկէ աւելի տեսակէ տներով: Ալպանացիք եւրոպական Թուրքիոյ ամենէն առոյգ ցեղն են: Խոր ազիտութեան մէջ թաղուած, ազգային քաղաքակրթութիւն մը չեն կրցած զարգացնել. բայց Օսմանեան պետութեան տուած են բազմաթիւ մեծ զէմքեր (գրագէտներ՝ ինչպէս Քէմալ պէյ, զինուորականներ, քաղաքագէտներ, եւն.): Մէհեմէտ Ալի, զոր Ա. Ֆրանս «Թուրք Նափոյէտը» անուանեց, Ալպանացի

էր . Այժմ իրենց մէջ ալ արթնցած է ազգայնական ոգին , եւ կ'ուզեն ինքնավար Ալպանիա մը հաստատել , վերակենդանացնել եւ զարգացնել ալպաներէն լեզուն , հիմնել ազգային գրականութիւն մը . իրենց հայրենասէր գործիչներէն մին , Տէրվիչ Հիւմա , տարիներէ ի վեր կը հրատարակէ « Ալպանիա » անուն ամսագիր մը՝ նուիրուած ալպանական դատին , եւ հաճոյքով կ'իմանամ որ քիչ ատենէն այդ եռանդուն գործիչին ինամքով պիտի հրատարակուի Ալպանացուց ժողովրդական երգերու հաւաքածու մը՝ Ֆրանսերէն թարգմանութեամբ : Պ . Հիւմա միշտ մեծ համակրութիւն ցոյց տուած է դէպ ի Հայերը եւ հայկական դատը : Աւելորդ իսկ է ըսել թէ որքան մեր ուշադրութեանն եւ համակրութեանը արժանի է ալպանական շարժումը : Եթէ ալպանո-հայ հին սերտ յարաբերութեանց վարկածը զոր ի հանդէս կը բերէ Փառնակ , ապացուցուի , փոխադարձ համակրութեան զօրաւոր պատճառ մը եւս կ'աւելնայ : « Ալպանիա » ի վերջին թիւին մէջ սակայն , Պ . Հիւմայի մէկ ատենարանութիւնը կը ձգտի ապացուցանել թէ Ալպանացիք կը սերին Յոյներէ առաջ Յունաստանը բնակաւորող Պեղասգեանէրէն , ու Աղեքսանդր Մակեդոնացին ու Պիւտոսը Ալպանացիներ կը համարի : Այդ պարագային ո՛ւր կը մնայ Ալպանացուց եւ Աղուաններու նոյնացումը : Եւ ի՞նչպէս բացատրել ամենատարրական բառերու մէջ հայերէնի եւ ալպաներէնի ցոյց տուած նմանութիւնը , կարելի է ըսել նոյնութիւնը : Թերեւս պէտք ըլլայ ենթադրել որ Աղուանները մէկ ճիւղն են Ալպանացուց , գացած Արեւելք հաստատուած , քիչ որոնց հետ մեր ազգը ունեցաւ այնքան երկարատեւ ու մտերմական յարաբերութիւններ : Ամէն պարագայի մէջ , հարցը կարեւոր է եւ հետաքրքրական , եւ կ'արժէ որ մեր ազգային գործիչները անոր վրայ ուշադրութիւն դարձնեն՝ քաղաքական տեսակէտով , իսկ մեր բանասէրները՝ գիտական տեսակէտով :

Ա. Զ.



ԱՐՓԻԱՐԵԱՆ ՊՈԼԻՏԻԿՈՍ

Անոր համար որ օր մը մեր ազգային ու գրական ժամանակակից կեանքին պատկերը պիտի ուզէ գծել , Արփիար Արփիարեանի դէմքը ամենէն դժուարը պիտի ըլլայ նկարելու : Իրեն ի նպաստ ըսելու շատ բան կայ , — մեր գրականութեան մէջ իր տեղը ընդարձակ է եւ կարեւոր , — բայց եւ ո՛րքան բան՝ իրեն դէմ : Այն չարածճի պարիկը որ հսկած է իր օրօրոցին վրայ , անոր մէջ թափելով քանի մը ամենասիրուն ձիւրքեր , անոնց հետ հոն սողոսկեցուցած է նաեւ ծանր թերութիւններ , որոնց մին , գրելու տրու , — նկարագրի պակասը , կամ թեթեւսօրիկութիւնը , — կ'եղծանէ յաճախ ինչ հրապոյր որ ունին այդ ձիւրքերը : Եթէ իր այդ մտաւոր բարդ կազմուածքով , Արփիարեան նախընտրած ըլլար քննածին գրագէտ մը , Փանթէզիսթ մը ըլլալ սոսկ , ոչինչ պիտի ունենայինք իրեն մեղադրելու . իր թեթեւութիւնն իսկ յատկութիւն մը պիտի դառնար , — ինչպէս որ է իր զուտ երգիծական էջերուն մէջ , Բայց Արփիարեան ուզած է ժողովրդի առաջնորդ ըլլալ , հրապարագրի դեր կատարել , ու թեթեւութիւնը հոտ տկարութիւն մըն է , յաճախ՝ յանցանք , ու մերթ՝ նոյն իսկ ոճիր :

Բնածին գրագէտէ մը չենք պահանջեր հռովմէական ամբողջութիւն մը նկարագրի , սկզբունքներու կուռ հաւատարմութիւն , կը սպասենք որ մեզ հմայէ իր հեգնութեան կամ խանդաղատանքի բոպէական շողիւններովը , եւ իր փոփոխականութիւնները հրապոյր մը աւելի կրնան ըլլալ իր գործին . բայց հրապարակագիր մը պարտաւոր է համոզուած մարդ մը , սկզբունքներու վրայ կատակ չվերցնող միտք մը , « լուրջ » խառնուածք մը ըլլալ : Հասկանալի է որ նոյն իսկ հրապակագիր մը կարծիք փոխեմարդ սխալական էակ մըն է , եւ երբ նոր ապացոյցներ կը հաստատեն կարծիքի մը սխալութիւնը , ազնիւ մարդը պարտաւոր է փոխել իր կարծիքը . բայց լուրջ մարդուն մօտ՝ այդ փոփոխութիւնը կը կատարուի մեծ ճիգով մը , հին ու նոր փաստերուն միջեւ դժնդակ պայքարէ մը յետոյ , եւ փոփոխութեան պատճառ

ները յատակօրէն ու ամբօրէն կը յայտնուին ,
ինքզինքնին կ'արդարացնեն հասարակութեան
աչքին: Արփիարեանի մօտ՝ կարծիքի փոփոխու-
թիւնները կը կատարուին « սինէմաթօկրաֆ »-ի
պատկերներու յաջորդութեան արագութեամբ ,
եւ առանց չքմեղացնող խորին փաստերու: Հովը
կը փչէ , եւ Արփիարեան կը դառնայ , ինչպէս
« Ժիրուէթը » տանիքներուն վրայ : Քանի մը
օրինակ տանք . 6-7 ամիս առաջ , « Լուսաբե-
ր »-ին մէջ Արփիարեան առաջարկեց որ Հայերը
խնդրեն Եւրոպայէն ոռւս կայսերական ընտա-
նիքէն իշխանի մը, այսինքն մեծ-դուքսի, մը Հա-
յաստանի կուսակալ անուանուիլը, երկու ամիս
յետոյ միեւնոյն Արփիարեանը արձագանք կը
հանդիսանար Շիրակի խմբագրութեան մէկ ու-
րիչ առաջարկին , այն է խնդրել Եւրոպայէն որ
իշխան Լուի Նաիոլէոնը Հայաստանի կուսակալ
կարգուի, եւ կ'աւելցնէր՝ « Արդէն « ոռւս կայ-
սերական ընտանիքէն անդամ մը » ըսելով իշ-
խան Նաիոլէոնը կը հասկնայի ես . . . » : Ու-
րիչ օրինակ. Սուլթանին գէմ կատարուած մա-
հափորձէն յետոյ , Արփիարեան միակ հայ հրա-
պարակագիրը եղաւ որ դատապարտեց այդ ա-
րարքը իբր փրասակար Հայութեան , եւ մինչ
ոչ մէկ հայ կուսակցութիւն անոր հայրութիւնն
ստանձնող ո եւ է յայտարարութիւն չէր ըրած,
մինչ Տր. Ապտուլլահի՛ պէս Թուրքեր զայն Թուր-
քերու վերագրող յօդուածներ հրատարակած
էին , ելաւ մատնանիչ ընել Լիմանի ափերուն
վրայ օրկարէթնին ծխող անոր հեղինակները ...
(հոտ՝ արդէն թեթեւութիւնը կը յայտնուէր իր
ամենէն տխուր ձեւով) . արդ՝ երկու ամիս չան-
ցած միեւնոյն Արփիարեանը սքանչացմամբ կը
գրէր՝ միեւնոյն մահափորձի մասին՝ « Թուրքե-
րո՞ւն էր մնացեր ատանկ յանդուգն փորձ մը
ընել . եւն . . . հայ պահպանողականները որ
հայ ժողովուրդը կ'արհամարհէին, այդ օրը տե-
սան թէ Հայը ի՞նչեր կրնար նետել նոյն իսկ
Սուլթանին երեսին . . . եւն » Ուրիչ օրինակ .
Գահիրէի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան հիմ-
նարկութեան առաջին լուրը տայով « Լուսա-
բեր »-ին մէջ , Արփիարեան ամենէն թացիկ հի-
ացման, ամենէն խպրիկ խանդաղատանքի չեչ-
տերով փառաբանեց այդ Միութեան երեւուած՝
իբր փանասէ մը Հայութեան բոլոր ցաւերուն ,
ու մինչևեւ իսկ անոր անունին կցուած « բարե-

գործակոն » սխալ վերագիրը գովաբանեց, քըն-
քուշ լուսամփոփի մը նմանյնելով որ խոհեմա-
բար պիտի սքողէր այդ կենսաբեր կանթեղին
լոյսը : Երկու ամիս յետոյ՝ « Մշակ »-ին մէջ ,
միեւնոյն Արփիարեանը սկեպտիկ ու հեգնական
տողեր կը նուիրէր այդ նոյն Միութեան, « բա-
րեգործական » վերագիրը կը քննադատէր , եւ
այդ « աղայական » խմբաւորումէն մեծ բարեք
մը չէր յուսար . . . : Այս օրինակները դեռ
ցոյց կուտան կարծիքի փոփոխութիւններ գէթ
երկու ամսուան միջոցի մէջ կատարուած . կան
Արփիարեանի մօտ մտքի յեղեղումներ՝ մէկ
շաբաթուան , մէկ օրուան մէջ կատարուած .
Արփիարեան ունի յօդուածներ որոնց սկզբը եւ
վերջը իրարու արամազծօրէն հակառակ գաղա-
փարներ կը յայտնեն միեւնոյն նիւթին վրայ ,
— իրաւ է թէ միշտ արտայայտուած ոլորուն ,
ճարպիկ , հրապուրիչ ու զուարճալի ոճով մը ,
որ կարճատես ընթերցողներուն աչքին անզգալի
կը դարձնէ այդ հակասութիւնները :

Այս փոքրիկ յառաջաբանէն յետոյ , գանք
աչք մը նետելու այն երախայական — ու հա-
կասական — քննադատութեանց վրայ զոր Ար-
փիարեան բանաձեւած է Շիրակին մէջ Ռուսիա
եւ Հայերը ուսումնասիրութեանս մասին . եր-
բեք Արփիարեան այդ գերագոյն կատարելու-
թեան չէր հասուցած իր մտաւոր թեթեւու-
թիւնը որ — կը խոստովանիմ — ընութեան
հրաշալիքներէն մին ըլլալու չափ եզական առ-
տիճանի մը կը հասնի այդ մարդուն քով , — եւ
կը գարմանամ թէ ինչո՞ւ օղապարիկին հարցը
վերջնապէս լուծելու համար մասնագէտները
չեն գործածեր Արփիարեանի ուղեղային կազը՝
իբրեւ թեթեւագոյն մարմինը որ կայ աշխար-
հիս մէջ :

Ցաւալին այն է որ այդ « կազ »-ին միակ
յատկանիշը թեթեւութիւնը չէ, այլ եւ անմաք-
րութիւնը . Արփիարեանի մէջ՝ նկարագրի պա-
կասին կը միանայ — թերեւս անկից ծնւելով
— անխղճատուութիւնը , գիտակից ու չարամիտ
խեղաթիւրմանց , թունաւոր սպրդութեան
ամբողջ հոյուվը պաշարուած :

« Ռուսիա եւ Հայերը » ուսումնասիրու-
թիւնս կրնայ ունենալ իր թերութիւնները , իր
անճշգութիւնները , — զին անսխալ կարծելէ
հեռու եմ . — բայց եթէ կայ թիրութիւն մը

զոր անոր կարելի չէ վերագրել, անոր մէջ յայտնուած գաղափարներուն նորութեան պակասն է. եթէ ծանօթ բաներու կրկնութիւն մը ըլլար այդ գրուածքը, տասնհինգ-քսան յօդուածի ծնունդ չէր տար. արդ, Արփիարեան ամենայն պաղարիւնութեամբ կը յայտարարէ թէ « յօդուածագիրը իր կարգին կուգայ կրկնել կարծիք մը որ աս տաս տարի է ամենուն բերանը կը պտըտի ու կը պտըտի՝ թէ « Թուրքը Հայ ազգը ուզածին պէս կը կայծակահարէ, որովհետեւ Ռուսը իր շանթարգելը Հայուն գլխուն վիրել տնկեցուցած չէ », եւ դարձեալ « իր տեղեկատուութեանց մէջ նոր բան մը չի յայտներ, եւ նոր բան մըն ալ չի գրեւ, եւն. »

Թեթեւութեան տարապայման աստիճան մը պէտք է՝ այսպիսի անպատկառ ուրացումի մը համար. բայց « կազմին թեթեւութենէն յետոյ եթէ անոր թոյնն ալ կ'ուզէք ճանչնալ, տեսէք՝ օրինակի համար՝ սա ֆրագը, « բայց եւ այնպէս « Ռուսիա եւ Հայերը » հանրագիտակ յօդուած մըն է, ճարպիկօրէն յօրինուած, որ երբ արհեստագարդ սքօղանքէն թեթեւնայ, ներքեւի մերկոյթը աչքերուդ առջեւ պարզապէս Հայ ազգին դեմ փուռսիջ մը՝ որ եւ անբասանագիր՝ կը սեւափայլի. » ուրիշ տեղ մը, նորէն. « Հայ ազգին դէմ Պ. Չօպանեանին ամբաստանութիւնները, եթէ երբեք քիչ մը ճշմարտութեամբ ծանրանային, տարակոյս չկայ թէ հայ ազգը ջաղդոնները կոտորողները, կատարելապէս արդարացած, ձէթի պէս ջուրին երեսը պիտի Լըլէին, ըսենք՝ արիւնին երեսը. » Ամէն պարկեշտ մտքով ընթերցող որ յօդուածս կարդացած է, շատ լաւ գիտէ որ ան « հայ ազգին դէմ ամբաստանութիւն չէր, այլ « քննադատութիւն հայ պոլիտիկոսներու թաքթիքին » . իրական « հակահայ փուռսիջ »ը մէկ անգամ մը միայն երեւցած է հայ մամուլին մէջ, յօդուած մը՝ 16 տարի առաջ Պոլսոյ Մասիսին մէջ հրատարակուած, եւ որ կ'ըսէր թէ « Հայ ազգին ցեղային գլխաւոր յատկանիշն է մասնիչներ արտազբել ». այդ յօդուածին հեղինակն էր Արփիար Արփիարեան. իմ ուսումնասիրութիւնս իրեն նպատակ ունէր ապացուցանել թէ՛ իր պատմութեան մէկ որոշ շրջանին՝ հայ ազգին քաղաքական գործիչներուն մեծ մասը (եւ ոչ թէ ամբողջ հայ ժողովուրդը ինքն իսկ՝ որուն բնազդական ճշդա-

տեսութիւնը մասնանիջ ըրած եմ) սխալ թաքթիքի մը հետեւած է. ազգասիրական անհրաժեշտ պարտականութիւն է՝ ցոյց տալ ժողովրդի վարիչներուն քաղաքագիտական սխալը, երբ համոզուած ես որ սխալ կայ. համոզուած ըլլալով սխալին, ծածկել զայն, չբմեղացնել, շոյել ժողովրդին ինքնասիրութիւնը, եւ խորել զայն, ահա ինչ որ պիտի ըլլար վարմունք մը իրականօրէն « սեւափայլ » : Իսկ թէ իմ այդ կարծեցեալ ամբաստանութիւնս կարող է արդարացնել հայ ժողովուրդը ջարդողները, Արփիարեանին ամբողջ վրտածութիւնը պէտք է այսպիսի բան մը ըսելու համար. յօդուածիս յիսուներկու էջերուն մէջ տող մը չկայ որ այդպիսի դատաստան մը թելադրէ. հայ վարիչներուն սխալ թաքթիքը ո՛չ Թուրքերուն գազանութիւնը կ'արդարացնէ, ո՛չ ուսս զիւսնագիտութեան ապուշութիւնը եւ անարտութիւնը (եւ ասիկա որոշապէս ըսած եւ ապացուցած եմ ուսումնասիրութեանս մէջ) :

Արփիարեան չի շատանար հակահայ փուռսիջներ վերագրելով ինծի, այլ եւ կ'երեւակայէ թէ « սուտեր գլորելու » կարող եմ այդ սեւափայլ դատը պաշտպանելու համար. Վարդ Պատրիքօֆ Պոլսոյ 890ի ցոյցէն ամիս մը հտըը եկած է եղիք Պոլիս եւ հետեւաբար չէ մասնակցած այդ ցոյցին. ես սովորութիւն չունիմ սուտ խօսելու, ատիկա Արփիարեանի ամենէն փայլուն մասնագիտութիւններէն մէկն է, եւ փափաք չունիմ իր դափնինները ճակտէն խլելու : Եթէ Վարդ Պատրիքօֆի Պոլիս հասնելու թուականն իրօք այն է զոր կուտայ Արփիարեան, կ'ընդունիմ որ սխալ տեղեկութիւն մը գործածած եմ յօդուածիս այդ կոտորին մէջ, սխալ՝ որուն զիս մղեց « Բուրիէ Էօրոփէէն »ի 1905 նոյ. 24ի թիւին մէջ Պ. Տ. Էլմասեանի նամակը, ուր Պ. Պատրիքօֆ ներկայացուած էր իբր « կազմակերպիչը Բում-Գափուբ ցոյցին » : Եթէ իրօք սխալ կայ այդ մանրամասնութեան մէջ, — եւ անկարելի չէ, — այդ սխալը չի ցրեր սակայն իմ թեղիս հիմնական գաղափարին ապացուցումը. կարեւորը՝ Հնչակեան ծրագիրն է, եւ Հնչակեան վարիչ Վարդ Պատրիքօֆին՝ Հնչակեան առաջին ցոյցէն անմիջապէս յետոյ ըրած յայտարարութիւնն է, եւ ոչ թէ Պատրիքօֆի այդ ցոյցին կատարման միջոցին Պոլիս գտնուած ըլլալը կամ չըլլալը :

Նոյն նիւթին շուրջ դարձող ուրիշ յօդուածի մը մէջ, Արփիարեան հետեւեալ արհամարհական կարծիքը կը ցուցնէ հայկական « դիմումներու » մասին . « Պետութիւնները մեր պաղատագին կամ սպառնալից դիմումներուն կարօտ չեն իրենց ընելիքը որոշելու համար : Աւելորդ է բոլոր իր խօսակցիս այն պարագային համար չէ երբ զէնքի զօրութեամբ կրնանք լրջօրէն դժուարին կացութիւն մը ստեղծել, ինչպէս Ձէյթունի ապստամբութիւնը ստեղծեց : . . . Եւրոպան մենէ խելք սորվելու ցանկացող չէ : Եթէ ոռւս եւ թուրք պատերազմէն ի վեր ի նպատակ Հայոց եղած եւրոպական միջամտութիւնները մտքերնիս բերենք, առանց դժուարութեան կը տեսնենք որ մեր կարծիքները, փափաքները, պահանջումները իմանալու կամ նկատողութեան անելու պէտք մը տեսնուած չէ : . . . Երբ Սան-Սթէֆանոյի դաշնագիրը 16րդ յօդուածով մը Ռուսացմէ Հայաստանի գրաւումը կ'ապահովէր, բարեկարգութեան խորհրդով, չհարցուեցաւ Ներսէս Պատրիարքին թէ Հայոց ի՛նչ տեսակ բարեկարգութիւն հաճելի է : . . . Պերլինի 61րդ յօդուածէն, Ներսէս Պատրիարքին ներկայացուցիչները անտեղեակ կը մնային : Հետեւին տարած ծրագրի ներքինն լրաց ուշադրութիւն դարձնող մը չըզտնուեցաւ : Վեց պետութիւնները 1880 Սեպտեմբեր 7ին երբ Պոլիս Հայաստանի բարեկարգութեանց ծրագիր մը ներկայացուցին Իրան, նախապէս Ներսէս Պատրիարքին բան մը չհարցուցին . իրենք գրեցին, իրենք աւրեցին : Երեք պետութեանց զեպականները երբ բարեկարգութեանց 1895 Մայիս 11ի ծրագիրը կը պատրաստէին, Հայոց Պատրիարքին, որ Իզմիրլեանն էր, բան մը հարցնելու պէտքը չտեսան : »

« Դիմում » ներքը ապարդիւն հռչակելը բաւական չհամարելով, Արփիարեան զանոնք աղետաբեր ալ կը նկատէ : « Վերջին ութ տասը տարուան մէջ Հայաստանի ժողովուրդը ընթացիկ, սովորական աղէտներէն դուրս, նաեւ՝ աստիճանաբար մասնաւոր կոտորածներ կրեց եւ թալաններու ենթարկուեցաւ : Այդ պատահարներուն թուականները եթէ քննենք, պիտի տեսնենք թէ անոնք ընդհանրապէս Եւրոպայի կամ Ամերիկայի դիմումի թուականներուն կը զուգարկային : Օրինակ . « առէք ձեզի Ռուզվէլթի

դիմում » կ'ըսէ Սուլթանը, գրաւելով Կիլիկիոյ մեր եկեղեցապատկան հողերը : »

Այս բոլորը սխալ է եւ տղայական : Հոս չեմ յամենար յիշեցնելու թէ միեւնոյն Արփիարեանը անցեալին մէջ տասն անգամ ջատագոված է դիմումներու, դիւանագիտական գործունէութեան կարեւորութիւնը, եւ՝ զաւով հայ տարրին արեւելեան հարցերու մէջ ունեցած նշանակութեան՝ դեռ 9—10 ամիս առաջ ինքն իսկ Հայաստանը Մոնթէնեկրօյի կը բաղդատէր, որ, թէպէտ փոքր, բայց ըսել տուած է Ալեքսանտր Գլին . « Եւրոպայի մէջ մէ՛կ դաշնակից մը ունիմ, Մոնթէնեկրօն » : Պիտի դիտել տամ որ դիմումները կարելի չէ կոտորածներու կամ թալաններու ուղղակի շարժառիթ նկատել, եւ թէ անոնք՝ պատեհ ըրպէն՝ ու լաւ ձեւով կատարուած՝ կրնան մերթ արդիւնաւոր ըլլալ՝ որոշ չափով մը : Ամենատեղ կատակ մըն է ըսել թէ՛ Ռուզվէլթի եղած դիմումին արդիւնքն է Կիլիկիոյ եկեղեցապատկան կալուածներու գրաւումը . այդ երկու դէպքերը կապ չունին իրարու հետ . Ռուզվէլթի դիմումը մնաց ապարդիւն . բայց Կիլիկիոյ կալուածներուն հարցը շատոնց ի վեր գոյութիւն ունէր, այդ կալուածը պիտի գրաւուէր՝ եթէ Ռուզվէլթի դիմումն եղած չըլլար ալ : Ընդհակառակն պատահած են դէպքեր, ուր դիմումները առաջքն առած են աղէտներու . օրինակի համար, 1901ին, Այնթապի սպառնացող կոտորածը տեղի չունեցաւ՝ դիմումներու շնորհիւ որոնց հետեւեալըով Փրանսական նաւատորմ մը գնաց Մերսին . անկից առաջ, նմանօրինակ դիմում մը՝ նոյնքան յողորմ արդիւնք ունեցած էր Հաճընի համար : Ասիկա այնչափ ճիշդ է որ ինքն իսկ Արփիարեան միեւնոյն յօդուածին մէկ ուրիշ մասին մէջ կ'աւելցնէ՝ « Բողոքարկութիւնները, դիմումները իրենց օգուտները կ'ունենան մասնաւոր պարագաներու մէջ : Այսպէս, երբ անցեալ Յուլիս 21ի մահափորձէն յետոյ, կոտորածներու վախերը տիրեցին, տարակոյս չկայ թէ յուզումը իրարանցումը մեծապէս նպաստեցին ահեղ աղետաւորութեանց առջեւ առնելու : » Փակագծի մէջ ըսեմ, սակայն, որ եթէ մահափորձէն յետոյ ջարդ տեղի չունեցաւ, Արփիարեանի արձակած պատաւ կնկան վախատուէր չէր ատոր պատճառը, այլ Անգլիոյ եւ Ֆրանսայի կառա-

վարութեանց՝ որոնց մօտ դիմումներ եղան՝ ձեռք առած լուրջ միջոցները : Կոտորածներ արգիւելու համար եղած դիմումները ուրեմն, եթէ շատ անգամ ապարդիւն կրնան մնալ, — ս՞վ ատոր հակառակը կ'ըսէ, — կրնան նաեւ երբեմն արդիւնաւոր ըլլալ, իսկ աղիտարեր երբեք : Կեանւարար պարտք մըն է այդպիսի դիմումներ ընել միշտ : Գալով « դիւանագիտական գործունէութեան », այսինքն Հայոց ազգային դատն իսկ արմատապէս լուծելու ձգտող դիմումներու, անոնք ալ աւելի արդիւնաւոր կրնան ըլլալ եւ եղած են : Քան ինչ որ կը կարծէ Արփիարեան : Պարապ խօսք է թէ Եւրոպան մինէ պէտք չունի խելք սորվելու : Եւրոպացի ամենէն մեծ քաղաքագէտն իսկ ուշադրութիւն կ'ընծայէ ամենախիստարհ ազգի մը ներկայացուցչին թելադրութեանց, երբ այդ ներկայացուցիչը գիտէ ուշիմ, բարեղէպ կերպով ներկայացնել հարցը, ազգել իր անձին ու իմացականութեան հրապոյրով, հաղորդել նոր, անտիպ տեղեկութիւններ, ցոյց տալ ինչ որ իր պաշտպանած դատին մէջ կայ նպաստաւոր շահերուն այն մեծ պետութեան որուն կը դիմէ : Մեծն Պետրոս մտիկ ըրաւ Իսրայէլ Օրին, եւ շատ բան սորվեցաւ անկից, եւ այդ հանդիպումէն յետոյ է որ գծեց իր արեւելեան քաղաքականութիւնը : Մեծ Դուքս Նիքօլան մտիկ ըրաւ Ներսէս Պատրիարքը, եւ Ներսէս Պատրիարքի այցելութեան ուղղակի արդիւնքն է Սան Սթէֆանօյի դաշնագրին 16րդ յօդուածը : Անշուշտ, Մեծն Պետրոս, ոչ ալ Մեծ Դուքս Նիքօլա տառապէս չընդգրկեցին իրենց եղած թելադրութիւնը, անոր մէջէն առին ինչ որ իրենց շահուն համաձայն էր, եւ շատ քնական է այդ բայց « դիմումը » ունեցաւ իր արդիւնքը : շահաւոր Ռուսին բայց եւ շահաւոր Հայուն, եւ որ՝ իտէալական արդիւնքը չըլլալուն համար՝ արդիւնք ըլլալէ չի դադրիր : Ընչ է որ 1880ին եւ 1895ին շարենորոգմանց ծրագիր պատրաստող դեսպանները ծրարին պատճէնը Հայոց Պատրիարքին հաւանութեանը չեն թարկեցին, բայց այդ երկու պարագային ալ՝ ծրագիրը ուղղակի հետեւանքն էր Հայոց գործունէութեանը, 1880ին՝ Ներսէս Պատրիարքի դիմումներուն, 1895ին՝ յեղափոխական շարժման, Իզմիրլեան Պատրիարքի դիմումներուն, Եւրոպայի Հայոց դիւանագիտական ճիգերուն :

Այդ բոլոր իրողութիւնները ուրեմն, մեր գրչութուն վրայէն, առանց մեր ո եւ է մասնակցութեան կատարուած բաներ չեն, այլ ուղղակի արդիւնք հայ ճիգին : Իսկ Պերլինի Վեհաժողովին ատեն, հայ պատգամաւորները անմասն չեն գտնուած 61րդ յօդուածի խմբադրութեան մէջ, եւ եթէ չեն կրցած ձեռք ձգել որ ան ունենար աւելի զրական, գործնական նպատակներ մը քան ինչ որ ունի, գէթ նպաստած են — ինչ որ Պ. Չերազ ապացուցուց — յաւելմանն անոր վերջին պարբերութեան՝ առանց որուն ան բուրրովին օգային յօդուած մը պիտի ըլլար :

Ուսումնասիրութեանս նուիրուած երրորդ յօդուածի մը մէջ՝ որ « Ամուճան » սիտղոսը կը կրէ, 16րդ յօդուածին 61րդի փոխարկման եւ ատոր յարակից հարցերու մասին կը գտնուին տողեր ուր թեթեւամտութիւնն ու շարժմանութիւնը տեղի կուտան ամենէն ողբալի տկարամտութեան : Արփիարեան ունի շատ թերութիւններ, բայց կարելի չէ ըսել թէ ապուշ է սակայն՝ թերեւս մտաւոր բոստական թրութեամբ մը՝ իր յօդուածին այդ կտորին մէջ երեւան բերած է ցաւալի — եւ զարմանալի — թուլացում մը իմացականութեան : Ահա ինչ որ կը գրէ . « Պ. ար Մուր . . . 1904ին « Ռուսի տէ տէօ Մօնտ » ի մէջ իր յիշատակները նրատարակեց, որոնք կը հաստատեն թէ Սան-Սթէֆանօյի դաշնագրին ջնջմանը համար ոչ Անգլիա ոչ ուրիշ ո եւ է պետութիւն ո եւ է միջամտութիւն մը ըրած է » : Այստարհիս ո եւ է Մուրին չի կոնար ապացուցանել այսպիսի բան մը, այն պարզ պատճառով որ հանրածանօթ իրողութիւն մըն է՝ Սան-Սթէֆանօյի դաշնագրին « ջնջուած » ըլլալը : Պերլինի Վեհաժողովին գումարումը, կատարուած՝ Անգլիոյ նախաձեռնութեամբ՝ իրեն ուրիշ նպատակ չունէր բայց եթէ ջնջել Սան-Սթէֆանօյի դաշնագիրը եւ անոր տեղ դնել նոր, փոփոխուած, արեւմտեան պետութեանց (եւ մասնաւորապէս Անգլիոյ) շահերուն համաձայն՝ դաշնագիր մը : Բնականաբար, որքան ալ զօրեղ ըլլար, Անգլիա չէր կրնար ամբողջապէս չքացնել ինչ որ Ռուսիա վաստկած էր իր յաղթութեամբ եւ բանաձեւած Սան-Սթէֆանօյի դաշնագրով : փոփոխեց կամ ջնջեց անկից՝ ինչքան որ կրցաւ : Գալով մասնաւորապէս 16րդ յօդուածին, հաւանական է որ՝ ինչպէս Պ. Չերազ

յայտնեց՝ եթէ Անգլիոյ մնար, բողոքովին կը կը ջնջէր զայն. եթէ չյաջողեցաւ ջնջել, գէթ իր բոլոր կրօնացիներէն ըրաւ հանելու համար անկից ինչ որ անոր գործադրութեան լուրջ երայխիք մը կը կազմէր, այսինքն յօգուածին առաջին պարբերութիւնը՝ որուն համեմատ ոռուս բանակը Հայաստանէն պիտի ելլէր՝ բարենորոգմանց գործադրութեան յետոյ: Տարապայման տղայամտութիւն պէտք է կարծելու համար՝ ինչպէս կ'ընէ Արփիարեան՝ թէ Ռուսիա, պարզ վեհանաճնութեամբ, եւ յօժար սրտով՝ որոշեց իր բանակը քաշել թրքական Հայաստանէն. « Այսպէս, կ'աւելցնէ Պ. Արփիարեան, կը տեսնենք թէ, Սան-Սթէֆանոյի դաշնագրին ասիական թուրքիոյ հողերուն վերաբերեալ խնդիրները վեհաժողովին մէջ բնաւ խնդրի առարկայ չեն եղած »: Չեմ գիտեր ո՛ր « կը տեսնէ » Արփիարեան այսպիսի անհեթեթ հաստատում մը արտօնող » եւ է փաստ. յայտնի է որ վեհաժողովին մէջ 16րդ յօդուածը երկու անգամ խնդրոյ նիւթ եղած է(1). Անգլիա պնդած է ջնջել առաջին Ֆրազը. Ռուսիա ջանացած է զայն պահպանել. Պրզմարք ինքն իսկ միջամտած է՝ եւ գիտել տուած է թէ առանց այդպիսի պայմանի մը՝ բարենորոգմանց գործադրութիւնը իրականալի չի նկատեր. վե-ջ ի վերջոյ այդ Ֆրազը ջնջուած է, եւ 61րդ յօդ-ի վերջին Ֆրազը պրուած է որ իրաւունք կուտայ եւրոպական վեց պետութեանց՝ հսկել բարենորոգմանց գործադրութեան վրայ: Պ. տը Մուխ, այն կտորին մէջ զոր իր թէզին իբր ապացոյց կը յիշէ Արփիարեան, ոչ միայն չ'ըսեր ինչ որ Արփիարեան կը կարծէ հոն տեսնել, այլ ճիշդ հակառակը. « . . . Ինչ որ ալ ըլլայ, Կորչաքօֆ իշխանը, իր տիրոջը արժանապատուութեանը նախանձախնդիր, պատուոյ կէտ մը համարեց լիալիր գումարման մէջ նախաձեռնութիւնը ունենալ այն զոհողութեանցը որոնց զիջանիչ ՊԱՐՏԱԻՈՐՈՒՄ էՐ: Տեսարանը, նախապատասխան ըլլար թէ ինքնաբերական, մեծապէս վեհատեփն ներկայացաւ. . . Ժողովը իր ինքնութիւնը յայտնեց, եւ այդ վախճանը միայն եւ միմիայն՝ Չարին մեծանաճնութեանը պարտական ըլլալուն

(1) Այդ մասին յատուկ յօդուածով պիտի խօսիմ ուրիշ անգամ:

համոզուած կամ ոչ, Կորչաքօֆ իշխանը չնորհաւորեց եւ իր վաւերացումը անմիջապէս տրուաւ: »

Կորչաքօֆ իշխանին հրապարակային յայտարարութիւնը թատերական արտայայտութիւնն էր այն համաձայնութեան որուն յանգած էին, Համաժողովին ընդհանուր նիստերուն մէջ տեղի ունեցած վէճերէ յետոյ՝ Անգլիոյ եւ Ռուսիոյ լիազօրները՝ մասնաւոր բանակցութիւններով. Անգլիա այլ եւս չէր կրնար « պնդել », որովհետեւ ամէն ինչ որ կրնար խել Ռուսիոյ շահած արդիւնքներէն՝ խլած էր, եւ Ռուսիա ոչ մէկ մեծանաճնութիւն չունէր ցոյց տալու, քանի որ կ'ընդունէր զոհողութիւններ զոր « պարտաւորուած էր » (տը Մուխի բառերով) ընդունելու:

Կարգացածը չհասկնալու միեւնոյն անկարողութիւնն է որ ցոյց կուտայ Արփիարեան՝ հետեւեալ ծիծաղելի հեզնութեան տողերը նուիրելով ուսումնասիրութեանս մէկ կտորին. « Պ. Չօպանեան զաւելտականին վերնագոյն բնագաւառները կը սաւառնի երբ Իտալիոյ միութեան յաջողմանը համար Քալուրին արտաքին քաղաքականութիւնը մեզի մտատիպար կ'աշաջարկէ, եւ մեզի դարձեալ կը մեղադրէ որ այդ իմաստուն քաղաքականութիւնը մերինը չըրինք »: Արփիարեան զաւելտական կը գտնէ իմ այդ նկատողութիւնս, որովհետեւ « այն ժամանակուան Իտալիոյ եւ մեր հիմակուան Հայաստանին միջեւ բաղդատութեան եզր մը կարելի չէ մտքէ անցընել », Իտալիան իր ծրագրին յաջողման համար ունենալով շատ աւելի նպաստաւոր եւ դրական պայմաններ քան Հայաստանը: Արդ, ես ե՛րբ եմ ըսեր որ Հայերը պէտք էր կապկորէն ընդօրինակեին Քալուրի ծրագիրը. ես ըսած եմ միայն որ Հայ ազգային դատին վարիչները ունենալու էին այն « ճարպիկ », ճկուն, օտար ուժերը իր դատին գործածել գիտցող թաքթիքը, զոր ցոյց տուաւ Քալուրի Իտալիոյ վերականգման գործին մէջ. ճիշդ որովհետեւ Հայերը շատ նուազ ամուր ու նպաստաւոր պայմաններ ունին քան ինչ որ ունէին Իտալացիները, պարտաւոր են Քալուրեան ճարտար ու խորամանկ « քաղաքականութիւնը » իբր սկզբունք, իբր ուղեգիծ ընդգրկել:

Այսքանը կը բաւէ. կարծեմ, «պոլիտիկոս» Արփիարեանին արժէքը ցոյց տալու համար ։ Կարելի է իր երեք յօդուածներուն ամէն մէկ ֆրագը այսպիսի վերլուծման մը ենթարկել, արդիւնքը միեւնոյնը պիտի ըլլայ ։ Աւելորդ է այդ ներդրումները յանձն առնել ։ Անցնինք «էսթետիկոս» Արփիարեանին ։

(Շարունակելի) Ա. 209ԱՆՆԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Ի ՓԱՐԻՉ

Փարիզի Հայկական Միութեան նախաձեռնութեամբ եւ ջանքերովը կազմակերպուած հայ երաժշտական նուագահանդէս մը տեղի ունեցաւ Դեկտեմբեր 1ի շաբաթ իրիկունը՝ Salle des Agriculteursի մէջ։ Երեկոյթը փայլուն յաջողութիւն ունեցաւ շնորհիւ մեծամունտ երաժիշտ Կոմիտաս վարդապետին թանկագին աջակցութեան ։ Կոմիտաս վարդապետ, որուն անունը ծանօթ է Անահիտի ընթերցողներուն այն յօդուածով զոր այս էջերուն մէջ նուիրած ենք իր տաղանդաւոր գործունէութեան, հաճեցաւ՝ հայկական Միութեան խնդրանքով՝ կազմել երեկոյթին յայտագիրը՝ իր ձայնագրած կտորներով, եւ ղեկավարեց խմբերգը ։

Ընտրուած կտորներն էին, ժողովրդական երաժշտութեան համար, Սիփանայ Բայերը, Հով արեփ, Արագեսազ սարև անկեղ ա, Մեր դրանը ինկի ծառ, Անհրեւ եկաւ շաղաչեմ, Չինար եւ կեռանայ մի, Արի արի քեւսուղ, Թօջ արա, եգօ ջաև, Ծիրանի ծառ, Իմ չինարի ետը, Դարուն ա ձիւն ա արեղ, Կոռնկ, Լուսնակն ակուշ, Անկեղ ա ձիւն չի գալի, Հարբաւն, Քեղիք, ցոյր իմ ետը, Մարտի վրով զևայ, Էս գիշեր յուսը սեսայ, Օրօր (Ակնայ), Չիգ սու Բաշի ։ Եկեղեցական երաժշտութեան համար՝ Հայր մեր, Տիրանայր, Տեր ոչորունա, Յիշեցուք, Խորհուրդ խորին, Հալիկ մի պայծառ սեսի, Ո՛վ զարմանալի, Գեւ մի զարհուրիք, Այսօր ձայնն հայրական ։

Ասանդմէ, « Հով արեփ », « Չինար ես », « Տիրամայր », « Հալիկ », « Տէր ոչորունա », « Գարուն ա ձիւն ա արեղ », « Կոռնկ », « Իմ չինարի ետը », « Ծիրանի ծառ », « Լուսնակն անուշ », « մեներգ, (դաշնակի կամ ոմանք խմբի ընկերակցութեամբ) », « Հարբաւն » զուգերգը, եւ « Ալագեսազ սարն ամպիլ ա » ու « Քեղիք, ցոյլեր », միաձայն երգուած, գաղափար տուին փարիզեան հասարակութեան՝ հայ երաժշտութեան մասին այնպէս ինչպէս հայ ժողովուրդը զայն յղացած է եւ կ'երգէ, իսկ միւս կտորները չորս ձայնի համար դաշնակուած, եւ որոնց մէջ

եղանակին ինքնութիւնը միշտ անեղծ կը մնար սակայն, գաղափար կուտային թէ՛ հայ երաժշտութեան եւ թէ՛ Կոմիտաս վարդապետի անձնական գեղեցիկ տաղանդին վրայ։ Օր. Մարգարիտ Բարայեան, ՊՊ. Մուղունեան եւ Շահ-Մուրատեան (1) երգեցին, զմայելի կերպով, մեներգները, եւ Օր, Շուշիկ Բարայեան՝ դաշնակի վրայ նուագեց, ճարտարօրէն, Մշոյ շորորը եւ Երեւանի բոլոր-պարերու եղանակներ։ Կոմիտաս վարդապետ ինքն իսկ երգեց, եւ ինչպէս ինքը միայն գիտէ երգել ։ Տիրանայրը եւ Հալիկը Հասարակութիւնը բուն ծափերով ընդունեցաւ այդ բոլոր կտորները եւ անոնցմէ 5—6 հատը կրկնել տուաւ ։ Խմբերգները երգուեցան խմբի մը կողմէ որ կազմուած էր Լամուրէօի եւ Քոլոնի նուագահանդէսներուն մասնակցող երգիչներէ ։

Պ. Զօպանեան արտասանեց բանաստեղծութիւն մը հայ երաժշտութեան եւ բանաստեղծութեան մասին ։

Սրահը լեցուն էր խուռն բազմութեամբ, որուն կէսէն աւելին՝ Եւրոպացիներ էին ։ Ներկայից մէջ կային ծանօթ անձնաւորութիւններ, ինչպէս Օփերայի տնօրէնը՝ Կայետ, Պուրկօ-Տիւքուարէ յայտնի երաժիշտը, Տիւրքմուա՝ Գոնսերվատարի ուսուցիչ, Մորիս Պուշոր բանաստեղծը, Տըլարիւ-Մարտիւս քերթողուհին, Օրօր թերթին աշխատակիցներէն՝ ՊՊ. փոլ կիօ եւ Փոլ Սուշոն, Փիէր Քիլեար, Լուի Տիւմիւր, բազմաթիւ ներկայացուցիչներ ֆրանսական եւ օտար թերթերու, Փարիզի ազնուական դասակարգէն՝ իշխանուհի աը Փոլինեաք, իշխանուհի Սիսթրիա, գերակուս տ'Իւմիէր, Մէյէ, Մաքլեր, եւն. ևւն ։

Այս նուագահանդէսը խոր հաճոյք պատճառեց ներկայ եղող Հայերուն եւ անմոռանալի տպաւորութիւն մը թողուց Եւրոպացիներուն վրայ։ Մեր յաջորդ թիւով՝ մանրամասնութիւնները ։

ՅՕԴՈՒԱԾ ՄԸ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ

« Մերքիւր աը Ֆրանս » ամսագիրն իր Նոյեմբ. 15ի թիւին մէջ հրատարակեց Պ. Զօպանեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութիւնը Խրիմեան Հայրիկի ազգային ու գրական գործունէութեան նուիրուած ։ Այս յօդուածը զբոլորուած էր տարի մը առաջ ։

(1) ՊՊ. Մուղունեան եւ Շահ-Մուրատեան վերջերս ընդունուեցան իրր աշակերտ՝ Փարիզի Գոնսերվատուարը. 260 հոգիի մէջէն որ ներկայացած էին մուտքի մրցումին, 16 հոգի միայն ընդունուեցան. որոնց երկուքը՝ Հայ ։

Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.

ԴՈՎՏ. ՅՈՎԸ. ԱՐԹԻՆԵԱՆ
ՀԱՆԿԻՆ ՕԳՆԱԿԱՆ ՆԱՆՍԻ ԶԻՒՆԴԱՆՈՅԱՑ

Տ Ո Ւ Ն Կ Ե Ր Ը

ԵՒ ԱՆՈՆՑ

Հայերէն անուաները

DES PLANTES

et de leurs noms arméniens

par le Dr Joh. ARTIGNAN

Illustrations par M. Eugène DIEBOLD, dessinateur

Բազմաթիւ պատկերներով ճոխացած գրքով
մըն է : Գինն է՝ 1, Ծր. 25 սնր.

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով .

M. le Dr. ARTIGNAN

10, Cours Léopold

NANCY

ՀՈՅՍ ՏԵՍՍԻ

LES TROUVÈRES ARMÉNIENS

Traduction française

AVEC UNE INTRODUCTION

par

ARCHAG TCHOBANIAN

Գինն է 3 ֆր. 50

Գնել ուղղորդները պէտք է դիմեն՝

Librairie du Mercure de France

26, Rue de Condé, Paris

Հայերէն, ֆրանսերէն եւ թուրքերէն լեզուներու հմուտ երիտասարդ մը որ ուսուցչական վկայական ունի, պաշտօն կ'ուզէ ըստանձնել արտասահմանի դպրոցներու մէջ եւ կամ վաճառականի մը մօտ իբր գրագիր եւ թարգմանիչ: Դիմել տպարանիս հասցէին :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ « ԱՆԱՀԻՏ »

- Թիւ 1. — Նահապետ Բուշակի Դիւանը, սիրոյ երգեր, խրատական եւ այլարանական երգեր, պանդուխտի երգեր. Բնական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Ա. Զօպանեան. 3. ֆր.
- Թիւ 2 — Մկրտիչ Պեշիկբաշեանի Քերթաւածներն ու ճառերը, ծանօթագրութիւններով հրատարակեց Ա. Զօպանեան. 4 ֆր. 50

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԴՐՔԻՐ

LES MASSACRES D'ARMENIE, témoignage des victimes; recueil de lettres, traduites en français par A. TCHOBANIAN: préface de GEORGES CLEMENCEAU, Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

L'ARMENIE, SON HISTOIRE, SA LITTÉRATURE, SON RÔLE EN ORIENT, par A. TCHOBANIAN, avec une introduction d'ANATOLE FRANCE. Librairie du Mercure de France, 1 ֆր.

ZEITOUN, DEPUIS LES ORIGINES JUSQU'À LA GRANDE INSURRECTION DE 1895 par AGHASSI: Traduction française d'A. TCHOBANIAN: préface de VICTOR BERARD Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

POÈMES ARMÉNIENS ANCIENS et MODERNES, traduits en français par A. TCHOBANIAN, et précédés d'une étude de GABRIEL MOUREY sur la Poésie et l'Art arméniens. 2 ֆր.

CHANTS POPULAIRES ARMÉNIENS, traduction française avec une introduction par A. TCHOBANIAN; préface de PAUL ADAM. Librairie Paul Ollendorff. 3 ֆր. 50

Ouvrage couronné par l'Académie Française

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

ԱՆԱՀԻՏԵ կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար (Ամերիկա), 2 ռուպլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 ռուպլի (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագրին զրկել հետեւեալ հասցէին ,

A. TCHÖBANIAN

17, Rue La Bruyère

Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Բազու	Տիկին Մարի Սունդուկեանց
Մեծ Ղարա-Քիլիսա	Պարոն Գրիգոր Բալասանեան
Պարուժ	» Մամաջանեան
Ռուսնուզ	» Գառնիկ Մաղմանեան
Գահիրէ	» Միհրան Արզարեան
Ֆիլիպէ	» Թազուր Հինդեան
Թեհրան	» Լեւոն Բարայեանց (Տեսուչ Թեհրանի Հայոց երկսեռ դպրոցներուն)
Դաւրիզ	» Վ. Բժշկեան
Ռոսկերն	» Տ. Մսաճեան
Իսր Բեմպրին	» Գարրիէլ Մուշէղեան
Իսր Ռօքրքաուն	» Կ. Մալխասեան
Սէնթրլ Ծօլս	» Նշան Մինասեան
Չիւսիօ	» Ս. Մուրատեան
Նեոսէ	» Յ. Արողեան
Ռսքր	» Մինաս Գարրիէլեան
Ֆրէզնօ	» Գ. Նալպանտեան
Նիւ Պրիթչն	» Ս. Սաչաքլեան
Փրովիսէն	» Աւագ Կարապետեան
Նիւ Եոթ	» Եղիա Գուղուճեան
Բոսթանցա	» Արտաշէս Ճիգմէճեան